


*Alpen*

891.99

U-82

U.S.

24





21 FEB 2013

21300

ԼՈՒՍՆԻ ՇՈՂԵՐՈՎ

1

— Աչքդ լույս, Գուրգեն, մեզ մոտ մի ուսանուհի  
յե գալու Ադրբեջանից, — ասաց խորհանտեսութեան վա-  
րիչն իր մոտ կանգնած պրակտիկանս ուսանողին, ցույց  
տալով նոր ստացած նամակը. — Կարծում եմ քո գիտա-  
կան հետազոտութիւններից ավելի հետաքրքիր զբաղ-  
մունք կունենաս...

— Չուր ես կարծում, վոր մի ուսանուհու պատճա-  
ռով ամեն ինչ կմոռանամ, — ասաց ուսանողը վճռական  
տոնով:

— Կասկածում եմ... ասա տեսնեմ, յեթե այդ ո-  
րիորդը դա, ժպտա յերեսիդ, չե՞ս տարվիլ վոսկե բո-  
պեներով, չե՞ս դավաճանիլ գիտութեանդ:

— Ընդհակառակը, յես նրան ել կլծեմ աշխա-  
տանքի և խտապահանջ կլինեմ...

— Յերիտասարդութիւնն ավելի լուրջ ե ձեանում,  
քան ե իսկապես...

— Բայց կատակ ես անո՞ւմ, թե՞ ճիշտ գալու յե:

— Հը՛, արդեն հետաքրքրվեցի՞ր, — ասաց դյու-  
ղամտեսը, թեք նայելով ակնոցների տակից ու ժպտա-  
լով իր դեմքի կնճիռներով. — Բայց մենք ել վոչինչ չենք  
տսիլ. — պետք ե տեղ թողնել յերազելու համար...

— Բուրժուական ումանտիկ յերազները ձեր սե-  
րընդին են պատկանում. մենք նայում ենք կնոջն ա-  
ռանց մշուշի, առանց քողի...

— Ելի ինձ բուրժուական աշխարհն ուղարկեցի՞ր.  
ուրեմն, քո ասելով, յես ել փրկութիւն չունե՞մ անց-  
յալից:

— Դու թեպետ անցել ես հեղափոխական ուղիով,



1736  
39

Պատ. խմբ. Յե. Զարեհ  
Տեխ. խմբ. Գ. Զեյնաճ  
Սրբագրիչներ՝ Ո. Գաթարջյան յեղ Ա. Լալայան  
Համձեմված ե արտադրության 1 Իսկիսի 33 ք.  
Անորագրված ե Տպագրվելու 31 Սկստոսի 93 ք.  
Պետերատր Տպարան Գլավխու № 8161 (բ) Հրատ. 2500,  
Պատվեր № 1345, արժամ 3000

բայց ահամա կոշիկներին հետ բերել ես անցյալի փոշին:

— Հե՛յ գիշի անցյալի հերոսներ, մի դարթե՛ք, տեսեք, ինչպե՞ս ե վորակում ձեզ ընկեր Գուրգենը...

Հարցից չեզվում ես, ընկեր Միքայել—խոսքը ու՛մանտիկ տրամադրութիւնների մասին ե. ո՞վ ե ուրանում, վոր անցյալում պայքարել են հերոսաբար:

— Այո, պայքարել են, տանջվել բանտերում, տապալել հին կարգերը, վորպեսզի հետո Գուրգենիկները նստեն պատրաստի սեզանի շուրջն ու մեզ ել ջննադատեն:

— Ելի ձեր մեջ խոսեց անցյալի ինքնասիրութիւնը. յես, ի հարկե, բարձր եմ գնահատում անցյալի պայքարը, բայց մի՞թե մեր սերնդի վրա պակաս ծանրութիւն ե դրած:

— Ուզում ես ասել, թե դուք լարված աշխատանքի մե՞ջ եք—յես այդ անտես չեմ անում, բայց կա մի բան, վոր հաճախ մոռանում ես, վոր զինվորը ճանաչվում ե կովից հետո...

— Ի՞նչ խիստ դատապարտութիւն... ուրեմն, քո ասելով, մեզ փրկութիւն չկա՞, մինչև չանցնենք հերոսութեան կամուրջով:

— Միայն փոթորիկի ժամին ե վորոչվում, թե ո՞վ ե հերոսը, ո՞վ ե պատրաստ ճակատ-ճակատի յերնելու, և ո՞վ ե պատրաստ քսան ու չորս ժամում ուրանալու ամեն ինչ... Դուք, նորերդ, — մեծ բանաստեղծի ասելով, — գիտեք թե ի՞նչ եք, բայց չգիտեք, թե ի՞նչ եք լինելու...

— Բայց չե՞ վոր խոսքն ընթանում ե գործի հետ. ուրեմն ի՞նչ ե նշանակում քո այդ անողոք «փորձութեան ժամը»:

— Ձեր աշխատանքը մոտեցում ե միայն, բայց վոչ չիակատար հապուցում... յերբ Բիջնադարյան ասպետը յերգում եր տալիս իր ուխտին, նա գիտեր, վոր մի որ պիտի գնա մինչև վերջը—մինչև անձնազոհութիւն...

— Անձնազոհութիւն... ահա թե ինչ. — կներես ընկեր Միքայել, բայց դու անցյալ պայքարի մեթոդներ

ըով ես մոտենում նոր կյանքին. այժմ մեր առաջ ծագավում ե աշխատանքի, շինարարութեան հերոսութիւնը...

— Մեթոդները փոխվել են մեր առորյա աշխատանքի վերաբերութեամբ, բայց հերոսութեան հեռանկարները մնում են նույնը, յեթե աչքի առաջ ունենաս, վոր մենք գտնվում ենք մի վիթխարի, յերկարատև կովի շրջանում:

— Բայց ի՞նչպես ես կիրառում քո ասածը մեր ներկային. — յեթե յես տալիս եմ բոլոր ուժերս սոցիալիստական շինարարութեան, ուրեմն ի՞նչ ուրիշ պերեսպեկտիվների մասին ե խոսքը:

— Մի՞թե պարզ չի իմ տեսակետը. — ամեն անգամ, յերբ դու լիարերան համոզում ես քեզ և ուրիշներին, վոր կոմունիզմի անչեզ գինվոր ես, պիտի իմանաս, վոր այդ խոսքերը կարող են հատուցում պահանջել... պահանջել, վոր գնաս մինչև վերջը...

— Մինչև կամ ո՞ւրջը... ուզում ես ասել, թե վրձուական մոմենտներին կլինեն լքողներ... բայց ասա խնդրեմ, մի՞թե ձեր սերունդը միայն անձնազոհութեան շավղով եր ընթանում պայքարելիս:

— Գնացողը գնում եր մինչև վերջը, լքողը լքում եր, բայց գտումն առաջանում եր առաջին քայլերից, և ամենամաքուր գտողը—անձնազոհութեան հեռանկարն եր...

— Ընկեր Միքայել, քանի վոր տեղը յեկավ, պիտի պատմես թե ի՞նչպես սկսեցիր հեղափոխական դործունեութիւնը. դու մի քանի անգամ խոստացել ես...

— Լա՛վ, քանի վոր խոսքը յեկավ, պատմեմ, թե ի՞նչպես քայլերս ուղղեցի դեպի հեղափոխութիւնը... Այդ ժամանակ, ամառվա սկզբին, ինձ ուղարկել եյին պրակտիկայի Հարավային Ռուսաստանի մի խոր կալվածք: Նրա տերն ամեն ամառ ընդունում եր միայն մի պրակտիկանա—ուսանող, վախենալով, յերկուսից, յերեքից, և առհասարակ հոգնակի թվից, վորովհետև, նրա կարծիքով, դրանից կարող եր հեղափոխութիւն ծագել: Գնալով այնտեղ, յես շուտով համոզ-

վեցի, վոր այդպիսի մթնոլորտում անկարելի յե վորեւե լուրջ գործի ձեռնարկել: Հագիվ աշխատանքս սկսած, առաջս յեկամ կալվածատիրոջ կինը, — հղպացած մի դեղեցկուհի, վորը փնտռում եր միայն հաճույք, նորութուն. գալիս եր այգին, մոտս կանգնում, ու սկսում շաղակրատել աչքերիս շեշտակի նայելով, ինչ վոր դադանի ներշնչումներ անելով:

— Այս բույսերը դո՞ւք եք հավաքել... Ի՞նչ գեղեցիկ են... բայց գիտնական չդառնաք. նրանք շատ ձանձրալի մարդիկ են, — իսկի չեն կարողանում կանանց զբաղեցնել... Այսոր շատ աշխատեցիք, կհոգնեք, դնանք վերեւ, սուրճ խմելու... այնտեղ կպատմեք ինձ այս հետաքրքիր բույսերի մասին...

Այդպես, մոտ յերկու շաբաթ նա պտտվում եր իմ շուրջը, իսկ յես Հովսեփ-գեղեցիկի դերը կատարելով, խուսափում եյի նրա ցանցերից. նա շարունակ առաջ եր խաղում, իսկ յես ամոթխածութունից հետ եյի նահանջում: Հաճախ խնդրում եր ինձ ուղեկցել իրեն մինչև կալվածքից դուրս գտնվող փոքրիկ մատուռը, վորի շուրջը թաղված եյին իրենց տոհմի ներկայացուցիչները: Գնում եր թախծոտ դեմքով, իբր թե աղոթելու, բայց իրապես սիրաբանելու նպատակով: Ինչպես հետո իմացա, ամեն ամառ նա նույն կերպ սիրաբանում եր բոլոր պրակտիկանտների հետ:

— Իսկ ամուսի՞նը — հարցրեց Գուրգենը:

— Ամուսինը, «պամեչչիկը», մատների արանքով եր նայում. նա յե իրեն հաշիվներն ուներ. — կալվածքն ստացել եր կնոջ բաժինքի հետ, այդ պատճառով ել նրա ձայնն ավելի ուժեղ եր հնչում:

— Ա՞յ քեզ լավ պրակտիկա. — Ֆեոդալական-բուրժուական կուլտուրան ես ուսումնասիրել — փարթամ կյանքը, սերն ու աղոթքը...

— Շտապում ես, ընկեր Գուրգեն, դեռ կարդա մյուս յերեսը, հետո ասա. — յերկար չտեւեց այդ խաղը. յերբ յես տեսա աչքովս, վոր այդ հեքիաթային շքեղութունը հիմնված ե քաղցած գյուղացիների ուսերի վրա, ներսս կուտակված հեղափոխական, դեռևս անվորոջ

տրամադրութունը բյուրեղացավ: Հիշում եմ մի լուսնյակ գիշեր, յերբ կալվածատիրոջ հյուրերը հարբած դռում-գոչում եյին պատշգամբում, յես քայլում եյի այդու յերկար ու ձիգ ծառուղիներով ու խորհրդածում աշխարհիս կարգերի մասին... Ու այդ գիշեր յես յերգվեցի նետել իմ ուժերը պայքարի մեջ, կովել այդ կարգերը տապալելու համար...

— Ահա թե վորտեղ ե յեղել թագնված դիակեյախկան...

— Այո, հենց այդտեղից ել սկսվեց իմ ակտիվ հեղափոխական ուղին: Հետևյալ առավոտը, պատրվակ լռնելով, թե անակընկալ գործերով ստիպված եմ մեկնելու, թողի կալվածքն ու գնացի Մոսկվա... մնացածի մասին հետո կպատմեմ:

— Բայց չմոռանաս, ընկեր Միքայել, վոր քո Հաննիբալյան յերդումն արել ես ռոմանտիկ լուսնի շողերի տակ...

— Իսկ դու ել չմոռանաս, վոր չկա ավելի անաչառ վկա, քան լուսինը, փոխանակ ինձ տերևաթափ անելու, ավելի լավ ե խոստովանվես, վոր դու ել ունես այդ տերևներից...

— Վոչ, մենք հեղափոխական ենտուղիաստներ ենք, բայց վոչ ռոմանտիկներ:

— Գուր այն հասակումն ես, վոր վոչ միայն լուսինը, այլև արևը ռոմանտիկ կղարձնես... բայց լավ, թող քո ասածը լինի, ենտուղիաստ ասենք: Յես ել հենց այդ քո ենտուղիազմի վրա մի գաղտնի պլան եմ հիմնել. վոր այժմ պիտի բացեմ, — այստեղ մոտիկ մի գյուղ կա, վորի շեֆը մեր խորհմանտեսութունն ե: Մինչև որս դեռ այդ գյուղը կուլակների ազդեցության տակ խորշում ե կոլխոզից: Ահա թե ի՞նչն ե սպասում քո ենտուղիազմին...

— Ի՞նչպես կանխեցիր իմ ծրագիրը — յես ել հենց նույն մտադրութունն ունեմ:

— Ուրեմն այս կետում հին ռոմանտիկն ու նորագույն ենտուղիաստն իրար ձեռք են մեկնում...

— Այո, սոցիալիստական գրոհ կտանք այդ գյուղի վրա...

— Այդպես, ընկեր Գուրգեն, մտածիր այդ ծրագրի շուրջը. իսկ յես զնամ աչք ածեմ մեր անտեսութեանը, տեսնեմ ի՞նչ նվաճումներ ու անումներ ենք ունեցել այսօր:

Ասաց ու հեռացավ արագ, կարծես սթափվելով վրչ-գործնական խոսակցությունից:

... Մըկը մայր էր մտնում, լուսավորելով հեռավոր լեռների զագաթները: Ամառվա յերեկոյի հովն էր փչում, թարմություն ներշնչելով ցերեկվա շոգից թրմրած մարդկանց: Խորհանտեսութեան ծառուղիներով վերադառնում էյին բանվորները: Նրանց մի մասը խմբվել էյին կոտայերատիվի դռանը, սպասելով հացի հերթին, իսկ մյուսները, նստած ճաշարանի առաջ, յերկար սեղանների մոտ, թեյով էյին զբաղված: Մշտական բանվորների կանանցից, վորը ջուր էր տանում աղբյուրից, վորն էր յերեխային էր փնտռում, կամ հեշտայեռը բռնացնում չոր փայտի կտորներով: Շենքերից մեկի ճակատին ռազիոյի բարձրախոսն ինչ վոր ասիական յեղանակ էր սկսել:

Յերեկոն իջնում էր, հեռզհետե խտացնելով իր քողը: Տեղ-տեղ փայլող ելեկտրական լամպերը, մթին հակառակ,—քանի գնում, ավելի ու ավելի էյին պայծառացնում լույսերը:

Գուրգենը զանդազ քայլերով հետ ու առաջ էր գնում ծառուղիով, մտածելով Միքայելի հայտնած լուրի շուրջը,—թե ուսանուհի յե գալու: Մի արտակարգ ուրախություն էր իջնում վրան.—«Ի՞նչ արտաքինով, ի՞նչ բնավորութեան տեր կլինի նա», կարծես հարցնում էր նա ինքն իրեն ու յերևակայութեան մեջ ստեղծում էր ցանկալի սպասկերը... Ահա նա գալիս է, իր գեղեցիկ, պայծառ դեմքով, ու լցնում իր սիրտը մի նոր տաքութեամբ... ծանոթանում է իր—Գուրգենի ծրագրերի հետ, հափշտակվում, թև է տալիս... Ապա մշուշապատ հեռվում նկարվում էյին իր ապագա գիտական հետադրոտումները, գյուտերը... իրենց միասին գործունեությունը, մի առանձին, վոզևառ թափով...

Հինգ օրից հետո, յերեկոյան դեմ, խորհանտեսութեան գլխավոր շենքի դավթում մի կառք կանգ առավ: Կառքից իջավ մի օրիորդ, մոխրագույն, համեստ գգեստով, գլխարաց, կարճ մազերով: Նա բարձրացավ վերև, պատշգամբ, աչք ածեց պատուհաններին: Գուրգենն այդ ժամանակ, ինչ վոր կարևոր գործ վերջացրած,—ինքնամոռացութեան մեջ բարձր չվզվացնելով քայլում էր սենյակում: Պատուհանից նկատելով օրիորդին, նա իսկույն յենթադրեց, վոր յեկողն ուսանողուհին է, ու ակամայից շառագունեց, կարծես տեղն ու տեղը բռնել էյին հանցանքի մեջ: Նա իսկույն դուրս յեկավ պատշգամբ:

— Այստե՞ղ ե ընկեր Սամվելյանը,—հարցրեց ուսանուհին թեթև հուզվելով, յենթադրելով, թե Գուրգենն է խորհանտեսութեան վարիչը:

— Այո, նա այստեղ է ապրում, բայց յերկու օրով զնացել է քաղաք:

— Յես յեկել եմ վորպես պրակտիկանտ. Ազրբեջանից:

— Այո', ընկեր Միքայելին արդեն գրել են ձեր մասին:

— Ուրեմն յես կարո՞ղ եմ այստեղ իջևանել:

— Այո', ի հարկե... դուք այստեղ նստեք, յես կրերեմ ձեր իրերը:

—Վոչ, յես ինքս կրերեմ,—ասաց ուսանողուհին ու արագ քայլերով իջավ սանդուղտներով: Գուրգենը հետևեց նրան: Կարծես յերկուսն էլ մրցում էյին իրար հետ, թե ո՞վ շուտ կհասնի կառքին: Որիորդն ուզում էր միանգամից վերցնել բոլոր իրերը. Գուրգենը հազիվ կարողացավ վերցնել մի կապոց:

Իրերն առժամանակ տեղավորեցին Գուրգենի սենյակում: Սկսվեց սկզբնական ծանոթութեան կցկտուր խոսակցությունը:

- Դուք վո՞րտեղից եք գալիս ընկեր:
- Բազմից.—իսկ դուք վաղո՞ւց ե այստեղ եք:
- Մոտ քսան օր:

— Մի՞ թե միայն դուք եք այստեղ վորպես պրակտիկանա:

— Մի շարքի առաջ չորս ուսանողներ ել կային, բայց նրանց շտապ կարգով ուղարկեցին գյուղերը. յես մնացի, վորովհետև ինձ հանձնարարված են գիտական աշխատանքներ:

— Իսկ ո՞վ ե փոխարինում վարիչին:

— Առ այժմ յես:

Ուսանուհին հանեց իր վկայականը և տվեց Գուրգենին:

Գուրգենը կարգաց, լուրջ արտահայտություն տալով գեմքին: Վկայականը Հասմիկ Հախովերդյանի անունով եր:

— Առայժմ պահեք, — ասաց Գուրգենը. — հետո յերբ կգա ընկ. Միքայելը, նրան կհանձնեք:

— Իսկ ձեր ազգանունը կարելի յե՞ իմանալ:

— Գուրգեն Սաղաթելյան:

Մի քանի սովորական հարցերից հետո Գուրգենը, ցանկանալով միայնակ թողնել ուսանուհուն, վորպեսզի նա կարգի բերի իրերը, առաջարկեց.

— Դուք այստեղ հանգստացեք, իսկ յես կերթամ հեշտայեռ պատվիրելու:

Կես ժամից հետո հեշտայեռն արդեն սեղանի վրա յեր: Հասմիկն աննկատելիորեն ստանձնեց տանտիկնոջ դերը, — սկսեց կարգի բերել սեղանը, — թեյի համար տեղ բաց անելով: Նա ժպտում եր, մաքրելով սեղանից փոշին, հացի ու պանրի մնացորդները, թղթի պատուտած կտորները, իսկ Գուրգենը կարմրում եր, աչքերը սևեռելով նրա վրա: Ամեն անգամ, յերբ Հասմիկը հայացքը դարձնում եր սենյակի վորևէ կողմը, Գուրգենը փշադատում եր. նրան թվում եր, թե ուսանուհին քննադատում ե մտքում իր փնթի սարք ու կարգը, վոր ինքն ել այժմ պարզորեն նկատում եր. — նրա աչքերն եյին ծակում թափթփված, փոշոտ գրքերը, անկարգ դես ու դեն ընկած սեղանի պարկերը, սրվակները:

Ամեն ինչ պատրաստելուց հետո նրանք նստեցին թեյի իրար զիմաց ու սկսեցին խոսել, սկզբում գյու-

ղատնտեսական հարցերից, ապա անցան ուսանողական կյանքին. — պատմում եյին ծիծաղելի դեպքեր պրոֆեսորների կյանքից: Սակայն նրանց հետաքրքրողն ավելի իրար լսելն եր, քան խոսակցության նյութը: Մի դուրեկան, գուրգուրող զգացում եր գալիս մեջները, կարծես վաղուց մտերիմ եյին ու յերկար բացակայությունից հետո գտել եյին իրար:

Աննկատելի կերպով վրա հասավ մութը: Գուրգենը վեր կացավ, վառեց ելեկտրական լամպն ու ողտվելով ընդմիջումից, սկսեց կարգի բերել իր սլարապմունքների սեղանի վրայի գրքերն ու իրերը:

— Վերջերս շատ փնթի յեմ դարձել, ընկեր Հասմիկ, կներեք, վոր ձեր ներկայությամբ եմ դասավորում գրքերս:

— Վոչինչ. յերևի շատ եյիք տարվել գիտական աշխատանքով:

— Այո, այդ ել կար:

Մինչ Գուրգենը գրադված եր իր գրքերով, Հասմիկը դիտում եր նրան. — «Լուրջ տղա յե յերևում, — մտածում եր նա», — յերևի պրոֆեսոր ե դառնալու... մի քիչ փնթի յե, բայց վոչինչ, կանցնի... պրոֆեսորի արտաքին ունի — լայն ճակատ, խոշոր դիմագծեր, խիտ հոնքեր... վոզևորված կխոսի»...

Ու իսկույն Հասմիկն ինքն իրեն ել յերևակայեց նրա ողնական. — «Իրար կսաղանք, — նա շագանակագույն, պանգուր մազերով, կապտավուն աչքերով, իսկ յես սևուկ... իմ սև, խոշոր աչքերով յես զարմացած կնայեմ նրա դեմքին մի քիչ ներքևից, (յես ցածր եմ նրանից)... բայց ի՞նչ ծիծաղելի աղջիկ եմ, այնպես եմ համեմատում ինձ նրա հետ, ասես հետն ամուսնանալու յեմ»...

Գուրգենը յեկավ նստեց տեղը: Յերկուսն ել լուռ եյին:

— Ընկեր Գուրգեն, վո՞րտեղ եմ գիչերելու:

— Այս հարևան սենյակում:

— Իսկ յեթե վարիչը վերադառնա՞:

— Նրա սենյակն այն մյուսն ե:

— Ուրեմն սենյակն ապահովվա՞ծ ե:

— Վոչ միայն սենյակը, այլև ամեն տեսակի աջակցութիւն:

— Ենթակալ եմ:

Գուրը կիսով չափ բացվեց. արանքից ներս նայեց ալգեպան Մուկուչը: Նա ուզում էր հեշտայեռը տանել ու հարցրեց:

— Ինձ կանչո՞ւմ եյիք:

— Արի՛. լավ ժամանակին յեկար. սամովարը կտանես, թեյ կխմես. հետո յեկ կանես կնկանդ, վոր զա ես կողքի սենյակը մաքրի. ընկերը պետք է եղտեղ ապրի:

— Բարով եք յեկել, — ասաց Մուկուչը, ձեռքը Համիկին մեկնելով սեղանի վրայից. — ես վո՞նց ա բանը, հընգեր Գուրգեն, հարանացու ա՞

— Ձե, — ասաց Գուրգենը ծիծաղելով. — ընկերը պետք է մեզ մոտ աշխատի:

— Հա, ազրանամ ա սովորելո՞ւ. ա՛յ թե կնանիք սովորում են ե՛. մի թվանք պցելն ա մնում, վա՛յ թե են եկ ձեռներիցս խլեն: Մենակ իմ կնիկն ա, վոր ամեն բանից վախենում ա. գնում ա ես մոտիկ դեղերը, կնանոցից սուտ խաբարներ լսում, ու հուշտ ըլում. մթամ ասում ա, կոխողում կնանաց «որչի» (ընդհանուր) են անում: Յես գիր սովորեցի, իսկ նա ասում ա դժար ա, կարալ չեմ...

— Յես կհամոզեմ, կսովորեցնեմ, — ասաց Համիկը:

— Ա՛յ լավ բան կանես:

Նա հավաքեց բաժակները սինու վրա, վերցրեց բոլորը հեշտայեռի հետ ու տրեխները հատակին քամսնելով դուրս գնաց:

Մի քառորդ ժամից հետո պատշգամբ բարձրացալ նրա կիներ, զրնգալեն բացեց հարևան սենյակի դուռը, ու սկսեց թրխկացնելով մաքրել: Մի ուրիշ անգամ նա կմաքրեր ու առանց իմաց անելու, կիջներ ներքև, բայց այժմ, լսելով Մուկուչից, վոր Գուրգենի մոտ աղջիկ է յեկել, հետաքրքրութիւնը բռնել էր: Նա ներս մտալ, կանգնեց դուռն չեմքին, աչքի տակով դիտեց Համիկին ու ասաց.

— Սենյակը պատրաստ ա:

Ու նորից հայացք նետելով Համիկի վրա, դուրս գնաց:

Հենց նոր եյին տեղափոխել Համիկի իրերը մյուս սենյակը, յերբ ներս մտալ ընկեր Միքայելը:

— Ա՛, բարով Գուրգեն, բարով եք յեկել ընկեր, — ասաց նա, Համիկի ձեռքը սեղմելով. — թեպետ յես տանը չեյի, բայց կարծում եմ, ընկեր Գուրգենը ձեզ լավ ընդունած կլինի:

— Սյո, շնորհակալ եմ հյուրասիրութիւնից:

— Դե, ընկեր Գուրգեն, պատրաստվիր. աչքի առաջ ունեցիր, վոր սոցմրցում է լինելու քո և ընկերոջ մեջ:

— Մի՛ թե, — ասաց Համիկը, — ուրեմն գործս բաժական դժվարանալու յե:

— Վոչ թե ձերը, այլ իմն է դժվարանալու, — վրա բերեց Գուրգենը:

Սովորական հարց ու փորձից հետո ընկեր Միքայելն ասաց.

— Ես ի՛նչ լավ եր ձեր գալը, ընկեր Համիկ. մեկ-մեկ տանտիկնոջ աչքով կնայեք մեր սարք ու կարգին, ապրուստին:

— Տղամարդիկ շարունակ ասում են, թե կնոջ պիտի ազատել խոհանոցից, ընտանեկան մանրուկից, բայց հարմար րոպեյին իրենք են մեզ մղում դեպի այդ մանրուկը:

— Անցյալի ժառանգութիւնն է, — ասաց Գուրգենը թեք նայելով ընկ. Միքայելին:

— Դե, ընկեր Գուրգեն, սկսիր, անցյալի բոլոր մեղքերն ինձ վրա բարձիր...

— Կենացի ժամանակ չե՞ վոր ասում են — «Թույլ տվեք հանձինս ձեր» և այլն, — ասաց Գուրգենը ծիծաղելով:

— Հա, լավ ես գտել «անձս»... ընկեր Համիկն, իհարկե, այդպես չի մտածում:

— Յես ձեր ասածի մեջ մի առանձին բան չեմ տեսնում, — պատասխանեց Համիկը. — իսկ ինչ վերաբե-

բում ե տնային գործերին, կարծում եմ, պետք է կոմունայով աշխատենք:

— Յես համաձայն եմ, —ասաց ընկ. Միքայելը:

— Յես ել ի հարկե, —ավելացրեց Գուրգենը:

— Դե ինձ կներեք, —ասաց ընկ. Միքայելը. — յես միայն մի քանի ընկերացիով յեկա — շտապ կարգով պիտի գեկուցում ներկայացնեմ դուք ել հոգնած կլինեք, պիտի հանգստանաք:

Ամեն մեկը քաջվեց իր սենյակը: Գուրգենը, քառորդ ժամի չափ մտամոլոր քայլեց սենյակում, անուշադիր թերթեց գրքերը, ապա դուրս յեկավ պատշգամբը: Համիկի դուրս գնալուց հետո սենյակը կարծես հանկարծ դատարկվեց, դարձավ անհյուրընկալ, ամայի:

Նա նստեց պատշգամբում թողած մի խորխուր աթուռի վրա: Դիմացը, յերկնքում, լուսնյեղջուրն էր, իր խտացած լույսով, ու կողքին մեղմ, պսպղուն լուսաստղը: Յերկնակամարում աչք չլացնող բազմությամբ սիրված աստղերը նայում էին հեռավոր ժպիտով, ասես մրցելով իրար հետ, թե վորն ավելի պարզ կերևա:

«Ինչո՞ւ յեմ այսպես անհանգստանում, զգացումներիս տեղի տալիս», — մտածում էր Գուրգենը. — մի՞թե ընկ. Համիկի գալու պատճառով... Գուցե նրանից է, վոր միայնության մեջ էլի, — կտրված ընկերներից, խամացած, ու առաջին պատահած ուսանուհին պետք է վոր ուժեղ տպավորություն աներ վրաս...

Կուզեյի դարձյալ Համիկի հետ լինել, և այս փոքրիկ ցանկությունը խոսեցնում է ինձ աստղերի հետ... Ի՞նչ ծիծաղելի յեն զգացումները... Հիմա յեթե դուրս գա ընկեր Միքայելը, տեսնի ինձ այս սանտիմենտալ գրության մեջ, կասի. — Հը՞, վո՞նց ես, մեր աղա, յերազ՞ում ես լուսնի հետ...

Ու այդ մտքից սթափված, նա շտապով ներս մտավ սենյակը, իսկույն հանվեց, պառկեց անկողնում: Բայց յերկար ժամանակ քունը չեր տանում. պտտվում էր անկողնում, ահանջ դնում հարևան սենյակին, վորտեղ

Համիկն էր. — վոչ մի շշուկ չեր լսվում: «Համիկը յերևի քնած է ճամբորդի խորը քնով ու յերազում ծիծաղում է իմ սանտիմենտալ գրության վրա»... Ժպտաց Գուրգենն իր մտորումների վրա ու հոգնած ուղեղով ծանր ընկավ քնի գիրկը:

Հետևյալ առավոտ Գուրգենը դարթեց սովորականից ավելի ուշ, դռների թխթխոցից: Արևն ընկել էր պատուհանից ներս ու տարածել սենյակում թուլացող շողը: Նա վեր թռավ շնամ, ու սկսեց հագնվել անկամ, կարծես վոչ մի ցանկություն չուներ շարժվելու: Բայց հանկարծ ահանջին ընկավ պատշգամբից Համիկի ձայնը, ու կարծես սառը ջրի թարմ ցնցուղն ընկավ աչքերին, միանգամից դարթեցրեց: «Ձե՞ վոր Համիկն այնտեղ է», անցավ նրա մտքով, ու շտապ-շտապ հագնվելով, դուրս յեկավ սենյակից:

— Բարև, — վողջունեց նրան ընկ. Միքայելը. — ես ի՞նչ եմ տեսնում, ընկեր Գուրգեն, այսքան քնե՞լ. սա քեզանից չի. հենց առաջին որվանից տեղի յես տալիս:

— Հա, գիշերս կարգալով ընկա, ուշ քնեցի, — հնարեց Գուրգենը:

— Յես ու ընկեր Համիկը քեզ ենք սպասում:

— Յես պատրաստ եմ, — ասաց Գուրգենը:

Նրանք միասին թեյ խմեցին ու հետո դուրս յեկան — ընկ. Համիկին ծանոթացնելու խորհանտեսության հետ:

Համիկը հագել էր բացկապույտ, բարակ զգեստ, գեկուրտելով, թևերը կիսաբաց: Նրա մեջ արդեն չբացել էր նորեկի անվստահությունը, և իրեն զգում էր, վորպես իր հարազատ միջավայրում:

Համնելով գոմին, ընկ. Միքայելն ասաց.

— Ընկեր Գուրգեն, թեպետ իմ պարտականությունն է ընկեր Համիկին ծանոթացնել մեր տնտեսության հետ, բայց կներես, վոր շատ եմ զբաղված, խնդրում եմ քեզ վրա առնես այդ գործը:

— Լավ, — ասաց Գուրգենն ուրախանալով, կարծես հենց իր ցանկությունն էլ այդ էր: Նա իսկույն

Հասմիկին հետն առած, ճանապարհը ծռեց դեպի խորհունտեսության այգին:

— Գուցե ձեզ համար ժամանակի վատնում ե ինձ ծանոթացնելը,—ասաց Հասմիկը, փորձելու նպատակով—յես կարող եմ հետաձգել մի ուրիշ անգամի...

— Ընդհակառակը, յես շատ ուրախ եմ, վոր ինձ վիճակվեց ձեզ բացատրություններ տալ. բայց ինչո՞ւ այդ միտքն յեկավ ձեր մեջ:

— Սենյակից դուրս յեկաք մուտք ու դժգոհ դեմքով, և յես յենթադրեցի, թե պատճառը յես եմ:

— Վոչ, դա թյուրիմացություն ե. յերեկ գիշեր ուշ քնեցի, հետո ել ընկա յերազների մեջ, ու առավոտը վեր կացա ծանր գլխով. դա եր պատճառը, և ուրիշ վոչինչ. այժմ արդեն անցավ:

— Յերազները հաճախում են իրենց բարեկամներին.—յերեկ դուք շատ եք յենթարկվում սպափորություններին:

— Վոչ, յես դրական գիտությունների, մատերիալիզմի հետևող եմ, և յերազների, զգացումների հետ գործ չունեմ...

— Այդու այս մասում միայն պողատու ծառե՞ր են,—հարցրեց Հասմիկը խոսքը փոխելու համար:

Նրանք անցան ծառուղիներով, տեղ-տեղ կանգ առնելով, այս կամ այն ծառը դիտելու համար: Յերկուսի փոխադարձ ձգտումն եր—լինել միասին և վորքան կարելի յե, մարդկանցից հեռու:

Կես ժամի չափ այգում շրջելուց հետո Գուրգենն առաջարկեց:

— Նստենք այս ծառի տակ, փոքր ինչ հանգստանանք:

Նստեցին ծառի լայն ստվերում ու լուռ նայում եյին իրար, խոտերը պոկոտելով: Բույսերի բուրմունքի ալիքների հետ մի ինչ վոր սիրտը լցնող զգացումն եր գալիս: Յերկուսն ել զգում եյին, վոր ուրախ եյին իրար մոտ լինելուց, բայց խոսում եյին այլ բաներից:

Հասմիկը հանեց թաշիկնակը և ուղղեց դրպանը:

— Այդ ինչ շատ բաներ կան ձեր գրապանում:

— Ծատ չե, բայց մի մեծ բան ունեմ:

Ու հանեց մի ատրճանակ:

— Ատրճանակ—դարմացավ Գուրգենը.— ինչո՞ւ համար եք պահում:

— Սիրային գողերի համար:

— Սիրային գողերի՞... դա ի՞նչ սոսկալի պրոզայե...

— Ընդհակառակը, դա մի բնաստեղծական արտահայտություն ե:

— Հետո՞, անգլիտակցաբար հարցրեց Գուրգենը:

— Հետո՞... յերբ դնում եմ պրակտիկայի, հետո տանում եմ այս ատրճանակը... բայց ինչո՞ւ այդպես հուզվեցիք...

— Վոչ, չեմ հուզվում...միայն ինձ մի քիչ տարորինակ թվաց...յերեկ անցյալում ձեզ մի դժբաղտություն ե պատահել:

— Դժբաղդություն չե, բայց մի անախորժություն յեղել ե Աղբրեջանում:

Գուրգենը լուեց: Մի հիասթափում անցավ վրայով, ասես կանաչ ծառը հանկարծ տերևաթափ յեղավ նրա առաջ: Նա պատկերացնում եր Հասմիկին նուրբ զգացումներով մի կին, և հանկարծ—այդ ատրճանակը, ու մանավանդ—այդ սարսափելի բառերը— «սիրային գողերը»...

— Ծարունակենք մեր եքսկուրսիան,—ասաց Հասմիկը, տեղից վեր թռչելով:

Գուրգենը հետևեց նրան ամպամած տրամադրությամբ: Գնացին բանջարանոց: Մուկուչն աշխատում եր մարդերում, գլխին կարմիր աղլուխ կապած:

— Բարև Մուկուչ,—ասաց Գուրգենը,—ի՞նչպես ե բանջարանոցը: Մուկուչը բարձրացրեց կորացած մեջքն ու հենվեց բահին:

— Բարով եք յեկել. քալամի վրա վորթն ա յերևացել:

— Վոչինչ, վաղվանից դեղ կանենք:

Յերբ նրանք բավականաչափ հեռացան, Գուրգենն ասաց.

— Մուկուչը մեր հին այգեպաններից ե. նոր բաների հետ այնքան ել չունի, բայց շատ յեռանդով աչ-

1736  
39



խատող է, և շատ անգամ է ազատել դժվար դրուժյուններէից:

Հետեւյալ մարդերում աշխատում էյին յերիտասարդ գյուղացիները:

— Մրանք մեր նոր պրակտիկաններն են, — բացատրում եր Գուրգենը, — յսել են կարճատե կուրսերը և այժմ անցել են գործնական աշխատանքի:

Բանջարանոցների շարքը դիտելուց հետո նրանք մերադարձան կաթնասնտեսական մասը: Մի քանի շենքեր բար թողնելով, ներս մտան նոր կառուցած գոմը:

— Մանկությունից իմ մեջ պատկերացել է գոմը, փորպես մութը, նեխված, աղբի մեջ կորած մի փորջ, — ասաց Գուրգենը ժպտալով — և հիմա ամեն անգամ, յերբ ներս եմ մտնում այս յուսավոր գոմը, տարրորինակ ե թփում, վոր փոչ մի մութ անկյուն չկա, հատակը բետոնից է, կանոնավոր բաժանած ընդարձակ մսուրներ են ու մաքրություն...

Գոմի մեջ մնացել էյին մի քանի հորթեր ու մի հիւփանդ կով, վորը պառկած եր գետնին:

Համիկը շոյեց, գուրգուրեց, ցեղական խոշոր հորթին: Գուրգենի շոյանքից զգացված, հորթը բարձրացրեց գլուխն ու մանկական պարզությամբ բաց աչքերով նայում եր, կարծես խնդրելով, վոր ելի շոյի իր վիզը:

Նրանք դուրս յեկան գոմից, անցան լայն ծառուղիով ու դարձյալ բաց թողնելով մի շարք պահեստաշենքեր կանգ առան արեկող մի բացատի առաջ, վորտեղ շարված էյին կարգով փեթակները: Ուզում էյին ներս մտնել, բայց մեղավանոցում աշխատող շրջանային հրահանգիչն ու մեղավարույժը զգուշացրին:

— Ընկերներ, դուք զինված չեք, մեղուները կարող են հարձակվել ձեզ վրա:

— Պիտի հպատակվենք — ծիծաղեց Գուրգենը. — մի ուրիշ անգամ դիմակներով ներս կմտնենք:

— Իսկ վորտեղ է թռչնաբուծարանը, — հարցրեց Համիկը:

— Սեննածայրին. հենց այստեղով ել պիտի գնանք:

Յերկար ծառուղին բերավ նրանց թռչնաբուծարանը: Ընդարձակ այգու մի մասում, վորը դրսից ցանցով պատած եր, կանաչի մեջ տարածվել էյին սպիտակ հավերը: Նրանց մի մասը ձյունաթոյր գծով շարվել էյին առվի գծով, ու կարմիր կատարները շարժելով, ջուր էյին խմում առանց շտապելու, կարծես խաղալով:

Նրանք ներս մտան ճուտերին հատկացրած շենքն ու այնտեղ հանդիպեցին թռչնաբուծարանի վարիչին, վորը մտահոգված, ինքնամփոփ դիտում եր ցանցապատ շրջանում ծվծվող սպիտակ ճուտերին:

— Ի՞նչպես են հավիկներդ, — հարցրեց Գուրգենը բարևելուց հետո:

— Հիվանդությունը շարունակվում է.

— Մասսայական բուժարանների մշտական վտանգներից են. անշուշտ մենք պիտի սովորենք մի շարք սխալներ անելուց հետո...

— Կուզում ենք որ ու գիշեր, տեսնենք ի՞նչ կլինի:

Վարիչի առաջնորդությամբ նրանք այցելեցին ինկուբատորների բաժանմունքը, հավաքները, ձու ածելու վանդակները, դիտեցին հետեի այգում հավերի ու հնդկահավերի զանազան ցեղերը: Յերբ դուրս յեկան թռչնաբուծարանից, նրանց առջևից անցան յերեք թխսկան, յերեքն ել սպիտակ. նրանք միացած ման էյին ամում նորելուկ ճուտերին:

— Մի՞թե չեն կուզում, — հարցրեց Համիկը:

— Վոչ, չեն կուզում, ասաց վարիչը. — գոյության կուփի ազդակները վերացած են — կերն ապահովված. նշանակություն ունի և այն, վոր բոլորը մի գույնի յեն թե ճուտերը, թե թխսկանները:

— Ա՛յ քեզ կոմունա, — ասաց Համիկը, չկարողանալով աչքը հեռացնել տարրորինակ յերրորդությունից:

— Ինկուբատորից ստացած ճուտերը փոքր ինչ ավելի հիմարիկ են, քան թխսկաններինը, — շարունակեց վարիչը. — սրանք ավելի աշխույժ են ու առույգ տեսք ունեն. թխսկանը բավական բան է սովորեցնում իր կշիռոցով:

— Այստեղ շատ բան կա անելու, ասաց Հասմիկը՝  
յերբ նրանք դուրս յեկան այդուց ու գնում էյին դեպի  
փորձադաշտը.—յես պրակտիկայի ժամանակ աշխա-  
տում եմ ծանոթանալ տեղում յեղած բոլոր ճյուղերի  
հետ:

— Գուք ուզում եք ենցիկլոպեդիո՞ստ դառնալ:

— Այնքան, վորքան այդ չի խանդարել իմ հիմնա-  
կան մասնագիտությանը:

Փորձադաշտում չըջանային, դյուղատնտեսը բա-  
ցատրություններ եր տալիս մի խումբ կոմյերիաներին:

— Զարմանալի յե,—ասաց Հասմիկը,—վոր տըն-  
տեսությունն ել գնում եմ, ամեն տեղ դպրոցի տպավո-  
րություն եմ ստանում, գուցե մի ժամանակ դպրոցը  
կլինի հենց գործի մեջ...

— Այո, մենք ել հենց դրան ենք ձգտում:

Փորձադաշտը դիտելուց հետո նրանք վերջացրին  
առաջին թուուցիկ պտույտն ու վերադարձան իրենց  
բնակարանը:

— Իսկ այստեղ կա՞ լաբորատորիա:

— Այո կա, ներքեի հարկում, բայց դեռ կարգին  
սարքավորված չե:

— Կարելի յե՞ տեսնել:

— Ինչու չե:

Նրանք իջան մի կիսախավար սենյակ, վորտեղ  
պատերի մոտ շարված էյին մի քանի պահարաններ  
զանազան նմուշներով ու քիմիական նյութերով: Սեղա-  
նի վրա անկարգ թափված էյին զանազան իրեր և նյու-  
թեր՝ փոքրիկ պարկերով:

— Ներեցեք, ընկեր Գուրգեն, պիտի ասեմ, վոր  
շատ անկարգ դրության մեջ է լաբորատորիան. յեթե  
թույլ կտաք, յես կարգի կբերեմ:

— Ընկեր Միքայելը թույլ կտա:

— Վաղվանից կսկսեմ: Բացի դրանից յես կուզեյի,  
վոր մեր աշխատանքները վորոշ պլանով ընթանային:

— Մտտամբ այդ պլանն արդեն կազմած է, մնա-  
ցածը միասին կկազմենք և կաշխատենք խիստ կարգով  
հետեւել նրան:

Գուրգենը մի առանձին չեչտով արտասանեց «խիստ

վարդով» բառերը, ցույց տալու համար, վոր ինքը լուրջ  
է վերաբերվում գործին:

Հասմիկը նայեց նրան նույնպես լուրջ և միաժա-  
մանակ թազնված մտերմական հայացքով, վորը կար-  
ծես ասում եր.—«յես կլինեմ քո լավ և գործունյա ըն-  
կերը»...

Խորհանտեսության վարիչը նորից քաղաք է գնա-  
ցել: Գուրգենն ուրախ է, վոր մենակ է մնալու Հասմիկի  
հետ: «Գուցե նա քաջվում է ընկ. Միքայելից,—մտա-  
ծում եր նա,—այժմ այդ արգելքն ել չկա, կարող է ա-  
վելի պարզ արտահայտվել»...

Առավոտը վաղ, արևածագին, նրանք միասին  
գնում են այդին ծառերի վնասատու միջատներ փնտոե-  
լու:

Առավոտը շողշողում է, գուրգուրում, հրապուրում  
և այդ հրապուրանքի կենտրոնը—Հասմիկն է:

Նրանք միջատներ փնտելով հեռանում են, խորա-  
սուզվում յերկար ծառուղիների մեջ:

Ահա դարձյալ մի ծառ, վորի վրա միջատներ կան:  
Հասմիկը քչփորում կանչում է Գուրգենին, մտերմաբար  
նայելով նրա դեմքին:

— Տեսեք, ընկեր Գուրգեն, վորտե՞ղ են թազնված:

Գուրգենը մոտենում է ու անգիտակցաբար ձախ  
ձեռը զննելով Հասմիկի ուսին, նայում է նրա ցույց  
տված տեղը: Այդ բույսին Հասմիկը,—առանց փոխե-  
լու իր դիրքը,—ձեռքը գրպանն է տանում ու իր ուսի  
վրայով հանկարծ դեմ է անում Գուրգենի աչքերի առաջ  
սև ատրճանակի բերանը...

Գուրգենը հետ է քաջվում, ու մինչև ականջները  
կարմրած աչքերը հառում է գետնին, կոշիկի ծայրով  
քանդելով գետինը:

«Ինձ ել է «սիրային գողերի» թվին դասում,—  
մտածում է նա, ու նորից իջնում է վրան հիասթափու-  
մը, նորից կանաչ ծառը տերևաթափ է լինում, ու Հաս-  
միկն ընկնում է «սոսկալի պրոգայի» չըջանը...»

Իսկ Հասմիկը, գրպանը զննելով ատրճանակը, մի

քանի բոլոր խորասուզում ե ուշադրութիւնը ծառի վրա, իբր միջատներին դիտելով, բայց իրապէս միջոց ե տալիս Գուրգենին «ինքն իրեն հավաքելու»: Ապա ցանկանալով մոռացութեան տալ յեղածը, նա ասում ե բարձր ձայնով.

— Ընկեր Գուրգեն, հի՞շում եք այս միջատի լատիներեն անունը.

— Վոչ, մոռացել եմ, — պատասխանում ե Գուրգենը լրջորեն, չնայած վոր հիշում ե:

«Ուզում ե հանդստացնել», — մտածում ե նա, — բայց արժե՞ լուրջ ուշադրութիւն դարձնել...

Ու ցանկանալով կատակով անցնել միջադեպի վրայով, նա ասում ե.

— Տվեք ինձ ձեր ատրճանակը, ընկեր Համիկ, այդ խաղալիքը բավական խանդարում ե ձեզ...

— Վոչ, նա ինձ չի խանդարում, իսկ այսուհետեւ ձեզ ել չի խանդարիլ... և հետո — սա թույլերի զենքն ե, իսկ յես ձեզ ուժեղների թվին եմ դասում...

«Ուժեղների թվին» — ը շոյում ե Գուրգենի ինքնասիրութիւնը, բայց միտածանակ մտածում ե — «գուցե հեղնանք ե... ինչ ե ե պետք ե վերջ տալ այս սղայական զեղումներին, ամբողջովին թաղվել դիտական զբաղմունքի մեջ»...

Ու վերադառնում են լուռ յերկար ծառուղիով: Կարծես նույն Համիկն եր, նույն Գուրգենի առաջ, բայց քողով ծածկված, ոտար, անհասկանալի...

Թռչնաբուծարանի մոտ Համիկը բաժանվում ե:

— Յես պիտի ինկուբատորների ջերմաչափերը ստուգեմ, — ասում ե նա, ներս մտնելով ներքեի հարկը:

Գուրգենը մտամոլորի անցնում ե ծառուղիով, բարձրանում ե վերեւ իր սենյակն ու նստում սեղանի մոտ: Պիտի թեյ խմել, պիտի սկսել զբաղմունքները, բայց ձեռքին գործ չի կպչում: Նա հանում ե իր հուշատետրն գրում նոր յերեսից:

«Հենց առաջին տեսնելուց Համիկը շարունակ

պատվում ե յերեակայութեանս մեջ ու խառնում ե զբաղմունքներս: Յես սեր չեմ ընդունում, միայն զգում եմ ուրախութիւն նրան տեսնելիս ու տխրում եմ բաժանվելիս: Յերբեմն մտածում եմ — ամուսնանամ Համիկի հետ, բայց կասկածում եմ... հանկարծ մերժի, գուցե և հեզնի... Յես սեր չեմ ընդունում, բայց ամեն անգամ, յերբ ուզում եմ պարզ ձևով վճռել այդ կարգի հարցերը, անսպասելի կերպով առաջս խճճվում ե մի ինչ վոր բարդութիւն, վորին դժվարանում եմ անուն տալ և ընկնում եմ հակասութիւնների մի շքան: Ահա այդպիսի մի տարրինակ բարդութիւն ե և ընկեր Համիկը... Մաթեմատիկայի մեջ կան իրրացիոնալ, յերեակայական թվեր. կյանքում ել կան տարրինակ, իրրացիոնալ բնավորութիւններ, վորոնց թվին ե պատկանում ընկեր Համիկը: Նա կարծես ունի սովորական կնոջ հատկութիւններ, բայց այդ բոլորը ծածկված ե մի քմահաճ ինքնասիրութեան տակ, վորը դարձնում ե նրան անհասկանալի, անլուծելի...

«Տարրինակ եմ և յես... յերբ Համիկն ուզեց պարզ արտահայտել իր միտքը և «սիրայն գողեր» բառերն արտասանեց, յես նրա մեջ գոհհիկութիւն, մերկութիւն տեսա ու հիասաթափվեցի: Կարծես յես ուզում եյի, վոր նա լինի ավելի նուրբ, ավելի մշուշապատ... Բայց յերբ յես ծառի մոտ ձեռներս մտերմաբար դրի Համիկի ուսին, նա յել գուցե իմ քայլը համարելով գոհհիկութիւն, մերկութիւն, հետ մղեց ինձ... ատրճանակով, ինչո՞ւ յես ցավ զգացի, վոր նա բարդացնում ե մեր հարաբերութիւնները... Յերկուսս ել նույն ցավով ենք տարված, և սակայն, մեր պայքարի մեջ կարծես մի փոխադարձ մտերմութիւն ե թաղնված... կամ գուցե դա իմ յերեակայութիւնն ե»...

Գուրգենի մտքերն ընդհատեց Միքայելը, վորը նոր վերադառնալով քաղաքից, ներս մտալ իմանալու, թե ի՞նչ ե կատարվել իր բացակայութեան ժամանակ:

— Ընկեր Գուրգեն, բարևներս... հը՞ վոնց ես, կարծում եմ, հիմա դիտութիւնը թողած բանաստեղծութեամբ ես զբաղվում:

Գուրգենին թվաց, թե Միքայելը նկատեց իր այժմյան «գրադմունքը», և հանկարծակի գալով, շիկնեց:

— Չե՛, եղպես բան չկա,—ասաց նա, շտապով ծածկելով տետրը:

— Ի՞նչպես են ընթանում գործերը,—ասաց Միքայելը, նստելով աթոռին:

— Վոչինչ, լավ են:

— Ե՛՛հ, վերջապես թափ տվի վրայիցս զեկուլցաներն ու թվերը: Իսկ դու, Գուրգեն ի՞նչ փուլի մեջ ես. հուսով եմ, վոր զեռ չես սիրահարվել...

— Ե՛՛հ, ընկեր Միքայել, դու կարծես թե ծրագրել ես ինձ շարունակ կարմրացնելու:

— Ինչո՞ւ պիտի կարմրես. ձեր սերունդը մերի համեմատ մի տաս տարի առաջ է գայթակղվում: Բայց կատակը մի կողմը—ի՞նչ տպավորություն է անում ընկեր Համիկը:

— Յես նրանից շատ բան եմ սպասում. պատրաստված ու յեռանդուն աղջիկ է, ու կարելի յե ասել—լիովին «սոցուղղված» է. միայն բնավորության մեջ կան տարրինակ գծեր...

— Ե՛՛հ, վո՞ր կըթված կնոջ մեջ չկան տարրինակ գծեր. դա նրանից է, վոր ազատագրված կինն իր յերեակայությունամբ ավելի շատ է ցանկանում, քան կյանքը կարող է տալ ներկայումս. իսկ յերբ մարդ իր «կարողությունից» ավելի յե պահանջում կյանքից, նա ջղայնանում է... մենք հետաքրքրվենք միայն նրա աշխատանքով:

— Աշխատանքի կողմից հարվածային է. ամեն տեղ հասնում է,—գյուղատնտեսության բոլոր ճյուղերին հետևում է, և վոչ միայն ուսումնասիրում է, այլև ոգնում գործով: Աշխատում է և անգրագիտության վերացման գործում, և բջիջում... էլ ի՞նչ մնաց...

— Լավ է, լավ է... շատ ուրախ եմ. մեր խորհարդատեսությանը հենց ձեզ նման յերիտասարդներ էյին պահասում. այժմ այդ էլ կա. ուրեմն կարող ենք մեր ծրագրերն լիովին իրագործել, մանավանդ այն կոլխոզի ծրագիրը, վորի մասին քեզ արդեն ասել եմ: Մի քիչ կարգի բերեմ մեր տնտեսության գործերը, այն ժա-

մանակ դրանով կգրադվենք միասին... Ե՛՛հ ցտեսություն. դնամ կալվածքներիս աչք ածեմ:

— Յտեսություն,—յես սպասում եմ քո հրամանին,—ասաց Գուրգենը, մոտենալով մանրադիտակին: Միքայելը շտապ քայլերով իջավ ներքև:

Կյանքն ընթանում էր յեռուն աշխատանքի մեջ: Համիկն արդեն փաստորեն դարձել էր Գուրգենի ոգնականը նրա գիտական հետազոտությունների մեջ: Նա սխտեմատիկաբար դիտում էր փորձադաշտի բույսերը, հալաքում էր նմուշները, հետևում էր բոլոր ճյուղերի աշխատանքներին: Յերբեմն էլ Գուրգենին քշում էր դուրս, իսկ ինքը գրադվում մանրադիտակով:

Աննկատելի կերպով նա դարձել էր և Գուրգենի վերահսկիչը.—մի առանձին խանդով հետապնդում էր նրա գործերին ու հեգնանքով նկատողության արժանացնում նրա անկարգությունը: Գործի շուրջը նրանք բավական մտերմացել էյին և «դու»—ով էյին խոսում:

Այսօր էլ նրա ձեռքն ընկան Գուրգենի տետրերը, վորոնց մեջ չափարտած հողվածներ էյին գանազան հարցերի շուրջը: Սեղանի արկղում դիտողության թերթիկները տեղավորելիս նա հանեց տետրերն ու սկսեց թերթել:

— Ես ի՞նչ բաներ են,—ասաց Համիկը, նայելով վերնագրերին: «Պահպանողականների արշավանքը միջավայրի ազդեցության դեմ»...

Գուրգենը վեր թռավ տեղից:

— Վո՞րտեղից ձեռք ընկան այդ տետրերը,—ասաց նա կարմրելով. դա մի հողված է դարվինիզմի հարցերի շուրջը:

— Կո՞ւզես, էլ չեմ կարգալ. կարծում էյի դիտողություններ են, ուզում էյի կարգի բերել:

— Արդեն ուշ է արգելելը.— կարող ես շարունակել:

Համիկը շարունակեց:

«Կոլեկտիվը կենդանական աշխարհում»...

—«Եներգիայի կուտակումը բույսերի սերմերի մեջ կամ գեներտիկայի հեղաշրջումը»...

Գուրգենը սկսեց քայլել սենյակում: Ապա մոտեցավ Հասմիկին, վորը զարմանքով դիտում էր նրան, ու ձեռքը խրելով իր խիտ մազերի մեջ—ասաց.

— Զարմանալի յեռուն, նշանակալից ժամանակում ենք ապրում, ընկեր Հասմիկ,—մարդ ուզում է, հազար ուղեղ, հազար ձեռ ունենա, ամեն գործի հասնի... Մի կողմից մեջս վառվում է գիտության ծարավը,— գըլխումս վխտում են գենետիկայի հարցերը. թվում է, թե մի նշանավոր գյուտ պիտի անեմ, հեղաշրջում կատարեմ, հարյուրապատկեմ, բերքը... Մյուս կողմից ել մի ուրիշ ձգտում է գալիս մեջս—ուզում եմ վոտով-գլխով նվիրվեմ սոցիալիստական շինարարության գործնականին, վորից հեռու յե թվում ինձ գիտութունը...

— Յերևակայությունդ կրակոտ ձիու նման միշտ ավելի յե առաջ վազում, քան անհրաժեշտ է. պետք է ժամանակ առ ժամանակ մարակել նրան:

— Բայց այդ դեպքում նա ավելի հեռու կթռչի...

— Վոչ, նա կսթափվի ու կյանքի տեմպով կընթանա...

— Մի տո՛ւր այդ տետրը:

Գուրգենը վերցրեց տետրն ու սկսեց թերթել: Բայց բոպեաչափ աչք ածելուց հետո ձգեց սեղանի վրա ու նորից սկսեց քայլել:

Հասմիկը շարունակեց կարդալ:

— Ոհո՛, սա արդեն կարդից դուրս է,—ասաց նա ժպտալով—«Սերը կամ սեռը պայծառ արևի տակ.— չքողարկված խոհեր»...

— Չե՛, մի կարդալ,— կանգ առավ Գուրգենը,— գրանք թուղցիկ նկատողութուններ են...

— Վորոնք սպառնում են լուրջ տրակտատներ գառնալ և ամեն ինչ հեղաշրջել...

— Հեզնանքը Հասմիկի տարրերն է:

— Իսկ յերևակայությունը—Գուրգենի... յերբ այդ սիրո մասին հողվածդ վերջացնես, թույլ տուր վեր-

նագրի տակ, փակագծերի մեջ գրեմ—«ընկեր Գուրգենի հազար և մեկ հակասությունների մասին»...

— Իսկ դրա տակ յես կավելացնեմ—«ընկեր Հասմիկի հազար և մեկ քողարկումների շուրջը»...

— Թողնենք այդ մթնաշաղի պեղումները և անցնենք գործի.— քեզ սպասում է մանրադիտակը,— իսկ ինձ—փորձադաշտը... Մի բան միայն կուղեյի նկատել, հարգելի պրոֆեսորացու, վոր այս բոլոր հողվածները, նույնիսկ սիրո մասին—սկսած ու թողած են. յեթե այդպես շարունակես, ամբողջ կյանքդ կիսատ կմնա...

— Լավ պտուղն ուչ է հասնում...

— Անուրջնե՛ր և կամուրջնե՛ր... թեվերդ շատ ետ լայն արձակում, բայց մոռանում ես, վոր ամենաուշ հասնող պտուղը զկեռն է, վորի հասնելը միաժամանակ և փտել է նշանակում...

— Ճաշակիդ ի՞նչ ասեմ, յեղեմական պտուղները թողած, ընկել ես զկեռի յետևից:

— Մենք այսպես ասած, վոչինչ չունենալով ի պատասխան, խոսքը ձգում ենք կտուրը...

— Այո, մենք գինադադար ենք հայտարարում հարաբերությունները խիստ չլարելու համար...

— Ո՛հ, վորքան բարի յեք,— ասաց Հասմիկը ծիծաղելով ու դուրս գնաց:

Նրա գնալուց հետո Գուրգենը մի քանի բոպե լուռ քայլում էր, ապա հանեց պորտֆելից իր հուշատետրը, ու սկսեց գրել:

«Վորքան աղջիկներ կային քաղաքում, վորոնք այնպես թեթև եյին նայում իրենց փաղաքջանքներին, իսկ ինձ վիճակվել է մի ինչ վոր հանելուկային կարծրություն... Մեկ տեսնես—մոտ—մտերիմ է թվում, մեկ ել հանկարծ դառնում է խուռափուկ,— սնդիկի նման... վո՞րտեղ է վերջապես Հասմիկի կվիստ—եսեցիքան... Այսոր ել տետրերիս հասավ, իմացավ իմ կարծիքը սիրո մասին—վոր յես չեմ ընդունում... Այդպես որ—որի վրա յես մերկանում եմ իմ գաղտնիքներից, իսկ Հասմիկը մնում է անլուծելի մի սֆինքս»...

Նա դադարեց գրելուց ու գլուխն ավերի մեջ առած, նայում էր տետրին: Ապա վեր թռավ, ինքն իրեն ասե-

լով—«Ե՛հ, ի՞նչ եմ զգացումների յետևից ընկել... աշխատանք, գիտություն, սոցիալիստական շինարարություն... մնացածը խաղ ե...»

Ու նորից վրա ընկավ իր մանրադիտակին, ամբողջովին տարվելով գործով:

Իսկ Հասմիկն այդ ժամանակ գնում էր դեպի փորձադաշտն արևակեզ ճամբով ու մտածում Գուրգենի մասին.— «Ճիշտ է, նա արդեն ընտելացել է իր բնավորությանը, և գուտ-ընկերական հարաբերությունների սահմանից չի դուրս գալիս: Բայց նրա զգացումները լարված են. թվում է, թե ամեն բոլոր պատրաստ է «արտահայտվելու»... Իսկ յեթե այդ լինի, ի՞նչպես կլինի, մի՞թե իր հոգվածի «չքողարկված» ձևով... և ի՞նչ կհետևի այդ բոլորին»...

«Յերկու կին են պայքարում իմ մեջս. մեկը շարունակ ձգտում է մոտ լինել Գուրգենին, «քնքույշ մոմենտներ» է փնտռում, իսկ մյուսը խոթոռած դեմքով հետ է մղում նրան, հիշեցնելով ինչ վոր անդրդվելի պահանջներ»...

Նա մտամոխր անցնում էր դաշտով, տարրերինակ, յերևակայական վեճի բռնված Գուրգենի հետ, ճգնում էր համոզել նրան ինչ վոր իրեն,— Հասմիկի համար կարևոր հարցում, վորը Գուրգենը կարծես դժվարությամբ էր հասկանում:

Սոտերի խշիշոցը նրան սթափեցրեց. կանգ առավ, կարծելով թե ոճ է, բայց իսկույն նկատեց, վոր լորտուկն է անցնում սահուն գալարումներով: Վրա վազեց, բռնեց ու հետո յերկու ձեռքով պինդ պահելով սկսեց պիտել:

«Յեթե դու թույն ունենայիր, անշուշտ մարդիկ քեզ ավելի կհարգեյին» ասում էր մտքում Հասմիկը, դիտելով լորտուկի անոգնական, աղբրսող դեմքը.— «ոճի նման քո մեջ էլ իմաստության խորհրդանիշը, կտեսնեյին, Յեվայի և ամբողջ մարդկության մեղքի սկզբնապատճառը կհամարեյին, և վոչ թե անպատկառ ձեռներով կշոշափեյին քեզ»:

Լորտուկի հետզհետե ուժեղացող շարժումներից

սառսուռ զգալով, Հասմիկը բաց թողեց նրան ու շարունակեց ճանապարհը:

«Ձե՛, Գուրգեն, — շարունակում էր նա իր վեճը, — յես մարմին ու հաճույք չեմ, յես ուրիշ եմ... յես «փոքր ինչ թույն» եմ քեզ համար...»

«Փոքր ինչ թույն դեռևս անհրաժեշտ է նրա — տղամարդու մեջ նստած հին կենցաղի մնացորդների դեմ... չե՛, մինչև նա չգիտակցի իմ մեջ նստած յերկրորդ կնոջ, յես նրա մտերիմը չեմ լինել»...

Նա մտավ փորձադաշտն ու սկսեց իր սովորական դիտողությունները: Բայց հազիվ մի տաս բոլոր յեր անցել, յերբ նրա ախանջին հասավ խոսակցության ձայն: Հետ նայելով, նա նկատեց Միքայելին ու Գուրգենին, վորոնք միասին խոսելով մոտենում էյին:

— Վողջույններս, ընկեր Հասմիկ, — բարձրաձայն կանչեց Միքայելը:

— Բարև.

— Ի՞նչպես եք, դո՞հ եք մեր խորհանտեսությունից:

— Գոհ եմ, մանավանդ նրա համար, վոր այստեղ շատ բան կա անելու:

— Ա՛յ, դոչաղ աղջկա խոսք եմ լսում... բայց չմոռանանք, վոր միայն ձեր պրակտիկայով չպիտի սահմանափակվեք. մենք մի ուրիշ կարևոր գործ էլ ունենք անելու.— մոտակա գյուղերից մեկում պետք է կոլխոզ հիմնենք, մենք նրա շեֆն ենք. չգիտեմ Գուրգենն ասել ե՞, թե չե:

— Ասել է, և յես էլ իմ պատրաստակամությունն եմ հայտնել:

— Լա՛վ, շատ լավ. ուրեմն ընկերներ, դուք յերկուսով կլինեք ավանդարդը, իսկ յես էլ կդամ ձեր յետևից, վորպես արիյերգարդ. Նախապատրաստական աշխատանքը վերջացնելուց հետո կդիմենք գործի...»

— Սոցարչավի յեռյակը հայտարարում եմ կազմված, — ասաց Գուրգենը, — վորոչումը կայացած է:

— Ստորագրում եմ, — ասաց Հասմիկը:

— Յես ել հաստատում եմ ստորագրությամբ և դաշտային կնիքով... Իսկ այժմ, ընկերներ, սկսենք մեր փորձադաշտի կոլեկտիվ ուսումնասիրությունը...

6.

Արդեն մի շաբաթ եր, Գուրգենն ու Հասմիկը բանակցությունների մեջ եյին գյուղի հետ, — կոլտնտեսություն հիմնելու առթիվ: Նրանք շտապում եյին, իսկ Միքայելը շարունակ հետաձգում եր, պատճառ բերելով, թե պիտի նախորոք ուսումնասիրել գյուղի պայմանները, բայց նրա միտքն ուրիշ եր, — նա ուզում եր կազմակերպել «արշավը» գյուղատնտեսական մեքենաների ուղեկցությամբ, վորոնք նորոգվելու կարիք ունեյին: Այս կետի մասին նա չեր հայտնում Գուրգենին ու Հասմիկին, ցանկանալով նրանց հանկարծակի բերել մեքենաների հանդիսավոր յերթով:

Վերջապես Միքայելը հայտնեց, վոր կարելի յե սկսել «սոցարշավը»: Այդ օրը Գուրգենն ու Հասմիկն արտակարգ հուզման մեջ եյին. շարունակ ողջովում եյին ամեն մի առիթից, վոր թողնեն գործն ու խոսեն կոլխոզի մասին:

Նրանք յերկուսով դուրս յեկան խորհանտեսությունից իրիկնադեմին: Վորոշված եր ժողով հրավիրել գյուղում յերեկոյան: Միքայելը պիտի դար առանձին:

Չով որ եր. թեթև քամին ծփում եր հասած արտերի վրայով, հետը բերելով թարմ ծղուտի բուրմունքը:

— Ի՞նչ ես վազում, Գուրգեն, — ասաց Հասմիկը ծիծաղելով. — կարծես հրդեհի յես շտապում:

— Իսկ դու ի՞նչու յես ծիծաղում. դա ավելի յե կասկածելի:

— Յես նայում եյի յետևիցդ ու մտածում, թե բնա. վորությանդ վո՞ր գծերը կծաղրեն ապագայում, յերբ պրոֆեսոր կդառնաս:

— Ոհո՞, դեռ պրոֆեսոր չդառած արդեն ավանսով ծաղրում ե՞ս:

— Ի՞նչ կա վոր. դա մի սովորական յերևույթ ե.

ամեն մարդ ծիծաղելի յե դառնում այն մոմենտից, յերբ նրա բնավորության գծերն ընդհանուրի սեփականություն են դառնում:

Ե՞հ, թող հաջողվի պրոֆեսոր դառնալու, համաձայն եմ մի քիչ ել ուսանողների բերանում ծամոն դառնալ. իսկ յեթե Հասմիկը լիներ ուսանողների մեջ, իսկի յել չեյի նեղանալ:

— Ինչո՞ւ դեպի ինձ այդպիսի բացատրություն:

— Դեպի քեզ յես առանձին վերաբերմունք ունեմ...

— Ելի ընկար չեղում-գեղումների մեջ. չես ել նկատում, վոր քայլերդ քեզ հակասում են. շարունակ առաջ ես ընկնում, թողնում ես ինձ միայնակ...

— Այո, ընկեր Գուրգենի քայլերն են հակասում, իսկ ընկեր Հասմիկի լեզուն...

— Դա շատ համարձակ հիպոտեզ ե, — ասանց գիտական հիմունքների. յես ել քո վերաբերությամբ մի հիպոտեզ ունեմ, վոր ավելի մոտ ե ճշմարտության:

— Այսի՞նքն:

— Ինձ թվում ե, վոր ընկեր Գուրգենը, չնայած իրեն նոր ու նորադույն մարդ ե համարում, դեռ չի ազատագրվել հին կենցաղի հոգեբանությունից, ինչպես և նրա հետ շատ տղամարդիկ:

«Փորձում ե», — անցավ Գուրգենի մտքով:

— Ինչ վոր պահած բաներ ես դուրս բերում, — ասաց Գուրգենը. — անսպասելի գյուտեր ես անում. — յեթե քո ասածը ճիշտ ե, նա վերաբերում ե ընդհանուրին, ուրեմն կինը նույնքան խճողված ե հին կենցաղով, վորքան և տղամարդը:

— Բայց դուումը պիտի սկսել տղամարդուց, վորպես նախկին իշխողից... մի բանաստեղծի ասելով, կինը վոչ միայն բնության ստեղծածն ե, այլ և տղամարդու յերևակայության... ահա. այդ «յերևակայող» տղամարդը տեսականում կնոջը դարձրել ե մի «յերկնային» եյակ, իսկ իրականում — միայն իր հավելվածը...

— Այո, առաջ այդպես եր, իսկ ա՞յժմ:

— Իսկ այժմ յենթադիտակցական ծաղրերում դեռ

չարունակվում է նախկին «հավելվածային» վերաբերմունք:

— Ուրեմն յես, վորպես տղամարդ, մահացու մեղքեր եմ ունեցել... իսկ ինձ թվում է ընդհակառակը, վոր դու տարված ես հիվանդագին ինքնասիրությամբ,—տղամարդու ամեն մի խոսքը քեզ թվում է կնոջ իրավունքների խախտում... Դա նշանակում է, վոր դու հոգեբանորեն դեռ չես մարսել կնոջ և տղամարդու հավասարությունն ու ընկել ես հակառակ ծայրահեղության մեջ, ստեղծելով կնոջ մասին մի ուռճացած կարծիք...

— Հրաշալի յես վիճարանում Գուրգեն. ուղղակի հարձակումներս հետ ես տալիս, ինձ մեղադրում ես, փոխանակ արդարանալու...

— Իմ ասածը զուտ ճշմարտություն է,—յեթե առաջ կար նեղ-տղամարդկային մոտեցում, այժմ հանձինս Հասմիկի արտասահմանում է նեղ-կանացի մոտեցումը. պետք է ընդունենք, վոր կինը—իր «յենթադիտակցական ծալքերի» շնորհիվ դեռևս չի կարողանում հարմոնիզացիայի յենթարկել իր զգացումներն ու ընկերական հարաբերությունները:

— Ոհո՛, դու դեռ պրոֆեսոր չդառած, արդեն կեղծ վկայություններ ես տալիս գիտության մասին:

Նրանց վեճն ընդհատվեց յետևից յեկող ավտոմոբիլի թավ ու յերկար սուլոցը: Նրանք փութկոտ քաշվեցին ճանապարհի մի կողմը, ու յերկուսն ել հանկարծ բացականչեցին.

— Ընկեր Միքայելն է...

Ավտո-ապրանքատարը դալիս եր, յետևից քաշելով կարսելու մեքենան. ապա դալիս եր տրակտորը, վորը քաշում եր հնձելու մեքենան:

Ավտոյի շոֆերի կողքին նստած եր ընկեր Միքայելը:

— Վահ, ա՛յ, քեզ անակնկալ. ես ինչ մեքենայական յերթ եք կազմակերպել, ընկեր Միքայել,—ասաց Գուրգենը մոտենալով ավտոյին, յերբ նա կանգ առավ:  
— Սա մեր սոցարչավի արտիլլերիան է. առանց այս

ծանրակշիւ արգումենտների ձեր ենտուզիազմը կարող է շուր կտրել:

— Դա ի՞նչ աջ-թեքումային մտքեր են:

— Թող կոլխոզը դլուխ դա, հետո ուզում ես աջ թեքման մեջ մեղադրիր, ուզում ես—ճախ... իսկ դու են ասա, ի՞նչպես է ձեր ենտուզիազմը...

— Մեր ենտուզիազմը...ամբողջ ժամանակ վեճի մեջ ելինք:

— Ինչի՞ մասին:

— Նոր կնոջ մասին:

— Կոլխոզո՞ւմ:

— Վոչ, ընդհանրապես...

— Ո՛ր, ամոթ ենտուզիաստներին. դա ուղղակի դավաճանություն է, ինտելիգենտություն է. շուտ արեք բանվոր մտեք, թե չե բաններդ բուրդ ե... դե՛, նստեք ավտոն. տե՛սքերից շեղված մարդկանց մեքենան կշակի...

— Ընկեր Միքայել, հակաճառելու շատ բան ունեմ, բայց առայժմ հետաձգում եմ,—ասաց Գուրգենը:

Գուրգենը Հասմիկի հետ նստեցին ավտոն: Մեքենան նորից շարժվեց, խուլ աղմուկ հանելով:

— Տեսա՞ր, ընկեր Հասմիկ,—ասաց Գուրգենը.— նկատողության արժանացանք. բայց շեղման պատճառը դու ելիր, թեպետ և տապալվեցիր վեճի ժամանակ:

— Ընդհակառակը, ընկեր Գուրգենը տապալվեց, ու նեղն ընկնելով, դիմեց դեմագոգիայի:

Գուրգենն ել չկարողացավ պատասխանել, վորովհետև ավտոն ինչ վոր փոս ընկնելով, սաստիկ ցնցեց նրանց: Յերկուսն ել սկսեցին քրքշալ:

Մի քառորդ ժամից հետո նրանք արդեն գյուղումն ելին:

Արտասովոր յերթը նկատելով, գյուղի յերեսաները խումբ-խումբ վազում ելին մեքենաների հետևից, իրենց ճչերով ավելի ուժեղացնելով աղմուկը: Իրիկնա-

դեմի յերկար ստվերներում նստած հատ ու կենսա՝ ծե-  
րունիները վեր ելին կենում տեղերից ու զարմանքով  
նայում, ապա դանդաղ քայլերով դիմում դեպի գյու-  
ղի կենտրոնը, — իմանալու, թե «ի՞նչ խաբար ե»։ Չրի  
գնացող կանայք պլշած, չեղ հայացքով դիտում ելին  
նորեկներին։

Մեքենաները կանգ առան դյուղի հրապարակում,  
դպրոցի առաջ։ Իջնելուն պես Միքայելը մարդ ուղար-  
կեց դյուղխորհրդի նախագահի յետեից, ապա նկատե-  
լով, վոր հետաքրքրվող դյուղացիները հետզհետե  
խմբվում են իր շուրջը, սկսեց բացատրություններ տալ  
մեքենաների մասին։

Արևը մայր եր մտնում։ Ամառվա յերեկոյի այն  
ժամերն ելին, յերբ ցերեկվա շողից թմրած դյուղը նո-  
րից արթնանում, աշխուժանում է։ Կանայք շտապ-  
շտապ շուր ելին կրում կժերով, կամ ավելում բակերը.  
փողոցներով անցնում ելին կանաչ խոտ բարձած ձիա-  
ներն ու եշերը, շուրջը տարածելով նոր հնձած խոտի  
թարմ բուրմունքը։

Գուրգենն ու Համիկն անց ու դարձ ելին անում մո-  
տակա նեղ փողոցներով, դիտելով տների բակերը։ Մի  
տան առաջ նրանք կանգ առան։ Աշխատանքից նոր վե-  
րադարձած դյուղացին յերկու ձեռով բռնած իր փոքրիկ  
յերեխային, վեր-վեր եր թոցնում, մեծ դվարձություն  
պատճառելով նրան։ Յերեխան անընդհատ քրջում եր,  
ու ձեռները շարժում։ Կինը քլթքլթացնելով շուր եր ա-  
ծում կժից պղնձի մեջ, աղջիկն ավելում եր բակը, սաս-  
տիկ փոշի բարձրացնելով, իսկ պառավ նանը կովն եր  
կթում։

— Ահա քեզ մասնավոր սեփականության իդիլ-  
լիան, —ասաց Գուրգենը, — սեփական տուն, սեփական  
պարտեզ ու այգի, սեփական կով, և այլ բարիքներ...  
միանգամայն կարելի յե հիանալ...

— Բայց ավա՛ղ, այդ իդիլլիան իր վերջավույսն է  
ապրում... մի նայիր, յերեխան լավիկն է, չե՞։

— Հենց այդ լավիկն էլ մեծանալուն պես քար է  
ձգելու մասնավոր սեփականության գլխին։

Նկատելով նորեկներին, դյուղացին դադարեց յե-

րեխայի հետ խաղալուց ու զարմացած նայում եր  
նրանց, կարծելով թե իրեն մոտ են յեկել։ Անհարմարու-  
թյուն զգալով այդ անհանգիստ հայացքից Գուրգենն ու  
Համիկը հեռացան, վերադառնալով նորից դեպի հրա-  
պարակը։

Այնտեղ արդեն բազմությունը լցվել եր։ Տիրում եր  
մի կայտառ ժխոր, վորի լեյա-մոտիվը կազմում եր ավ-  
տոյի ու տրակտորի խուլ դղրդոցը։ Միքայելը դիտմամբ  
գործի յեր դրել մեքենաները, իր «արտիլերիային» հաղ-  
թական տոն տալու համար։

Վերջապես կեկավ դյուղխորհրդի նախագահը, —  
մոտ յերեսուն տարեկան, դեմքն արևից այրված ու  
անխնամ մազակալած. նա ամոթխած բարևեց Գուրգե-  
նին ու Համիկին, ապա ամբոխը ձեղքելով, մոտեցավ  
Միքայելին, վորն այդ բոպեյին բացատրում եր տրակ-  
տորի մասերը։

— Բարև, բարև, — բացականչեց Միքայելը, ձեռք  
տալով նախագահին. — ահա, ինչպես տեսնում ես — յե-  
կել ենք. ժամանակը կարճ է, պիտի շուտով սկսենք ժո-  
ղովը։

Ապա մի կողմ քաշելով նախագահին, հարցրեց  
ցածր ձայնով.

— Իմաց ես արե՞լ աղերանց. չքավորականների ժո-  
ղով արել ե՞ս։

— Հա, ինչպես չե, հիմա յել յես ինքս եմ ասել  
ամենքին։

Շուտով յեկան դյուղի դեկավար ընկերներն ու բա-  
րեկելով նորեկներին, շրջապատեցին նրանց։ Գյուղա-  
ցիներն ու շաղբությամբ դիտում, շոչափում ելին մե-  
քենաները, կամ անկարգ խմբվելով, սպասողական հա-  
յացքով նայում ելին հյուրերին, ցածր ձայնով զանա-  
գան նկատողություններ անելով իրար մեջ։ Գյուղի  
քահանան թագնվել եր հաստ չինարու յետևն ու դաղ-  
տազողի դիտում եր անցուղարձը։

— Հը, ի՞նչպես է մեր սոցիալիստական սեկտորի  
տրամադրությունը, — հարցրեց Գուրգենը բջիջի քար-  
տուղարին։

— Վոչինչ, լավ է, պատասխանեց քարտուղարը,

իր նիհար դեմքի կասկածոտ հայացքը հառելով Գուրգենի վրա, կարծես իմանալու համար, թե ինչ մտքով է հարցնում:

Փոքր ինչ գրուցելուց հետո գյուղխորհրդի նախագահն ասաց.

— Դե, ընկերներ, կարող ենք սկսել ժողովը:

Նրանք ներս մտան դպրոցի դահլիճն ու շարվեցին բեմի սեղանի շուրջը: Մի խումբ գյուղացիներ շտապով ներս գնացին նրանց յեակից ու գրավեցին առաջին կարգերի նստարանները: Մյուսներն ավելի դանդաղ, հետադհետե լցվեցին դահլիճը, բերելով իրենց հետ դրսի աղմուկն ու դաշտային աշխատանքի քրտնքի հոտը, վորով ծծված ելին նրանց շորերը: Նստարանների վրա այլևս տեղ չկար. նոր յեկողները խմբվում ելին դահլիճի յեակը, կամ միջանցքներում:

Աղմուկը հետզհետե կենտրոնանում եր մի կետում, փորտեղ յերկու խումբ վեճի ելին բռնվել իրար հետ: Դրսից լավում եր մեքենաների աղմուկը:

Լուսնի խոշոր բոլորակն յերեւոյ սարերի յեակից ու յերեկոյան մթնաշաղն աննկատելի կերպով միացավ նրա մեղմ շողերի հետ: Բակում ժվժվում ելին յերեխաները, յերբեմն մազլցելով պատուհանների վանդակներով ու հետաքրքիր հայացքներ նետելով դահլիճի ներսը: Պատուհանների տակ խմբվել ելին գյուղի կանայք ու ճչում-աղմկում ելին տարորինակ իրարանցման մեջ:

Հավեց զանգի ձայնը: Դահլիճը ներս բերին յերկու լամպ, մեկը դրին բեմի սեղանի վրա, մյուսը կախեցին պատի մեխից: Նախագահը կանգնած փոքր ինչ սպասեց, դիտելով իր սովոր աչքերով դիմացի հասարակութունը, մտքում գուշակելով, թե ի՞նչ յելք կստանա ժողովը, ապա սկսեց փոքր ինչ շփոթվելով հյուրերի ներկայությունից.

— Ընկերներ, ձեզ բոլորիդ հայտնի յե, վոր ամեն տեղ հիմնում են կոլեկտիվ տնտեսություններ, իսկ մեր գյուղը հետ ե մնացել եղ ծրագրից. պատճառը նա յե, վոր մեզ մոտ մի շարք կուլակ ելեմենտ-տարրերն իրենց մութը պրավակացիայով մոլորեցնում են չքավոր ու միջակ գյուղացիներին, վոր նրանք հետ կենան կու-

խողներից: Հիմի ի՞նչ ե մեր անելիքը՝ մենք պետք ե առաջ տանենք սոցչինարարության գիծը, պետք ե միջոցներ ձեռք առնենք եղ մութն ելեմենտ տարրերի դեմ, ու ասենք չքավորներին ու միջակներին.— ահա այս ե մեր իսկական խորհրդային ծրագիրը. ես հարցում աջակցելու համար մեզ մոտ հյուր են յեկել ընկերները. նրանք ոգնելու յեն մեզ վոչ միայն իրենց խորհուրդներով, այլև գործով,—ինչպես տեսնում եք, իրենց հետ բերել են գյուղատնտեսական մեքենաներ: Ընկերները կբացատրեն ձեզ կոլխոզի նշանակությունը: Այժմ կխոսի ընկեր Գուրգենը:

Գուրգենը, հանկարծակի գալով իրեն անունը տալուց, տեղից վեր թռավ, անսպասելի հարցից շփոթված աչակերտի նման. մի քանի վայրկյան նա հայացքն ուղղեց ունկնդիրների վրա, ու ձեռքով անգիտակցաբար շոյելով յերկար մազերը, սկսեց.

— Ընկերներ, մենք յեկել ենք ձեզ մասնակից անելու այն սոցիալիստական շինարարությանը, վորը ծափավում ե մեր ընդարձակ Միության մեջ: Խորհրդային իշխանության առաջին որերից ամենքի համար պիտի պարզ լիներ, վոր պրոլետարիատի հաղթանակը նշանակում ե սոցիալիզմի հաղթանակ, ու յեթե այդ սոցիալիզմի յերթը մինչև այժմ հապաղել ե գյուղացիական սեկտորում, դրա պատճառն այն ե, վոր պրոլետարիատի լծակիցը,—գյուղացին, իր հետամնացության պատճառով չի կարողացել մի անգամից թափ տալ իրենից հին կյանքի ժառանգությունը: Իսկ այսոր արդեն մեր չքավոր ու միջակ գյուղացիությունը դիտակցում ե իրեն շահերը, և գյուղի սոցիալիստական շինարարության հենարանն ե կազմում: Բայց մենք դեռևս ունենք գատակարգային թշնամիներ—կուլակներ, ունենք և անհատներ, չքավոր ու միջակ գյուղացիների մեջ, վորոնք իրենց անգիտակցության շնորհիվ յենթարկվում են նրանց: Ինչ վերաբերում ե կուլակներին, մենք գիտենք, վոր հետզհետե ցամաքեցնելով, կտրելով շահագործման այն հյուսիսը, վորոնք նրանց կյանք են տալիս, կդարձնենք նրանք արհամարհելի մի ուժ. իսկ անգիտակից չքավորներին ու միջակներին դեռևս պիտի անդուլ հա-

մողենք խոսքով ու գործով, ցույց տանք իրենց դասա-  
կարգային խակական ուղին...

Հետզհետե խորանալով հարցի մեջ, Գուրգենը  
կանգ առավ կոլտնտեսութեան նշանակութեան վրա,  
պարզեց նրա գերազանց հանրագուտ ուժը թե տնտեսա-  
կան, թե կուլտուրական ասպարեզներում: Ապա նա դի-  
մեց բատրակներին ու չքավորներին, հրավիրելով նրանց  
հիմք դնել կոլխոզի, ու հետզհետե լայնացնելով իրենց  
չարքերը, ամբողջ գյուղը դարձնել կոլտնտեսութեան  
մի խոշոր բջիջ:

— Ընկերներ, վերջացրեց նա իր խոսքը—մենք աշ-  
խատում ենք ծանր պայմաններում—դրսից շրջապատ-  
ված կապիտալիստական ուժերով, իսկ ներսից—դասա-  
կարգային թշնամու մնացորդներով. բայց պրոլետա-  
րիատի հզոր շարքերի առաջ չի կարող փակ մնալ և վոչ  
մի դուռ. մենք հաղթում ենք, և կհաղթենք.

Թնդացող ծափահարությունները վողեւորեցին  
Գուրգենին. ինքնամոռացութեան մեջ, նա ժպտաց իր  
կողքին նստած Հասմիկին, թաշկինակով սրբելով ճա-  
կատի քրտինքը: Հասմիկի փոխադարձ ժպիտը նրան  
ավելի թեւավորեց. այդ ժպտի մեջ նա տեսնում էր քա-  
ջալերում, հավանում, և վոր գլխավորն է, մի նոր, ու-  
րիշ մտերմություն: Մի պահ նա կարծեց, թե իր ճառի  
չնորհիվ կոլխոզի հաջողությունը ասպահովված է, բայց  
հենց վոր ծափահարությունները դադարեցին, մեկ-մե-  
կու յետեից լավեցին հիասթափիչ ձայները.

— Մեզ պետք չի կոլխոզը... ուզում չենք...

Նախագահը խեթ նայեց հետեի շարքերին ու զան-  
դահարելուց հետո ձայն ավեց Միքայելին:

— Ընկերներ, նախագահը ձեզ բացատրեց մեր գա-  
լու նպատակը, ասաց Միքայելը, մտերմական գրույցի  
տոն տալով իր ձայնին—ճիշտ է, մենք յեկել ենք ձեզ  
ոգնելու, բայց մի ուրիշ կերպով. —մենք ուզում ենք մի  
ենպես հիմնավոր գործ բռնենք, վոր միանգամից ձեր  
ձեռքից բռնի, վեր քաշի: Շատ անգամ եմ ձեզանից լսել,  
թե ռանչպարությունը մենակ մարդու գործ չէ. բայց  
ի՞նչ կասեք, յեթե ձեր ուզած չորս-հինգ մարդու տեղ  
հարյուրավոր մարդիկ միասին աշխատեն. ահա ես կո-

յեկալիվ գործն է, վոր ձեզ թե կտա, ձեր ուժը շատ և  
շատ անգամ կավելացնի...

Միքայելը սկսեց բացատրել կոլեկտիվի առավելու-  
թյուններն անհատ տնտեսութեան հանդեպ, ապա անցավ  
մեքենաներին, որիննակներով ու թվերով բացատրելով  
մարդու և մեքենաների աշխատանքի տարբերությունը:

— Հիմի յես ձեզ հարց եմ տալիս,—չարունակեց  
նա,—ուզում ե՞ք, վոր ձեր աշխատանքը մեկի տեղ տասն  
անգամ ավելի արդյունք տա:

— Ուզում ենք,—վրա տվավ մոտիկ նստածների մի  
խմբակ:

— Ուզում ե՞ք ձեր աշխատանքի տերը լինել, ազատ-  
վել կուլակների շահագործումից:

— Ուզում ենք,—նորից լավեց նույն խմբակի կող-  
մից, բայց իսկույն այս ու այն կողմից ձայն ավելին.

— Ձեք ուզում կոլխոզը... մեզ հարկավոր չի...

Ձայները հետզհետե սաստկացան: Նախագահը շա-  
րունակ զանգահարում էր, բայց չէլին հանդարտվում:

Յերբ աղմուկը փոքր ինչ մեղմացավ, Միքայելը  
բարձր ձայնով առաջարկեց.

— Ընկերներ, ձեր միջից ձայներ են դալիս, մինն  
ասում է—ուզում ենք, մյուսն ասում է—չենք ուզում,  
բայց բանը բղավելով չի, բանը համոզելով է. թող եզ  
հակառակները բացատրեն մեզ, թե ի՞նչու չեն ուզում.  
կարելի չէ թե նրանք մեզ համոզեն...

Գուրգենը ջղայնորեն ձեռքը շարժեց ու ասաց. Հաս-  
միկի ախանջին.

— Ելի ընկեր Միքայելն իր հին մեթոդը գործա-  
դրեց. հիմի ամեն ինչ շիլափլավ կդառնա:

Դրսի աղմուկն սկսեց սաստկանալ, ու բոլորի ու-  
շադրությունը գրավեց. խառը ձայներով կանայք ու  
յերեխաները կանչում էլին.

— Ձե՛նք ուզում կոլխոզ, կո՛րչի կոլխոզը...

Շուտով կանայք խմբով ներս մտան, հետեի շար-  
քերի մոտ փոքր ինչ կանգ առան ու սկսեցին ճվճվալ,  
ապա առաջ անցան ծանր քայլերով, ու կանգնեցին բե-  
մի առաջ, անկարգ խմբվելով: Նոթերը կիտած, սպառ-

նալից հայացքով, նրանք գլուխները սովորականից ավելի բարձր եյին պահում, բայց խուսափելով դեմ առ դեմ նայելուց:

Նախագահը նկատեց խմբի մեջ իր կնոջ ու հուզմունքից կարմրեց. սաստիկ զրգռումից նա կուզեր կնոջ ձեռքից բռնել ու դուրս քաշել դահլիճից, բայց գիտեր, վոր այդ անկարելի յէ, ու այդ անկարողությունից տանջվում էր, ասես փշերի վրա յեր նստած: «Չէ, եդ անզգամից պիտի բաժանվեմ, — մտածում էր նա, — ել համբերություն չկա. խայտառակ արավ ես ընկերների մոտ»:

Նրան թվում էր, թէ վոչ միայն գյուղի ընկերները, այլև նորեկները, գիտեն, վոր իր կինը դիմացը կանգնած է:

Մի պառավ կնիկ նշանով մոտ կանչեց նախագահին ու քթկալը յետ քաշելով ասաց.

— Սրտիդ մուրազը կատարվի, — բալաս, վորդու կերանցդ բաղդին արժանանաս, մի հարցրու եդ քաղքից յեկած տղերանց, մեր Համբարձումին յե՞րբ բաց թողնելու. ես ա յերկու ամիս ա խաբար չկա...

— Քո գործը ետեղ չի, նանի, պետք է դատախազին, պրոկուրորին դիմես, ասաց նա կտրուկ ու ելի հետ զնաց իր տեղը:

Սակայն նանին չհամոզվեց ու գլուխը ամամբացնելով քաշվեց մի կողմը:

Բուպեաչափ լուսթյունից հետո, նախագահը հարցրեց դեմքը խոժոռած:

— Ինչի՞ համար եք յեկել, ընկերներ:

Կանանցից մեկը, արդեն տարիքն առած մի կին, բորձոսահասակ ու նիհար, վոսկրոտ դեմքով, առաջ յեկավ.

— Մենք ուզում չենք կոլխոզը. տարեք ձեր պրտկերես բողաքի աղջկերանց նստացրեք ենտեղ...

Համբիկը նրա աքածի վրա շիկնեց ու աչքերը խոնարհեց իր առաջի թղթերին, ապա դարձնելով հայացքը Գուրգենի ժպտացող դեմքին, ինքն ել սկսեց ժըպտալ: Մյուսներն անհարմար դրության մեջ եյին. զգում էյին, վոր պետք է պատասխանել, բայց մտածում էյին

և այն, վոր չարժե վեճի բռնվել հին կենցաղի կանանց հետ:

Փոքր ինչ հանդիսավոր պաուզայից հետո կինը յետ դարձրեց յերեսը, ու կարծես նշան տալով, նորից նայեց բեմի կողմը. մյուս կանայք վրա տվին իրար խառնելով:

— Ուզում չենք կոլխոզը... տարեք ձեզ ըլի, չենք թողնել...

Տիրեց սպասողական, ծանր լուսթյունը. նախագահը, նկատելով, վոր ել չեն խոսում, ասաց, առանց նայելու նրանց վրա.

— Լավ, մենք կքնենք ձեր խնդիրը. դուք նստեցեք...

Բայց կանայք չնստեցին. նրանք խիտ խմբով, համարյա իրար կպած, դուրս յեկան, նորից կանգ առնելով բուպեաչափ հետևի շարքերի մոտ ու սազերի նման անկարգ ճչալով:

8

Մի քայելից հետո խոսողը պիտի լիներ Համբիկը, բայց չըջկոմի քարտուղարն առաջարկեց նրան զնալ բակը և պրոպագանդ մղել կանանց մեջ: Համբիկը վեր կացավ ու արագ քայլերով դուրս զնաց:

Դահլիճում, ընդհանուր ադմուկի մեջ մի քանի հոգի մատ էյին բարձրացրել, խոսք էյին խնդրում:

— Գյուղի կուլակներից առայժմ յերեք հոգի յեն յեկել, — ասաց բջիջի քարտուղարը Գուրգենի ականջին. — նրանք իրենց տեղ ուղարկել են միջակներին և յենթակուլակներին: Հիմի նրանց ենք ձայն տալիս, վոր պեսդի որդակի մեջ առնենք:

— Խոսքը պատկանում է ընկեր Հովակիմին, — ասաց նախագահը:

Տեղից սկսեց խոսել մի գյուղացի, խոշոր ու վոսկրոտ դեմքով, հագած թեպետ հին, բայց խնամքով պահած չուխան: Նա նայում էր թեք հայացքով դեպի աջ, իր լայն ու խիտ բսած սև մորուքը դուրս ցցած կարծես նա բոլորի գլխների վերևով դիմում էր մեկին, վորը ժողովից դուրս էր նստած:

— Ենպես, վոր մենք շնորհակալ ենք, վոր կառավարութիւնը մտածում ա մեր մասին. բայց մեզ հարկավոր չի կոլխողը: Որինակի համար ասենք, յես աշխատավոր մարդ եմ, առավտը վաղ, մութը-մութը վեր եմ կենում, գնում գործի. իսկ մեր մեջ ենպես թամբալներ կան,—որը ճաշ ա դառնում, նոր են աչքերը տրորում, վեր կենում: Հիմի յեթե բերենք իրար խառնենք թամբալին ու աշխատավորին, նրանց ունեցածը հավասարացնենք, ի՞նչ դուրս կգա, են դուրս կգա, վոր էչը կդատի, ձին կուտի. եդ կոլխողը, վոր կա, թամբալների համար ա. դրանից մենակ խանդարմունք առաջ կգա.—թամբալը չի լավանալ, իսկ են լավի, աշխատողի ձեռներն ել կթուլանան.—նա յել կասի—ինչի՞ յեմ չարչարվում ուրիշի համար: Հիմի իմ ասելս են ա, վոր թողեք ամեն մարդ իրան տան, իրան ունեցածին տեր ըլի, են ժամանակ ամեն բան լավ կգնա...

Հանկարծ մեկը գիլ ձայնով նրա խոսքը կտրեց.

— Եդ վո՞նց ա, յերբ յես քու բատրակն եյի, յես բանում եյի, դու մտիկ եյիր անում, թամբալը դու չեյիր, ուրիշ եր... թե կուզես,—թամբալը նա ա, ով որ ուրիշի աշխատանքով ա ապրում:

Գյուղացին լայն յերեսը դարձրեց նրա կողմը, ուզեց ինչ վոր ասի, բայց նրա ձայնը խլացրին, սկսեցին ամեն կողմից վրա տալ նկատողութիւններով.

— Բա վոր մանեթին մանեթ շահ եյիր առնո՞ւմ, միտդ չի՞:

— Մշակի հախը վո՞նց եյիր կտրում...

Գյուղացին, նկատելով, վոր իրեն բուրդը դրելու յեն, ձեռնառու համարեց լռելն ու նստեց, տապ արալ: Բայց այդ ել չողնեց—դուրս յեկալ խոսելու իր նախկին բատրակ Յերվանդը:

— Ընկերներ,—ասաց նա.— եստեղ մեզ ասում են, թե կոլխող հարկավոր չի. բայց օ՞վքեր են ասողները.— կուլակները կամ կուլակի մարդիկ. դրանց համար, ի՞նչ ասել կուզի, չի հարկավոր վոչ կոլխող, վոչ ել խորհրդալին իշխանութիւն. դրանց համար միայն հարկավոր ա, վոր ամեն բան մնա իր առաջվա տեղը,—վոր իրանք տեր ըլեն, մենք նոքար. բայց եդ հին դովրն ան-

ցալ: Ձեզ համար կոլխողը մահ ա, գնացեք ձեր գլխներին վայ տվեք, իսկ մենք չքավորներս ու բատրակներս ուզում ենք, վոր կոլխող լինի, և մեր ուզածն ել կանենք...

Նրա խոսելու վրա հետեի շարքերից ձայն տվին.

— Ե՛ք խելքով միշտ չքավոր կմնա...

— Շատ ա հասկանում. խելքին զոռ ա տալիս...

— Փիլիսոփա ա դառել գլխներիս:

Բատրակ Յերվանդը խիտ հոնքերը խոփոռած, իր տեղից արհամարհող հայացքով նայեց հետեի շարքերին ու ասաց հեզնող շեշտով.

— Ինչքան ուզում եք. վոռնացեք, ձեր հայ-հայը պնացել ա, վայ-վայը մնացել...

Աղմուկը դեռ չեր դադարել, յերբ բեմին մոտ յեկալ մի գյուղացի, գլխարաց, կեղտոտ քաթանի շապիկ հագած, յբոբիկ վոռները արեխների մեջ ձգած: Նրա շապիկի վզկապը բաց եր թողել, ցուցադրել իր կրծքի մուլախոտի նման իրար կծկված մազերը: Հինգ մատը միանգամից բարձրացնելով, նա մոտենում եր. մեծ քիթը ցից արած, մանր աչքերը մեծամտորեն հառելով նախագահի վրա.

— Ոոսք եմ ուզում. տալիս ե՞ք թե չե, բղավում եր նա այնպես բարձր, ասես մի սարից մյուսն եր ձայն տալիս:

— Ոոսիր տեսնանք,—ասաց նախագահը, հազիվ գոսելով իր բարկութիւնը:

Գահլիճի ուշադրութիւնն անցալ խոսողի վրա, և աղմուկը դադարեց:

— Եդ վոր դուք ասում եք, թե կոլխող գրվեցեք, իսկի մեր անճարներիս դարդը քաշում ե՞ք, թե չե. դուք քաղաքում լավ ուտում-խմում եք, լավ հագնվում ու դալիս մեզ ասում, թե ընկեր-հընկերներ, յեկեք կոլխող մտեք. (այս ասելով նա նայեց Գուրգենի վրա). ա՛յ, թե վոր դուք մեզ հնգեր եք, ձեր լավ իստակ պինջակն ինձ տվեք, ձեր չաղ ոտիկն ել հետը, իսկ իմ մաշված, քրտնակեր շապիկը դուք հագեք, ա՛յ են ժամանակ յեկեք միասին աշխատենք, կոլխող սարքենք... թե վոր եդ կոլեկտիվը լավ բան ա, ինչի՞ չեք քաղաքում

սարքում. յեկել եք գեղի վրա չոքել... չե՛, մենք ել չենք ուզում կոլխոզ, մենք ուզում ենք ձեզ նման ուտել-խմել ու սիրուն աղջկերանց հետ ման գալ...

— Դրուստ ա ասում, —բղավեցին հետևի շարքերից:

Նա կանգ առավ, ինքնաբավական հաղթական հայացքով հետ ու առաջ նայեց և թվում էր, թե ելի պիտի շարունակի, բայց նրա վրա յել թափվեց ուսուցիչների անձրևը.

— Յեղոտանց Սարո, եդ յե՞րբ չքավոր դառար:

— Շորերը տանը թողել ա, տկոթ ա յեկել:

— Շահունց Մարգարի արաղը լավ թունդ ա կպել...

Աղմուկը նորից բռնկվեց. յերկու կողմերը իրար մկրտում էին կծու խոսքերով ու հայհոյանքով: Զանգահարումը խառնվում էր աղմուկի հետ, վոչ մի ազդեցութուն չանելով: Բեմի վրա—սեղանի շուրջը նըստածները տեղերից վեր կացան: Միքայելը մոտեցավ բեմի ծայրին ու ձեռքերը տարածելով, դիմեց ժողովին.

— Ընկերներ, հանդարտվեք:

Յերբ աղմուկը դադարեց, Միքայելը, խոսք խընդրելով դիմեց Յեղոտանց Սարոյին, վորը դեռ կանգնած էր բեմի առաջ:

— Ընկեր, դու ասում ես, թե քաղաքում կոլեկտիվ չկա. քաղաքում յեղել ե՞ս:

— Յեղել եմ:

— Բա ենտեղ կոլեկտիվ չե՞ս տեսել:

— Չե:

— Բա դործարաններում, հիմնարկներում մարդիկ վո՞նց են աշխատում, միա՞սին, թե ջոկ-ջոկ:

Սարոն բերանբաց նայում էր Միքայելին:

— Յես եմ ասում, —նորից սկսեց նա իր ճղճղան ձայնով, —վոր եդ ձեր լավ շորերը տվեք մենք ել հագնենք, ձեր ոտճիկն ել հետը, են ժամանակ միասին ընկեր կլինենք...

Հանկարծ Գուրգենը հանեց իր սպիտակ պիղջակն ու ձգեց Սարոյի վրա:

Սարոն վերցրեց պիղջակն ու հանկարծակի դալով չդիտեր, ի՞նչ անի:

— Արա յե՛տ տուր, ամոթ ա, բղավեցին հետևի շարքերից:

— Հիմի վո՞նց ես Սարո, դու լավ քաղքի պիղջակ ունես, յես չունեմ, —բղավեց առաջին շարքերի գյուղացիներից մեկը:

Սարոն չվարած մեկնեց պիղջակը նախագահին ու իսկույն դուրս գնաց դահլիճից:

Բատրակ Յերվանդը մի թղթի կտոր ձգեց բեմի վրա. նախագահը վերցրեց ու կարդաց.

— «Կուլակների խումբն ուզում է ժողովը պայթեցնել. ի՞նչ միջոցներ եք ձեռք առնում»:

Աղմուկի մեջ զեկավար ընկերներն իրար մոտենալով թուռցիկ խորհրդակցում էին, մեկ-մեկու տալով Յերվանդի գրությունը: Նրանց համար ել պարզ էր, վոր կուլակների կողմնակիցներն ուզում են ցրել ժողովն առանց վորևէ հետևանքի:

Մինչ այդ, Միքայելը հետ նայելով Գուրգենին, գլխի շարժումով կշտամբում էր նրան, վորն ի պատասխան դրա ժպտում էր: Հասմիկը ներս յեկավ կանանց ցրվելուց հետո, հոգնած, կնճռած ճակատով: Տեսնելով Գուրգենին պիղջակը հագնելիս, նա, չիմանալով պատճառը, ծիծաղեց. ապա վերցնելով մի թղթի կտոր, գրեց վրան ու զգուշութամբ դրեց Գուրգենի առաջ:

— «Հերոսությունից մինչև ծիծաղելին մի քայլ է, Գուրգեն»:

Գուրգենը նայեց Հասմիկին ճնշված ժպտով, ապա նույն թղթի վրա պատասխանեց.

— Սա մի դեմազողիա յեր ի պատասխան ավելի մեծ դեմազողիայի. հետո կպատմեմ...

Հասմիկը կարդաց ու ապա նայեց այսպիսի մտեմական հայացքով, վոր Գուրգենին թվաց, թե վաղուց են մոտ իրար, ու յեկել են միասին իր յերազած աշխատանքներն առաջ տանելու: Իսկ Հասմիկին թվում էր, թե Գուրգենն ավելի յե մեծացել, հասունացել, սկսել է պայքարել մի լուրջ, մի մեծ գործի համար... Այն առաջվանը թվում էր նրան մշուշոտ, անվորոշ մի զեղում, մի նախերգանք. «չե՛, Գուրգենն ուրիշ է, ավելի»

բարձր և ավելի ուժեղ... մտածում եր նա... «և չի կարող չտեսնել իմ մեջ այն իսկական Հասմիկին»...

Դահլիճի մյուս ծայրի աղմուկը հանկարծ դադարեց, և ուշադրությունը կենտրոնացավ նոր խոսողի վրա: Կանգնած եր Սարգիսը,—փոքրահասակ, սև բլուզի վրա պիղջակ հագած, խորամանկ, փոքրիկ դեմքով մի մարդ, անհամաչափ յերկար սպիտակահեր բեղերով ու պսպղուն աչքերով: Նա վեր կացավ, փոքր ինչ պառկա տվեց, իր խոսքն ավելի նշանակալից ու ծանրախոհ դարձնելու համար, ապա սկսեց.

— Դուք ուսումնական, կուսակցական մարդիկ, յեկել եք մեզ լուսավորելու, խորհուրդներ տալու. բարով եք յեկել. միայն ասենք դուք բժիշկ եք, մենք ել հիվանդ. շատ բարի. ինչո՞վ եք մեզ բժշկելու. դուք ասում եք կոլխոզ մտեք, վոր առողջանաք, համեցեք գնանք տեսնենք կոլխոզն ի՞նչ ա.—Թե մարդ ա մտնում կոլխոզ, փչացնում ա, թամբալանում, ձի, յեղն ա մտնում, փչացնում ա, կաշի ու վոսկոր մնում. հենց Իմանաս մեջը քաջն ա նստած, վոր ամեն ինչ շուռ ա տալիս... Յերբ վոր բանն եղպես ա, պատճառն ի՞նչ ա, վոր դուք մեզ ենտեղ եք ուղարկում...

Չբավորների խմբից շեկ Վանին խոսքը կտրեց.

— Լավ ուստա յես քեզ համար, Սարգիս:

— Կոլխոզը փորիդ վնաս ա,—ասաց ջահել բատրակներից մեկը ծիծաղելով:

— Կոլխոզի քաջըր դու յես, ել ո՞ւր ես ուրիշի վրա գցում,— ասաց բատրակ Յերվանդը:

Սարգիսն ինչ վոր բորոաց նրանց հասցեյին, ու տեղից դուրս յեկավ: Կարծես նրա նշանին սպասելով, հետևի շարքերը շարժվեցին, աչակերտական նստարանները հետ ու առաջ քաշելով, վերելի տախտակները թխթխկացնելով: Մերթ խմբով, մերթ գատ-գատ նրանք կանչում էյին բղավելով, գնալով դեպի մուտքը.

— Չե՛նք ուզում... չե՛նք ուզում...

Բեմի վրա կանգնած եր շրջկոմի քարտուղարը և ուզում եր խոսել, բայց իրարանցումն ու աղմուկը հնարավորություն չեյին տալիս: Նրա նիհար, ջրոտ ու խոժոռած դեմքը հառել եր հետևի շարքերին. հազիվ

գտպելով իր ցատումը, նա սպասում եր այդ շարժման հետևանքներին: Մի բուպե նրան թվաց, թե «կուլակայինները» կարող են «պայթեցնել» ժողովը, բայց նրա դեմքը պարզվեց, յերբ նկատեց, վոր դահլիճում մնում ե մի խումբ, վորը կարող եր կոլխոզի հիմք դառնալ:

Յերբ մնացողները կենտրոնացան առաջին նստարանների վրա, նախագահը զանգահարեց ու ապա պատվիրեց դռները փակել: Բատրակ Յերվանդը գնաց դուռը փակելու. այդ ժամանակ դրսից դռանը մտեցավ տատանող միջակներից մեկը, Ստեփանը:

— Յերվա՞նդ, հը՞, ասում ես կոլխոզ մտնե՞մ,— հարցրեց նա անկամ ձայնով:

Բայց Յերվանդն ուշադրություն չդարձնելով նրա ասածին, դրնգալեն փակեց դուռը, ու Ստեփանը, քիթը գիպցնելով, հետ քաշվեց ու դանդաղ քայլերով հեռացավ: Կուլակ Սարգիսը նկատելով, վոր նա ձեռքով բռնել ե ցաված քիթը, ասաց հեղանանքով:

— Այ հախը ա՞... Ի՞նչ ունես կամըջումը, վոր փաթաթվես յավինջումը...

Շրջկոմի քարտուղարը, աչք ածելով դահլիճում մնացողներին. ասաց ուժեղ ու ինքնավստահ ձայնով.

— Ընկերներ, առաջին անգամը չե, վոր կուլակները վոսնձգություններ են անում մեր սոցիալիստական շինարարության դեմ. նրանք իրենց հետևից տարան և անգիտակից միջակներին, բայց այդ բոլորը դուր ջանքեր են նրանց կողմից. մենք կջախջախենք դասակարգային թշնամիներին ու անչեղ կընթանանք մեր գծած ուղիով: Յես գիմում եմ ձեզ, գիտակից բատրակներիդ, չբավորներիդ, դուք պիտի ասեք ձեր վճռական խոսքը— պիտի սերտ կպչեք կոլխոզին. ձեր առաջին բջիջը լինելու յե սոցիալիստական շինարարության միջնաբերդը ձեր գյուղում, վորը հետզհետե կլայնացնի իր շըրջանը...

Բոլորը վոտքի կանգնեցին ու յերկար ծափահարեցին:

Բատրակ Յերվանդը ձայն խնդրեց:

— Ընկերներ, մեր ժողովից հեռացան կոլխոզի հապրակ մարդիկ, կուլակներն ու նրանց ականջ դնողները...

ըր. ավելի լավ, մեր թշնամիները գնացին: Յես առաջարկում եմ—ուղղակի ցուցակի մեջ դրեք, ով ուզում ա, թող կոլլեոզի անդամ դրվի:

Առաջարկութունն ընդունվեց: Յերբ ցուցակագրեցին, պարզվեց, վոր անդամագրվել են 37 տնտեսութուն:

—Ուրեմն ընկերներ, —ասաց Միքայելը— կարող եմ շնորհավորել ձեզ, կոլլեոտեսության հիմքը դրված է. միայն մնում է, վոր չթողնեք յերկաթը սառչի: Այս անդամագրված ընկերները վաղը կգաք ժողովի. կբացատրենք ամեն ինչ, ցուցմունքներ կտանք:

Կես ժամի չափ գործնական հարցերի շուրջը խորհրդակցելուց հետո ժողովը ցրվեց:

— Այժմ, ընկեր Հասմիկ և ընկեր Գուրգեն, մենք կարող ենք գնալ, —ասա Միքայելը:

Նրանք թողին գյուղատնտեսական մեքենաները, ու նստելով խաղաղատար ավտոն, ճանապարհ ընկան դեպի խորհանտեսութունը:

9.

— Մինաս, կամաց քշիր, թե չե ջարդ ու փշուր կանես մեզ, —գրիմեց Միքայելը մեքենավարին:

Մինասը դանդաղեցրեց ավտոյի ընթացքը:

— Դե՛, ընկեր ենտուզիաստներ, —ասաց Միքայելը— մեր գործը կարող ենք կիսով չափ հաջողված համարել. մեզ մնում է միայն աշխատել միշտ վառ պահել կրակը...

— Բայց ընկեր Միքայել, դու այսոր իդեալիստական թեքման մեջ եյիր ընկել—ասաց Գուրգենը:

— Ի՞նչպես թե, —զարմացավ Միքայելը:

— Դու ուզում եյիր համոզել կուլակներին. մոռանում եյիր փիլիսոփա Հոբբսի խոսքերը. —«յեթե մաթեմատիկական ճշմարտությունները մարդկանց չահերին հակառակ լինեյին, նրանք յերբեք չեյին ընդունվիլ...»:

— Մի՛թե այդ տպավորությունն ստացար. իսկ յես դրանով ուզում եյի նրանց ասպարեզ քաշել, ճանճերին

սպիտակի վրա նստացնել, վոր յերևան ու քննադատության տակ ընկնեն:

— Բայց նրանք ոգավեցին հանգամանքից և ուզում եյին ժողովը ցրել առանց հետևանքի:

— Վոչինչ, կուլակների բերդն արդեն պաշարված է. սրանից դենը քանի գնան, նրանք կմաշվեն... բայց դարմանալի յե Գուրգեն, դու միշտ ինձ մեղադրում ես զանազան թեքումների մեջ, իսկ թոնը մոռանում ես. որինակ՝ հենց թո պիղջակի պատմությունը...

— Ի՞նչ թեքում ես տեսնում դրա մեջ:

— Կարճ ասած— դա մի ջահելություն էր. դու յենթադիվեցիր պրովոկացիայի, և թո վարմունքով ցույց ավիր, վոր նրա տեսակետի վրա յես կանգնած: Բայց քանի վոր լավ վերջացավ, այնքան ել չպետք է հարձակվել ընկեր Գուրգենի վրա:

— Ուրեմն յերկուսս ել թեքման մեջ ընկանք. մնում է ընկեր Հասմիկը, ասաց Գուրգենը:

— Ո՛ր, իմ բանը շատ դժվար էր, —պատասխանեց Հասմիկը. դուրսը կանայք ինձ զգում եյին, իսկ դուք ներսը հանդիստ նստած եյիք: Ի՞նչ սուտ լուրեր, ի՞նչ պրովոկացիա ասես, վոր առաջս չեյին դնում: Այնքան խոսեցի, վոր դուրիս դմբում ե: Բայց ելի վերջը կարողացա Փրոնտը պատռել և կանանց մի մտան իմ կողմը քաշեցի: Հենց վոր նրանց ղեկավարուհիները նկատեցին այդ, իսկույն ցրվելու հրաման տվին, վախենալով, վոր մյուսներին ել չհամոզեմ: Դե ի հարկե, նրանց հավատի բերելը մի որվա բան չի, պիտի յերկար ջանք թափել:

— Քանի ընկեր Հասմիկն այստեղ է, հենց այդ աշխատանքն ել իր վրա կվերցնի, —ասաց Միքայելը:

— Արդեն վերցրել եմ վրաս, ու մինչև նպատակիս չհասնեմ չեմ հանգստանալ:

Միքայելը ժպտալով նայեց Գուրգենին:

— Սոցմրցումն ընկեր Հասմիկի և Գուրգենի մեջ հայտարարում եմ բացված, —ասաց նա:

— Չե՛, չե՛, դեռ վաղաժամ է, ասաց Գուրգենը:

— Եդ ի՞նչ արդեն փախուստի՞ յես դիմում...

Խոսակցությունը դադարեց ավտոմոբիլի կանգ առ-

Ներու պատճառով: Պարզվեց, վոր մեքենայի մեջ ինչ վոր փչացել է: Գուրգենն ու Հասմիկն ոգտվեցին հանգամանքից, շարունակեցին ճանապարհը Վոտով, իսկ Միքայելը մնաց:

Միքայելն իջավ՝ ավտոյից ու կանգնած նայում էր հեռացող գույգի յետևից, վորը լուսնի կաթնամուշի մեջ մի առանձին խորհրդավորութուն էր ստանում: Ու մի խառը զգացում էր գալիս մեջը. — նա և ուրախ էր, տեսնելով, ինչպես նոր կյանքի, նոր շինարարության համար նոր սերունդն էր լծվում գործի իր թարմ յեռանդով, ու միաժամանակ մի տխրութուն էր գալիս մեջը, մի մտածում, թե ինքը գնացող, անցնող սերունդ է... Վորքան էլ ինքը համընթաց քայլում է նրանց հետ, այնուամենայնիվ լուսնի տակ անցնող շողշողուն գույքի քայլերն ուրիշ են, նրանք ավանգարդն են, նրանք իրար ավելի լավ են հասկանում... և ի՞նչ խոսք, նրանք արդեն սիրահարված են, նույնիսկ գուցե առանց գիտակցելու...

Ու մտքերը թռչում էին դեպի անցյալը. խուռն յերամով յերնում էին հիշողության մեջ իր թարմ տարիների ընկերները, առաջին հեղափոխության հուզումնալից յելեկները... հիշում էր իր սիրած Ոլգային, այն անձնվեր աղջկան, վորը գալիս էր բանտն իրեն տեսնելու, և վորն այնպես զոհվեց հետագայում:

Նայում էր հեռացող գույգին, վորը հետզհետե լուծվում էր հեռվում, մշուշի մեջ, ու խոսում անցյալի հետ. հին հույզերը նորոգվում էին, խոնավում մեջը, պղտորում աչքերը... Ու կարծես քշելու համար իր շուրջը վխտացող ստվերներն անցյալի, նա ձեռքով մի շարժում արավ, ու նայեց մեքենային. յերկրորդ անգամն էր սուլիչն իմացնում էր, վոր պատրաստ է գնալու:

Նա նորից նստեց ավտոն ու շարունակեց իր ճանապարհը:

Հասմիկն ու Գուրգենը քայլում էին լուռ, յերկուսն էլ մտամոխի: Հասմիկի մեջ մի կասկած անցավ, թե Միքայելը կարող էր իր մասին վոչ ցանկալի յենթադրութուն անել, բայց նա դուրս վանեց այդ մտքե-

քը. կանացի թուլութուն համարելով նրանց. — «ուրեմն յես էլ մի սովորական, թույլ ու վախկոտ կին եմ... իմ մեջ էլ ապրում է կաշկանդող, հին կենցաղը, իսկ յես Գուրգենին եյի մեղադրում...»:

Գուրգենը նայում էր Հասմիկին, ու թվում էր նրան, թե այժմ ուրիշ կին է իր հետ գնում. ինչ վոր յիտվել էր նրա մեջ, վոր նա դժվարանում էր բնորոշել. նա զգում էր միայն, վոր ավելի մտերիմ է իրեն, վոր մի ինչ վոր մեծ կապ կա իրենց մեջ, մի մեծ գործ, վորի հանդեպ իր բոլոր անցյալ զեզումները փոքրիկ են, յերկրորդական:

Բայց և այնպես մնում էր լարված դրության մեջ. նա շարունակ ձգտում էր Հասմիկի թևը մտնել, իսկ նա խուսափում էր աննկատելի, զգալով նրա մոտենալու նպատակը, ու հեռանալով նրանից:

— Ընկեր Հասմիկ, արի այս կարճ կաժանով կըտրենք, բարձրանանք մեր խորհանտեսության յետևի բլրի գագաթը. հրաշալի գիշեր է, նստենք այնտեղ ու գրուցենք, իսկի քունս չի տանում...

— Գնանք, յես դեմ չեմ, — ասաց Հասմիկը, չնայած վոր մեջը ինչ վոր տատանվում էր:

Նրանք դուրս յեկան ճանապարհից ու ընկան նեղ կաժանը: Այժմ արդեն նրանք քայլում էին իրար մոտիկ, համարյա իրար դիպչելով:

— Հասմիկ, ի՞նչ կասես մեր արշավի մասին:

— Ավելի լավ անցավ, քան յես սպասում էյի. ինձ թվում է, ընկ. Միքայելը չափազանցնում էր դիմադրութունը:

— Այո, նա վորպես հին մարդ, շատ զգուշ է:

Գուրգենն ուզում էր իմանալ Հասմիկի կարծիքն իր յելույթի մասին, բայց անհարմար էր զգում ուղղակի հարց տալ: Կարծես զուշակելով նրա ցանկութունը, Հասմիկն ասաց.

— Մասնավորապես Գուրգենն այսոր ցույց տվեց, վոր կարող է պայքարել...

Ապա բոպեաչափ կանգ առնելով, ավելացրեց.

— Յես մինչև այժմ քեզ ընդունում էյի, վորպես

գիտութեան ենտուզիաստ, այժմ քո մեջ մի ուրիշ մարդ էլ բացվեց— սոցչինարարութեան մարտնչող...

Գուրգենի այտերը վառվեցին այդ խոսքերից:

— Չգիտեմ, ինչո՞ւ, Հասմիկ, —ասաց նա հուզված, մտերմական ձայնով.— յես միշտ դժգոհ եմ ինքս ինձնից. միշտ ինձ թվում ե, թե չասացի այն, ինչ վոր ասելու եյի, չարի այն, ինչ անելու եյի... Գիտեմ միայն, վոր լծվել ենք մի մեծ ու դժվար գործի և պիտի նպատակին հասնենք...

— Յեվ ի հարկե, կհասնենք...

Քայլում եյին, խոսում ամայի դաշտում. ինչ վոր ասում եյին, վերևից եր անցնում, իսկ ներքուստ անտես թելերով կուտակվում եր մի զգացում, վորի անունից կարծես խուսափում եյին...

Մոտ կես ժամից հետո նրանք արդեն բլրի վրա եյին: Թիկնելով գետնին, խոտերի վրա, նայում եյին առաջները սփռված լուսադարձ տեսարանին: Լուսինը սահում եր յերկնքի ջինջ, բաց կապույտի վրայով, փայլում եր ներքևի այգու բարդիների դազաթներին, մուլթ սովեքներով լեցնելով նրանց տակերը: Թեթև հով եր փչում, խաղում շնչի հետ, ասես բերում եր բարձունքներից ինչ վոր տարրինակ զգացումներ, մտքեր...

10.

Գուրգենը պառկել եր, գլուխը հենած արմունկին ու լուր նայում եր մերթ առջևը սփռված տեսարանին, մերթ գողունի՝ յերեսը դարձնում եր Հասմիկի կողմը: Նա մեծ ցանկութուն ուներ արտահայտելու իր մտորումներն ապագա գործունեութեան մասին, — միասին գործելու, պայքարելու մասին, սակայն մի ուրիշ, մտերմական տոնով, վորի մեջ կուղեր հնչեցնել և իր ստանձին, թագնված զգացումները: Բայց ինչո՞ւ Հասմիկը խուսափում ե «առանձին» մտերմութեանից: Յերբ նրանք մենակ մնացին, թվում եր, թե շատ մոտ են իրար, անբաժան ընկերներ են, և առանց Հասմիկի նա չեր կարող յերևակայել իր ապագան, բայց այժմ մի ինչ վոր բարդութուն մշուշի նման իջնում եր, ծածկում Հասմիկին, հեռացնում նրան իր աչքերից: Թվում

եք, թե նա մի բարձր դազաթի վրա յե ու ինքը մաքառելով պիտի հասնի նրան: Ու նորից շարվում եյին նրա առաջ տարրինակ խոչընդոտները, նորից Հասմիկը դառնում եր «իրրացիոնար»...

«Յեթե մոտենամ, — մտածում եր Գուրգենը, — ասեմ, յես քեզ սիրում եմ, նա անպատճառ կհեղնի, — կասի՝ դու միանգամայն ծիծաղելի ես, չե՞ վոր չես ընդունում սերը... ուրեմն այդ կողմից նավերս արդեն այրել եմ... Յեթե ասեմ — արի ապրենք միասին, ինչպես ապրում են շատերը, այդ խոսքերը կհնչեն նրա սկանջին այնպես գոեհիկ, ինչպես մի նուրբ յերաժըլտութուն հանկարծ վերջանար կովի բառաչով. նա յերևի այդ դեպքում մի գարմացական հայացք կնետի վրաս ու անխոս ձեռքը կղնի այն գրպանի վրա, վորտեղ ատրճանակն ե, նորից կհիչեցնի «սիրային գողերի» մասին... նա այնքան անպիտանն ե, վոր չի իննայել նույնիսկ, յեթե ասեմ — արի ամուսնանանք. — կսկսի խնդալ ու կթողնի հարցն առանց պատասխանի, իսկ իմ ինքնասիրութունը չի թույլ տալ նորից կրկնելու: Ուրեմն վո՞րն ե Հասմիկի «կվինտ եսենցիան», վո՞րն ե այն հանգույցը, վորից կարող եմ յելնել... կամ գուցե այս բոլորը նրա կողմից մի խաղ ե, վորի նպատակն ե ինձ տանջել...»

«Գո՛րծ, գո՛րծ, գիտութուն, սոցիալիստական շինարարութուն... իսկ այս գեղումներս մանր բաներ են...» չուռ եր տալիս Գուրգենն իր մտքերն ու անցնում իր ապագա գործունեութեան հեռանկարին:

Իսկ Հասմիկը նույնպես պառկել եր ու ձեռքի ափով յերեսը ծածկել, բայց մատների արանքով դադտադողի գիտում եր Գուրգենին, նկատում եր նրա ստեպ-ստեպ իրեն ուղղված ծարավի հայացքները: Մի բույե նրա մեջ մի խենթ ցանկութուն յեկավ, — խառնչտել Գուրգենի մազերը, կատարյալ իրարանցում ու ամպեցում առաջացնել նրա մեջ, բայց մի սառը միտք բարակ ոճի նման դուրս սողաց միջից ու ասաց. — «Հասմիկ, զգա՛ստ. թեպետ Գուրգենն այժմ մի ուրիշ, ավելի պայծառ փայլատացավ աչքիդ, բայց ջուրը դեռ չի պարզվել վերջնապես... տղամարդիկ անգիտակցաբար հեռու են

իրենց նախկին հոգեբանության. նրանք «ծպտյալ իմ-  
պերիալիստներ» են կանանց վերաբերմամբ, և ձգտում  
են մեզ դարձնել իրենց «հավելվածը», իրենց ակոմ-  
պանիմենտը, իսկ յես կոչված եմ ինքնուրույն ձայն ու-  
նենալու... Թող Գուրգենը պարզապես, համոզիչ կեր-  
պով ցույց տա, թե ի՞նչ եմ յես նրա աչքում, թող տես-  
նի իմ մեջ այն մյուս Հասմիկին, և այն ժամանակ...  
Չե՛, փոքր ինչ թույն դեռ անհրաժեշտ է... ու քանի  
գսպանակն իմ ձեռքին է, առայժմ կպահեմ»...

Նա գլուխը բարձրացրեց ու ցանկանալով հանել  
Գուրգենին ճնշված լուսթյունից, հարցրեց.

— Ինչի՞ մասին ես մտածում, Գուրգեն:

Գուրգենը հանկարծակի գալով, իսկույն չպատաս-  
խանեց.

— Ապագայի մասին, — ասաց նա բառերը ձգելով. —  
այսպիսի լուսնիկ գիշերները, յերբ նայում եմ խաղաղ,  
քնած տեսարանին, թվում է, թե ժամանակը կանգ է  
առնում. կուզեյի մի անընդհատ, վառ ցերեկ լիներ,  
յեռուն գործերով լի... Այս բոպեյից աչքիս առաջ ան-  
ցավ մեր այցելած գյուղը, ու մեր գործն ինձ թվաց շատ  
դանդաղ, կարծես սույլով ենք ընթանում... անհամ-  
բերությունից միտքս շարունակ թռչում է առաջ, ու  
տեսնում եմ մեր ամբողջ յերկիրը, նույնիսկ յերկրա-  
դունդը վերածված համատարած սոցիալիզմի...  
— Այսինքն՝ անում ես այն, ինչ վոր գիտության  
մեջ, — այնտեղ ել ապագա գյուտերով բազմապատկում  
ես բերքը, այլ խոսքով՝ Գուրգենը լուսնի ազդեցության  
տակ ընկնում է յերազների մեջ, իսկ յերազները, —  
մեծ գրողի ասելով, — ծույլ ուղեղի զավակներ են...

«Նի խիեց անպիտանը», — մտածեց Գուրգենն յու  
խայթվածի նման վեր թռավ նստեց տեղը: Կարծես  
նրան չարացնելու համար Հասմիկն էլ նստեց:

— Չուր ես կարծում, թե վաղվան գալիքը յերազ  
է, — ասաց Գուրգենը լուրջ տոնով, — չե վոր մեր կյանքն  
այժմ մի արչալույս է, վոր և ներկա յե, և ապագայի  
նախերգանք...

— Գուրգեն դու ամբոխավարություն ես անում ա-  
ռանց ամբոխի. հարցը վոչ թե վաղվան գալիքի մասին

է, այլ թո գիզանտ թռիչների մասին, վոր անում ես յե-  
րեակայության թեքով...  
— Իսկի յել չե. մեր բոլոր ճանապարհները տանում  
են դեպի Մոսկվա, դու մոռանում ես, վոր մեր կյանքը  
մեծ պլանի մեջ է առնված և որեցոր ներկան լուծվում  
է ապագայի մեջ...  
— Բայց դու թռչում ես պլանից դուրս ու պտտվում  
«վերջնականների» շուրջը...  
— Իսկ դու, վոր այդպես հարձակվում ես, չե՞ս  
ձգտում միշտ գերակատարել պլանները, ուրիշ խոս-  
քով — չե՞ս թռչում պլանից դուրս:  
— Ծնորհավորում եմ, Գուրգեն, դու ընկար թո իս-  
կական ուղին. այժմ դու, ըստ սովորության — կսկսես  
վերագրել ինձ այն, ինչ յես քեզ եմ վերագրում:  
— Չե՛, յես մտադիր չեմ հարձակվելու... այսպիսի  
մի գիշեր, յերբ նույնիսկ գորտերը քնքանում են ու  
իրենց կոկոսը բայաթի դարձնում, յերբ բնությունը  
խոսում է ուշացած պոյետների ու մարգարեների  
հետ, — յես զինադադար եմ հայտարարում Հասմի-  
կին — ապագայի մասին խոսելու համար...  
— Ո՛հ, ինչ բանաստեղծական եր նախերգանք...  
խոստովանիր, Գուրգեն, յեթե յես այստեղ չլինեյի,  
այս գիշեր մի ուտոպիա կգրեյիր «Լուսնի աշխարհը»  
վերնագրով:  
— Ինչո՞ւ չե, կգրեյի, բայց վոչ թե «ուտոպիա»,  
վոր նշանակում է «վոչ մի տեղ», այլ կգրեյի «պան-  
տոպիա», այսինքն՝ ամեն տեղ...  
— Ո՛հո՛, պատկերը լրիվ է. — ուրեմն գուշակումս  
ճշտվում է. յեթե այդպես է, զինադադարը ընդունում  
եմ, պայմանով, վոր լավ թռիչք կատարես դեպի ապա-  
գան...  
Գուրգենը կարծես չեր լսում Հասմիկին, այլ շա-  
րունակում եր իր մտքի թելը.  
— Այսպիսի մի գիշեր ապագան բացում է մեր ա-  
ռաջ իր հոյակապ պատկերը. Գուրգենը տեսնում է այն,  
ուզում է պատմել նրա մասին, իսկ Հասմիկը, ըստ իր  
սովորության, հերքում է ամեն ինչ, վոր բղխում է  
Գուրգենից...

Հասմիկը պատասխանեց նույն տոնով.

— Այսպիսի մի գիշեր Գուրգենը յերազում եր լուսնի տակ, ու իր յերազներով վարակում Հասմիկին, տանում նրան իր հետ. դե՛, թուչենք միասին դեպի ապագան. տես լուսինը ժպտում է մեզ ու գորտերն ել իրենց պատմական դերն են կատարում, — նրանք կոկոռում են ուտուպիաների վրա, կարծելով, թե իրենց ճահիճներից գուրս ել վոչինչ չկա...

— Չե՛, Հասմիկ, դու առաջ ընկիր, վոր հավատամ, թե ճիշտ գալիս ես հետս:

— Լա՛վ, յես եմ սկսում. դե լսիր ուշի—ուշով... ուրեմն տարիներ են անցնում, թե վո՞րքան—այդ թող ի՛րք ժամանակն ասի, ու մենք միասին գալիս ենք նոր՛: դեպի այն գյուղը, վորտեղ մենք այսոր նվաճեցինք միայն 37 տնտեսութ՛յուն: Թուչում ենք «Իեպի ապագա» ողանավով, ազատ ու զվարթ, չգգայով վոչ սահմաններ, վոչ արգելք, — վողջ յերկրագունդը մեկ է, ուր ուղում ես իջիր. — ամեն տեղ գգում ես քեզ աշխատավոր մարդկութ՛յան մի բջիջում, ընդհանուր սոցիալիստական կարգերով, ընդհանուր լեզվով... Մեզ ուղեկցում են պրոֆեսոր Արեգյանն ու մի քանի ուրիշ գիտնականներ, վորոնք վերադառնում են Ֆիլադելֆիայի, Բոմբեյի ու Նանկինի գիտական կոնգրեսներից:

Հայաստանի առաջին քաղաքից մեր դեմ են յեյնում բազմաթիվ ողանավեր, շրջապատում են մեզ պսակաճև, ինչպես այն փոքրիկ ձյունաթուշր ամպիկները, վորոնք ընդգրկել են լուսնին... Դա կլինի արևածագին ու վողջ եսկադրան կրոցավառվի արշալույսի նարնջի գույներով ու կհնչի ռադիոյով վերամբարձ Ինտերնացիոնալը...

Մենք թուչում ենք պտույտներ անելով Հայաստանի վրայով. մեր առաջ սփռվում է մի հրապուրիչ յերկիր, այնքան տարբեր մեր առաջվա տեսածից... Ամեն տեղ, ուր աչքն եր գարնում, կենդանութ՛յան մի շքեղ պատկեր եր ցայտում. նախկին չոր, անապատային ու ժայռոտ վայրերից հետքեր չեյին մնացել. վո՞րքան բուսականութ՛յուն, վո՞րքան ջրեր— առուներ ու լճակներ, բազմաթիվ հիդրոկայաններ, գործարաններ... Պուրակ-

ների, այգիներ ի ու դալար դաշտերի մեջ փայլում եյին փոքրիկ քաղաքները—մեկը մյուսից գեղեցիկ... Գուրգենը նայում եր համալսակված. բոպե առ բոպե լավում եր նրա բերնից—«Հիանալի՛... հրաշալի՛... սքանչելի՛... Վերջապես, յերբ նրա վոգեվորութ՛յունը հասավ իր գաղաթնակետին, նա հանկարծ վճռեց այլևս թողնել գիտութ՛յունն ու նվիրել բանաստեղծութ՛յան. իսկույն հանեց իր ծոցատետրն ու սկսեց գրի առնել մի պոյեմ, վորի առաջին տողերն այսպես եյին.—

— Նորոգված յերկիր, պլանաչեմ յերկիր, Յես քեզ տեսա արևի շողերով...

... Գուրգենն անհանգիստ շարժում արավ.

— Հասմիկ, — ասաց նա, — դու հասմիկորեն ես տանում գործը. յես բողոքում եմ.

— Բողո՞քիր, բայց իմացիր, վոր ապագայում, յերբ գասակարգերը կվերանան, խոսքը կլինի ազատ Արագածի հովերի նման, բայց իհարկե, վոչ նրանց նման թեթև... Իսկ այժմ շարունակենք մեր ճամբորդութ՛յունը. մենք ուշադրութ՛յամբ հետևում եյինք, աշխատելով նկատել մեզ ծանոթ վայրերը, բայց համարյա վոչինչ չեյինք կարողանում գտնել: Վերջապես յերկուսս ել ցնցվեցինք, յերբ առաջին պտույտից հետո պրոֆեսոր Արեգյանն ասաց.

— Ահա Յերևանը. նա այժմ վերածված է չորս կոմբինատ-քաղաքի...

Մենք ազահութ՛յամբ հառեցինք աչքներս ներքև. Հասմիկը նայում եր նախկին կայարանի կողմը, կարծելով, թե կգանի մյուս թաղերը. բայց գործարաններն ել չեյին ջոկվում— նրանք առանց ծխնելույզների եյին. իսկ նրանց շուրջն այնքան նոր-ճառաստաններ, նոր շենքեր կային վոր նա չկարողացավ մի բան պարզել: Գուրգենն ել նայում եր համալսարանի կողմը, բայց այստեղ ել դժվար եր մի բան վորոշել: Նախկին Յերևանից բան չեր մնացել. միայն Զանգուն եր ձգվել ոճի նման, բայց նրա ափերն ել բոլորովին փոխված եյին:

— Այս չորրորդ կոմբինատի վերին մասը հատկացրած է գիտութ՛յանը և գիտնականներին, — ասաց

Սրեգյանը.—ուսանողները նրան «վերացական» թաղ են անվանում...

Մենք նայեցինք վերևի կողմը. ամենից աչքի ընկնողն աստղադիտարանի աշտարակաձև շենքն էր: Նրա դազաթից հանկարծ թռան դեպի մեզ մի խումբ ուսանողներ. չարածճի պտույտներ և ութածև հանգույցներ անելով սղոճ, նրանք բարձրացան մեր վերևն ու բաց թողին կարմիր թերթիկների մի հորդ անձրև: Թերթիկների վրա գրած էր.—«Կեցցե՛ն սոցիալիստական շինարարության անդրանիկ մարտիկները»... Գուրգենի ինքնասիրությունը վորոշ թըռթիռներ ունեցավ այդ բառերից, իսկ Հասմիկի դեմքն ամբողջովին մի մեծ ժպիտի վերածվեց: Մենք նշաններով վողջունեցինք ուսանողներին ու դուրս յեկանք քաղաքի շրջանից: Սավառնում էյինք դանդաղ, ու հրճվում նորանոր տեսարաններով: Ահա մոտեցանք Սեանա լճին, վորըն արդեն մի հրաշալիք էր,—լազուր ջրերը շրջապատված սոճիների վերասլաց անտառով, վորի խիտ կանաչների մեջ հսկա ծաղիկների նման փայլում էյին գունավոր շենքերը: Գոթար էր գտնել մի ուրիշ վայր, ուր բնությունն ու մարդկային արվեստն այդպես ներդաշնակ զուգորդվեյին: Գուրգենը նայում էր հմայված, նա սպառեց իր պոյեմի մեջ հին բանաստեղծության վողջ արսենալը, քրտնաթոր յեղավ ու մնաց դժգոհ... Նա շարունակ հետ ու առաջ էր շրջում «գեղային» անձականները—«գեղահրաչ»—«Հրաչագեղ»... «գեղածիծաղ»—«ծիծաղագեղ»... «գարմանահրաչ»—«հրաչագարման»... ու վերջը չկարողանալով արտահայտել իր մեջը հորդացող զգացումները, դայրույթով նետեց մատիտը լճի մեջ... Կարծես այդ նշանին էյին սպասում.—այդ բոպեյին ներքևից մեզ նկատեցին լճի վրա շարված հիգրոպլանները, ու հսկա բազերի նման խմբով բարձրացան դեպի մեզ—վողջունելու... Այդ եքսպրոմտի դիմավորումն այնքան ցնծալի յեր, վոր Գուրգենը մոռացավ իր անհաջող բանաստեղծական դերյուտը... Հիգրոպլաններն ընկերացան մեզ ու մենք շարունակեցինք պտույտը...

...Գուրգենը, խայթված այդ չարածճի հարձակումներից, ջղայնության նշաններ էր ցուցադրում:

— Խո՛սիր, խո՛սիր, Հասմիկ,—ասաց նա,—վազեռվիր, այդ բոլորը մենք արձանագրում ենք...

— Իբր թե դժգոհ ե՞ս. բայց յեթե դժգոհեցիր, վեր քեզ բանաստեղծ դարձրի. այժմ պիտի ուրախ լինես, վոր ազատեցի քեզ այդ պաշտոնից, մանավանդ, վոր քեզ մեծ վտանգ էր սպառնում.—հայտնի Փուրջենի ուտոպիայի մեջ շատ անհաճելի պաշտոն է առաջարկում անշնորհք բանաստեղծներին իր սպազա Փալանստերներում...

— Այսի՞նքն...

— Ամաչում եմ մինչև անգամ ասել. այն հայտնի անմաքուր տեղերը մաքրելու պաշտոնը...

— Այդ դեպքում անհրաժեշտ կլինեն պատժելի քեզ, վորպես ինձ բանաստեղծ դարձնողին...

— Համաձայն եմ, նույնիսկ ընդունում եմ, վոր իմ պատիժն ավելի պետք է լիներ քոնից... այդ պատճառով յես լսում եմ և առաջարկում եմ քեզ շարունակել մեր ճամբորդության նկարագիրը. կլսեմ յերկու ականջով, միայն հուսով եմ, վոր «ակներնդական» չես անիլ. դու բարի յես...

— Համարյա թե... դա կախված է տեղից և հանդամանքից. համենայն դեպս աչքի առաջ կունենամ քո աղերսանքը...

— Աղերսա՞նքը,—ոհո՛, տղամարդկային մեծախոսություն... յերբեմն դու մոռանում ես, Գուրգեն, վոր Հասմիկի մոտ ես գտնվում...

— Լա՛վ, շարունակենք մեր յերթը, իսկ այդ վեճերը հետաձգենք,—ասաց Գուրգենն ու սկսեց...

Հասմիկը, ըստ սովորության, այնքան էր տարվել տեսարաններով, վոր մոռացել էր մեր ճամբորդության նպատակը: Վերջապես մեզ ուղեկցող պրոֆեսոր Սրեգյանը հարցրեց.

— Վո՞րտեղ կուզեյիք իջնել, ընկերներ:

— «Յեցակեր» գյուղում, — ասաց Հասմիկը:

— «Յեցակեր» գյուղ, — հարցրեց Արեգյանը, դեմքի բոլոր կնճիռները հարցականի վերածելով, — բայց մեզ մոտ այդպիսի բաժանումներ չկան... մենք ունենք միայն կոմբինատներ, սոցիալիստական բժիշկներ...

Բոպեաչափ մտածելուց հետո, նա ասաց.

— Ձեզ կարող ե ոգնել հնագիտության պրոֆեսոր Ակնոցյանը, վորի հետ ձեզ քիչ առաջ ծանոթացրի:

Պրոֆեսոր Ակնոցյանը հանեց իր սակվոյաժից մի պատմական քարտեզ ու յերկար փնտռելուց հետո բացականչեց.

— Գտանք. նախկին «Յեցակեր» գյուղն այժմ ընկնում է 51-րդ սոցիալիստական բժիշկի շրջանում:

Արեգյանն իսկույն կարգադրեց, վոր մեզ իջեցնեն հենց այդ բժիշկում: Մեզ ուղեկցող ոգանավերն ու հիգրոպլանները հրաժեշտ տալով, մեկնեցին իրենց տեղերը:

Մենք իջանք մի կոկիկ քաղաքում, մի բարձր ապիտակ շենքի առաջ: Յերկար ժամանակ մնացել էյինք կանգնած, ապշած հիացմունքից. լայն փողոցի բոլոր անները շրջապատված էյին ծաղկանոցներով ու պուրակներով: Տպավորությունն այն էր, կարծես մենք գտնվում էյինք մի շքեղ կուրորտում, վորի շենքերը կառուցված էյին հատուկ մրցությամբ — մեկը մյուսից գերազանցող: Վերջապես Հասմիկը, վորպես հին մտածողությունից դեռ չազատագրված մի մարդ, հարցրեց Արեգյանին:

— Սրանք ձեր հանգստյան տնե՞րն են:

Պրոֆեսորը ժպտաց ներողամտաբար.

— Վո՛չ, սրանք մեր սովորական տներն են, վորտեղ կարելի չէ և աշխատել, և հանգստանալ: Մեր սակավաթիվ հիվանդների համար մենք ունենք հատուկ կուրորտներ, բայց ընդհանրապես, հեշտ հազորդակցության շնորհիվ, մեր առաջ բաց են բնության ամենագեղեցիկ վայրերը, — թե հանգստանալու, թե զվարճության համար:

Հանելով ծոցից հնագետ պրոֆեսոր Ակնոցյանից վերցրած քարտեզը, Արեգյանը ցույց տվեց մեզ նախ-

կին «Յեցակեր» գյուղի տեղը: Հասմիկն ազահ աչքերով դիտում էր շրջակայքը, բայց այնքան էր փոխվել տեսարանը, վոր միայն բլուրները ընդհանուր գծերն էյին հեռավոր կերպով հիշեցնում անցյալը: Չորս կողմը ծառազարդ ու ծաղկազարդ, ընդհանուր բանջարանոցներով ու այգիներով. մի թիզ հող չկար առանց մշակման. իսկ հոյակապ տները, գործարանները, կանոնավոր լայն փողոցները... չէ՛, սա շատ հեռու յեր նախկին «Յեցակեր» գյուղի պատկերից...

— Հեյ՛ դիդի հա, «Յեցակեր» գյուղ վո՞րտեղ էս, — ասաց Գուրգենը. — հիշո՞ւմ էս Հասմիկ, ամռան յերեկոն, նեղ ու ծուռ փողոցները փոշոտ, գյուղացու իգիլիական բակը, կուրակների բարձր պարիսպները, մեր սոցարշավը Միքայելի հետ...

Այս խոսքերի վրա Հասմիկի աչքերը պղտորվեցին. նա վոչինչ չպատասխանեց ու յերեսը դարձրեց մյուս կողմը, իր հուզմունքը ծածելու համար:

Գրությունը փրկեց Արեգյանը, առաջարկելով դնալ գյուղատնտեսական ինստիտուտ.

— Այսոր այնտեղ դիսկուսիա յե լինելու բանջարաբուծության նոր ձևերի մասին, — ասաց նա, — կարծում եմ դա ամենալավ սյուրպրիզն է ձեզ համար:

Մի քանի բոպեյից հետո մենք արդեն մի մեծ շենքի առաջ էյինք, վորը շրջապատված էր հազվագյուտ ծառերով: Յերը ներս մտանք դահլիճը, նա արդեն լիքն էր հասարակությամբ. հիմնական զեկուցումն արդեն սկսված էր:

Գիսկուսիայի ժամանակ մենք այնքան նորություններ իմացանք ազրոկուլտուրայի զարգացման շուրջը, վոր տասը տարում հազիվ կարող էյինք յուրացնել. փոխվել էյին վոչ միայն գիտության տվյալները, այլև նրանց մշակելու մեթոդները: Արհեստական անձրև, արհեստական լույս, ջերմություն... Ֆիզիկան ու քիմիան սերտ միացած ազրոկուլտուրայի հետ: Պարզվեց նույնպես, վոր յեղանակների գուշակումը նույնքան ճիշտ հիմունքների վրա յե դրված, վորպես և աստղագիտությունը: Այս բոլորը Գուրգենը լսում էր որյեկտիվ սառնասրտությամբ, իսկ Հասմիկը ցուցադրում էր

իր դեմքին անկայուն հետաքրքրութիւն, շարունակ  
զարմանքի արտահայտութեամբ փոփոխելով իր դեմքը:  
Քայց մի դեպք շատ հուզումնալից դարձավ Հասմիկի  
համար.—գիտնականներից մեկը համեմատութեան  
դնելով կապիտալիստական և սոցիալիստական շրջան-  
ների ազդեցութեան, ասաց ի միջի այլոց.

— Միայն սոցիալիզմն էր, վոր ամբողջ թափով  
առաջ տարավ գյուղատնտեսութիւնն իր հսկա ծախ-  
յով. կապիտալիստական աշխարհը պարարտացնում էր  
հողը մարդկանց արշուկով. այն ավերածութիւնը, վոր  
նա պատճառում էր իր արշուկահեղ պատերազմներով,  
մարդկանց կյանքերը խորտակելով, հսկայական միջոց-  
ներ վատնելով—չէր կարող նպաստել վոչ գիտութեանը,  
վոչ նրա գործնականին... Այժմ, ընկերներ, յերբ մենք  
հանրագումարի յենք բերում սոցիալիզմի նվաճումները  
չենք կարող առանց հիացմունքի նայել այդ պերճախոս,  
յայնատարած դաշտերին, վորոնք սփռված են վողջ  
յերկրագնդի վրա: Յե՛վ այդ բոլորը նրանից է, վոր չկա  
չահագործում, չկան պատերազմներ, ու զենքերը դար-  
ձել են պատմական թանգարանների զարդեր, իսկ նրանց  
վրա ծախսվելիք մետաղը—գործադրվում է մեքենանե-  
րի վրա...

Հանկարծ Հասմիկն այլայլվեց.

— Հիվանդ ես, հարցրեց Գուրգենը:

— Ձե՛, Գուրգեն, բայց հիվանդից ել վատ եմ,  
յես անհարմարութիւն եմ գգում... գրպանումս  
ատրճանակ կա. վերցրո՛ւ.

Գուրգենը խոստացավ վերցնել ընդմիջումի ժամա-  
նակ, բայց ա՛յ քեզ դժբաղտութիւն. յերբ նրանք քաչ-  
վեցին մի անկյուն, և Հասմիկը հանեց իր ատրճանակը,  
հանկարծ մեզ մոտեցան մի խումբ գիտնականներ, վո-  
րոնք լսելով Արեգյանից, թե մենք «պրոլետարական  
գիտատուրայի շրջանի» մարդիկ ենք, ուզեցել էին  
մեզ մոտիկից տեսնել, հետներս խոսել:

Նկատելով Հասմիկի ձեռին ատրճանակը, մեկը  
նրանցից հարցրեց.

— Սա ի՞նչ է. յերևի հեռագիտակ է, այո՞:

Կարո՞ղ էք յերևակայել Հասմիկի դրութիւնը. նա

յոթն անգամ իր գույնը փոխեց հուզումնալից մակըն-  
թացութեան և տեղատվութեան ալիքներով: Աղերսա-  
լից հայացքով նա նայում էր Գուրգենին: Մինչ այդ  
մյուսներն ել սկսեցին հետաքրքրվել փոքրիկ զենքով:  
Գուրգենը ավելի քան ծանր էր, բայց Գուրգենը, վորը  
միշտ կրիտիկական բնույթներին փրկութեան է դալիս  
Հասմիկին, այս անգամ ել յեկավ...

— Սա մի մանկական խաղալիք է,— ասաց նա,—  
սրանով մեզ մոտ յերեսաները ծտեր էյին վորսում...

Կարծես մի սար ընկավ Հասմիկի ուսերից. նա  
մտերմական մի հայացք ուղղեց Գուրգենին, ու այդ  
հայացքի մեջ ինչ վոր տարորինակ արտահայտութիւն  
կար...

... Հասմիկը լսում էր Գուրգենին շրթունքները  
խաճնելով, մեծ ճիգ գործադրելով իր լուրթիւնը պահ-  
պանելու համար: Յերբ Գուրգենը վերջացրեց ատրճա-  
նակի պատմութիւնը, նա անհամբեր կտրեց խոսքը.

— Գուրգեն, դու այդտեղ մի կարևոր դեպք բաց  
թողիր, թույլ տուր լրացնեմ:

— Խնդրեմ, կարող ես, տրվում է հինգ ըոպե:

— Գուրգեն ավելի կարճ պատմեմ, բայց ազդու...  
դու մոռացար, վոր հենց այն բոպեյին, յերբ բոլորը  
հետաքրքրութեամբ դիտում էին Հասմիկի ատրճանա-  
կը, Գուրգենին մոտեցավ գիտնական Յեթերյանը և իր  
սուղ, քննական հայացքը հառեց նրա վրա:

— Ձեր մեջ ինչ վոր տարորինակ գծեր են նկատ-  
վում,— ասաց նա. դուք անցյալի լավ նմուշ եք. թույլ  
տվեք քննելու ձեր ուղեղը «իզրեկ» ճառագայթնե-  
րով...

Գուրգենը շփոթվեց տասը տարեկան աշակերտի  
նման, ու խոսք չգտնելով, վոր ասի, լուռ հետևեց պրո-  
ֆեսորին, վորը տարավ նրան իր կաբինետը:

— Այո, այո,— ասաց նա, քննելուց հետո,— իմ  
յենթադրութիւնները ճիշտ էյին. ձեր ուղեղի ծալքե-  
րում դեռևս թաղնված են անցյալի մնացորդները—  
տղամարդու գերիշխանութեան «ալֆա» և «բետա» գծե-  
րը. դուք դեռ չէք ազատագրվել վերջնականապէս այն  
հին վերաբերմունքից, վոր գոյութիւն ունեն գեպի

կէնը անցյալում... այդ են ասում «խզրեկ» ճառագայթները ձեր ուղեղի յենթագիտակցական շերտերի մասին...

Ո՛ր, այդ բոլորներն յես չեյի ցանկանալ լինել Գուրգենի դուռնի մեջ... նա կուզեր շոգիանալ, ցնդվել վորպեսզի չտեսնեյին իր վառվող դեմքը. բայց արդեն ուշ էր. անողորմ գիտութիւնն իր խոսքն ասել էր...

Ու կարծես նրա դժբախտութիւնը կրկնապատկելու համար պրոֆեսոր Յեթերյանն իր յեզրակացութիւնը հայտնեց Հասմիկին...

— Դե՛, յես վերջացրի իմ ուղղումը, այժմ կարող ես շարունակել քո պատմութիւնը, — ասաց Հասմիկը: ... Գուրգենը շարունակեց.

— Քո ուղղումը բավական ուսուցիական էր թե՛ սկսած, բայց հետաքրքրական դու չուզեցիր մենակ չփոխված լինել և ինձ ընկեր արիւր... ուրեմն փաստն այն է, վոր յերկուսս ել այլայլված եյինք և վերացած իրականութիւնից (մանավանդ Հասմիկը)...

Մեզ սթափեցրեց պրոֆեսոր Արեգյանը:

— Պետք է շտապել, — ասաց նա, այսօր մեզ մոտ հյուր են գալու Հնդկաստանի ընկերները. դա ձեզ համար բավական լավ առիթ է...

Մենք դուրս յեկանք գլուղատնտեսական ինստիտուտից, և մեր առաջ հանկարծ բացվեց անմոռանալի տեսարան — ամբողջ փողոցը բռնված էր մարդկանցով, դանազան ձևի ավտոներով, իսկ վերևում յերեք հարկով շարժվում եյին այրողականները, ուղեկցելով յեկվոր ընկերներին: Մենք միացանք յերթին: Յերաժտութիւնը, մարդկանց խանդավառ կեցցեներն ու կոչերը, վողջ մի վերացնող համերգ էր կազմում:

Հյուրերն իջան այրողականներից աշխատանքային պալատում, վորի ընդարձակ դահլիճում հավաքվել էր ահագին բազմութիւն: Տարորինակ պատկեր էր. — մենք տեսնում եյինք առաջներս Հնդկաստանի ընկերներին, և միաժամանակ ճաղիտ-հեռատեսի միջոցով դիմացի եկրանների վրա յերևում էր Հնդկաստանի այն քաղաքը, վորտեղից նրանք յեկել եյին, միտինգը — այնտեղի աշխատանքի պալատում, և նրանք ել փոխա-

դարձաբար մեզ եյին տեսնում... դա միջազգային ու միջկերկրային միտինգ էր — Հնդկաստանի բանվորը, հաղթելով տարածութիւնը, միտինգում էր Հայաստանի ԾՂ-ը սոցիալիստական բջիջի հետ...

Հանդիսավոր ճառի մեջ կոմբինատի մի բանվոր ասաց.

— Ամբողջ աշխարհի աչքերը հառել է Հնդկաստանի գիտնական կոլեկտիվի վրա. այնտեղ մոտենում է իր ավարտմանը մի խոշոր գյուտ, վորի շնորհիվ արևի եներգիայի ոգտագործումը պիտի ավելանա հարյուր հազար անգամ: Մի ուրիշ կետ ևս դրավում է համաշխարհային ուշադրութիւնը — դա Անդրկովկասն է, վորի գիտական կոլեկտիվները նույնպէս միացած ուժերով գրադված են նորագյուտ «նեոֆիտ» մետաղով, վորի միջոցով հաջողվել է ատոմնալուծել մի շարք նյութեր և վորը նույնպէս խոստանում է ապագայում եներգիայի հսկայական աղբյուրներ, մի նոր հեղաշրջում գիտութիւն մեջ...

Մեծ խանդավառութիւնով բազմաթիւ միջոցով լավեց պատասխան — ճառը Հնդկաստանից. միաժամանակ մենք և տեսնում եյինք և լսում խոսողին:

Մենք դուրս յեկանք այդ համաշխարհային միտինգից բոցավառ տրամադրութիւնով:

Ճաշից հետո մենք այցելեցինք կոմունա-տներից մեկը, վորտեղ ապրում եյին կոմբինատի բանվորները: Այնտեղ էր ապրում և պրոֆեսոր Արեգյանը: Հասմիկը մի առանձին վողկորութիւնով հարց ու փորձ էր անում, ծանոթանում կոմունայի կյանքին:

— Այս նույն կենցաղն է տիրում և մեր բոլոր տներում, — ասաց Արեգյանը, — ամեն տեղ ընդհանուր ճաշարան, ընդհանուր մանկատուն, ակումբ, դրադարան, բնութեցարան, կինո-հեռատես և կոլեկտիվ կուլտուրական կյանք. կարելի յե ասել, — ամբողջ տունն ապրում է վորպէս մի մեծ ընտանիք...

— Մնա՛ք բարով տոբայով, վրավով և յերեխաների հոգսերով ընկձված կանայք, — բացականչեց Հաս-

միկը, ծիծաղ հարուցանելով մեր շուրջը խմբված բան-  
վորուհիների մեջ:

Յերեկոյան մենք բարձրացանք տան վերևի տերբա-  
սը, վորտեղ «կոմունայիները» հանգստանում էին այդ  
ժամին: Մեր առաջ բացվում էր մի շքեղ տեսարան,  
ամեն կողմերից մեզ կարծես վողջունում էին հարևան  
սոցբլիշներ, կոմբինատների գլխարթ, շողջողուն լույ-  
սերը: Արեգյանը ցույց էր տալիս կոմբինատներն ու  
բացատրում:

— Ահա մեր հարևան արհեստական կաշվի կոմբի-  
նատը, իսկ նրա ձախ կողմը — քիմիական կոմբինատն  
է... այն բարձր աշտարակը՝ արհեստական անձրևի  
կայանն է... Յեվ այդպես շարունակվում են մեկմեկու  
հեռևից կոմբինատ-բլիշները, — ամբողջ յերկրագնդի  
բոլոր մասերում...

— Մենք աշխատանքի ենք լծել բոլոր գետերն ու  
գետակները, հիդրոկայաններ կառուցել, լծել ենք քա-  
մին ու արևը, — ասում էր Արեգյանը, — յերկիրը գիտու-  
թյան սղնությամբ վերանորոգվել է, փոխել իր վաղեմի  
գեմքը. մեր ամբողջ աշխատանքները. մեր ամբողջ  
կյանքը մեծ պլանի մեջ է առած. կա մի մեծ համաշ-  
խարհային պլանային խորհուրդ, վորը տարեկան չորս  
անգամ ժողով է ունենում յերկրագնդի զանազան կե-  
տերում...

Նա փոքր ինչ լուեց խորհրդածելով, ապա շարունա-  
կեց:

— Պլան, ամեն ինչ պլան... նա ընդգրկում է մեր  
ամբողջ կյանքը. նա յե նախագծում է ուղեգծում, նա յե  
կազմակերպում մեր կամքը, ուժ է տալիս մեր բոլոր  
ընդունակութուններին... Չարմանալի յե, թե ինչ-  
պե՞ս անցյալում մի խորաթափանց ուղեղ կարողացել  
է նշմարել պլանի այդ հզոր նշանակութունը. խոսքս  
Սպինոզայի մասին է, վորն ասել է, — յեթե մարդիկ  
ապրեյին վորոշ պլանով, նրանց չեր կարող տիրանալ  
վո՞չ մի նախապաշարմունք... ահա այդպես, պլանը,  
մեծ հոկտեմբերի այդ ծնունդը դարձել է մեր աշխար-  
հայացքի ամուր հենարանը...

Մենք դեռ յերկար խոսում էյինք Արեգյանի հետ, ու  
քանի ավելի էյինք ծանոթանում «ապագայիներին»  
կյանքին, նա ավելի մտերիմ ու հարազատ էր դառնում  
մեզ համար...

Յերբ մենք իջնում էյինք տերբասից, Հասմիկը նո-  
րից աչք ածեց շրջակայքի լուսաչող տեսարանին ու աս-  
աց:

— Գուրգեն, այս բոլորը յերա՞ց է, թե իրականու-  
թյուն:

— Հասմիկ, դեն ձգիր այդ հին բառերը. — այն-  
տեղ, վորտեղ գոյութուն ունի պլանը, ինչ գործ ունեն  
յերազները... այստեղ ամեն ինչ պայծառ արևի տակ  
է...

Հասմիկը նայեց Գուրգենին մի թափանցող հայաց-  
քով, վորը շատ բան էր ասում...

Առավոտը զարթնեցինք արևածագին մի անուշ ին-  
տերնացիոնալի ձայնից: Արեգյանը ներքև իջավ դահլի-  
ճը, բարևեց:

— Մենք վաղ ենք զարթնում, — ասաց նա — և չենք  
սիրում որվա համը տանել շատ քնելով:

— Վո՞րտեղից է լսվում ինտերնացիոնալը — հարց-  
րեց Գուրգենը:

— Այսպես ասած — մեր «ատրուշանից» — արևի ու-  
ժակայանից. նրանցից մեկը մեզանից մոտ է: Ամեն ա-  
ռավոտ, յերբ արևի առաջին ճառագայթներն ընկնում  
են կայանի վրա, նա հնչում է ինտերնացիոնալը: Բայց  
մենք շուտով գնալու յենք բերքի տունին. դուք պետք է  
անպատճառ ներկա լինեք:

Փոքրիկ ողանավով մենք թռանք ու իջանք մի ըն-  
դարձակ դաշտում: Տարրինակ դույնդույն մի բազ-  
մություն էր սփռվել այնտեղ, կարծես մարդ — ծաղիկ-  
ներ էյին բսնել դաշտում: Այստեղ ներկայացնում էյին  
կենդանի պատկերով ազրոկուլտուրայի պատմության

բոլոր անցած շրջանները, ու գրա համար եյին խայտա-  
բղետ հազուատները:

Ահա մի խումբ մարդիկ կիսամերկ, հասարակ  
բժիշկներով փորում եյին գետինը. ահա մի ուրիշ խումբ-  
բահերով եր վարում, հետո գալիս եյին-փայտե չուխը,  
գուլթանների տեսակները, և վերջապէս տրակտորը,  
կոմբայնն ու ելեկտրոգուլթանը:

Հանկարծ գրոշակները ծածանեցին, նշան տալով ու  
ամբողջ դաշտի բազմութունն սկսեց յերգել. թնդաց մի  
հզոր, մասսայական յերգ, վորից կարծես սասանում եր  
յերկինքը:

Արեգյանը կրկնում եր յերգի խոսքերը, մեզ ծանո-  
թացնելու համար. դա աշխատանքի հիմն եր. նրա մի  
մասն միայն մնաց մեր հիշողութեան մեջ.

— «Անցավ շահագործ, գիշատիչ շրջանը մարդկու-  
թեան, անցան պատերազմներն ու խաղաղ աշխատանքը  
տիրեց վողջ յերկրին... փթթում են ծաղիկները,  
փթթում են սրտերը—աշխատանքը մերն է հիմա, աշ-  
խարհը մերն է հիմա»...

— Թնդանութեանը մեքենաներ դարձան, թունավոր  
գազերը—պարարտանյութ, վողջ յերկրագունդը մի աշ-  
խատանոց է հիմա, մի սրտով է բաղխում, մի սոց-կար-  
գով ապրում... աշխարհը մերն է հիմա, աշխատանքը  
մերն է հիմա...

— Արեւափայլ դաշտերով քայլեցեք ազատ, հպարտ  
ճակատներդ հովերին արեք, քչված են անդարձ կեղե-  
քողներն ու կոմունիզմի գրոշն է մեր առաջ... աշխա-  
տանքը մերն է հիմա, աշխարհը մերն է հիմա...

Հասմիկն ու Գուրգենը լսում եյին հմայված. նրանք  
լուռ ձեռք-ձեռքի տվին. ինչ վոր զգացմունք հորդում եր  
նրանց մեջ, մղում եր դեպի արեւավառ այդ կյանքը...

Բայց այդ բոպէյին հանկարծ ամեն ինչ մշուշով  
ծածկվեց. ինչ վոր ողանալ բարձրացրեց նրանց ու սլա-  
ցավ դեպի ներկան... Նրանք իջան ներքև լուսնի շողե-  
րով խորհանտեսութեան բլուրի վրա, ամսոսալով, վոր  
ապագա կյանքի միայն մի ճնչին մասը տեսան.....

\*\*\*

... Յերկուսն ել անգիտակցարար ձեռք-ձեռքի ե-  
յին տվել ու նայում եյին իրար թափանցող հայացքով,  
ասես նոր եյին ճանաչում միմյանց... Մի ակնթարթ  
ևս,— ու իրենք ել չիմացան, թե ինչպէս գրկեցին իրար  
մի յերկար, կարոտ համբույրով...

Լուսինը մոտեցել եր հորիզոնին ու նայում եր դու-  
նատ, իր հեռավոր սառնութեամբ. լուսաբացը հետզհե-  
տե ներս եր սպրդում ու վերցնում առարկաների վրայից  
աղջամուղջի քողերը. աքաղաղներն իրարից վառված—  
հետզհետե ուժեղացնում եյին իրենց կանչը. դիմացի  
պուրակը շարժում եր իր կատարները վաղորդյան հո-  
վից: Ներքևի ճամբով անցնում եր գյուղացին, Գյուլեյի  
յերգը շվացնելով...

— Ի՞նչ բերինք ապագայի յերկրից,—հարցրեց  
Գուրգենը.

— Մի ողանալ բերինք «Դեպի ապագա» ողանալը.  
Նա հիմա մեր թեմերն է դառել...

— Իսկ ի՞նչ թողինք այնտեղ:

— Յես թողի իմ ատրճանակը...

— Իսկ յես թողի այնտեղ քո յերևակայած «անցյալի  
յենթադիտակցական մնացորդները»...

— Լույսը բացվում է Գուրգեն, բամբասանքն ել  
կգա նրա հետ. գնանք ուղղակի փորձադաշտը, գնանք  
դեպի մեր աշխատանքը...

Նրանք նորից համբուրվեցին ու վեր կացան աշխուժ  
թափով: Բացվող լույսի մեջ յերկուսն ել իրար թվում  
եյին նոր մարդ, նոր յեռանդով, կրկնապատկված ուժե-  
քով...

Կարծես թև առած իջան բլուրից ու քայլերն ուղղե-  
ցին դեպի փորձադաշտը:

— Վորքան ուրախ եմ Գուրգեն, վոր պայքար կա,  
գործ կա անելու...

Նա սեղմեց Գուրգենի ձեռքն ու իսկույն բաց թո-  
ղեց:

Յերբ մոտեցան փորձադաշտին, հանկարծ նրանց  
դիմաց յերևաց Միքայելը՝ ձիով:

— Ես վո՞րտեղ եք, ա՛յ քաջքեր,—ասաց նա,— մի՞նտումը թագնովում եք, լուսում յերևում. դիչերս չեմ քնել, շատ անհանգիստ եյի, ասում եյի— չլինի՞ ձեզ փորձանք ե պատահել...

Նրա ձայնը դողդողում եր հուզմունքից, ասես իբր հարազատ դավակներին եր հանդիպում:

— Ձե՛, վոչինչ չի պատահել,— պատասխանեց Գուրգենը, քուններս չեր տանում, նստած խոսում եյինք բլուրի վրա:

— Սոսում եյինք Կապուղայի մասին,—ավելացրեց Համիկը:

— Դե դուք տեղովն ապագա յեք, ել ի՞նչ ապագա յեք ուզում, շատ ուրախ եմ, վոր ձեզ տեսա. դե գնանք փորձադաշտը:

Միքայելը, հասնելով, կանգ առավ փորձադաշտի ծայրին, հանեց ծոցից դիտողության տետրերն ու մետորը, ավելց Համիկին: Նա ու Գուրգենն իսկույն առաջ ընկան արագ քայլերով:

— Գուրգենին սոցմրցում եմ հայտարարում,— ասաց Համիկը, յերեսը դարձնելով դեպի Միքայելը:

— Ախպեր, յես ել եմ սոցմրցման մեջ մանում,— ասաց Միքայելը նրանց հետևից:

— Ընդունում ենք,—կանչեցին յերկուսով:

Մտան դաշտի մեջ:

— Ուրեմն Համիկ, դու ինձ սոցմրցում և ել ի՞նչ ես հայտարարում,—հարցրեց Գուրգենը, յերբ նրանք հեռացան Միքայելից:

— Սոցմրցում և ՍՈՅ-ՍԵՐ... սիրում եմ յ՛ի անպիտան տղայի «սոցխալական» սիրով... իսկ նա յել սիրում է, բայց իր զգացումի անունը չի ուզում տալ...

Գուրգենը ժպտաց.

— Յես այժմ կարող եմ շարունակել իմ տետրի հողվածը—սիրո մասին... սիրում եմ մի չարաճճի աղջկան, «պայծառ արևի տակ»...

Արևը հզոր պտույտներով պատուեց հորիզոնում կուտակված թեթև ամպերն ու ձգեց դաշտին իր թարմ շողերը, ամեն ինչ վոսկեգործելով:

Միքայելը սկսեց հաշվել ցողունները, բայց սխալվեց, կանգ առավ ու նայեց յերիտասարդ զույգի կողմը: Անջուն դիչերվա հուզմունքը, նրանց տեսնելու ուրախությունը, և այդ յետուն, ջահել աշխատանքը նրա աչքերը խողտեցին ու հրձիվանք-արցունքի յերկու կաթիլներ սահեցին նրա արևակեղ դեմքով:

— Մեզ բանտ, մեզ աքսոր, ձեզ—սոցխալիստական շինարարություն... մըմնջաց նա ու սկսեց նորից ցողունների հաշվելը...

1932 թ.

Ս Ի Բ ՈՒ Շ Ի Պ Լ Ա Ն Ը

Մայիսյան պայծառ արևը ժպտում է լայնարձակ ափոված տեսարանի վրա: Ձինջ ողում ամեն ինչ մոտեցել է, և թվում է թե հորիզոնում սպիտակին տվող ճյուղեղեն լեռները բարձրանում են հենց մոտակա դյուղի բլրապատ յեզերքից: Սպիտակ դադաթները ներքևում տեղի յեն տալիս կապտավուն փեշերին, ապա նրանց առջևից դալիս են կանաչ բլուրներն ու դաշտերը, ու վերջանում այգիների գուրգուրող սաղարթով: Ձով, թարմ ողը բերում է իր հետ ծաղիկների ու բույսերի բուրմունքը, ու նրա հետ մի զվարթ զգացում է մտնում Սիրուչի սիրտը. թվում է, թե իր ուժերը տասնապատկվում են, թե կարող է ամեն ինչ իրագործել, ու յեթե այդ իր զգացումը հաղորդի իր ընկերներին, բոլորը կվառվեն մի նոր, չտեսնված յեռանդով:

Նոր հնչեց հանդստյան ժամի սուրոցը: Սիրուչը մաքրեց իր ելեկարական մոտորի փոշին, ապա դուրս յեկավ տախտակե տոնիկից ու նստեց նրա սովերում, քարի վրա:

Նրա առաջ, նոր փորված կանալի ուղղությամբ ձգվում է ուռձացած հողաթմբի կոր գիծը: Կանալի ծայրին ուղտի նման գլուխը դուրս է ցցել հսկա արտափորիչը—եքսկավատորը: Չախ կողմը, տափարակում, ափոված են ժամանակավոր փայտե շենքերը—բանվորական բարակները, պահեստները, կրոպերատիվը, ճաշարանն ու ակումբը, վորի ճակատին աչքի յե գարնում ինչ վոր կարմիր պլակատ:

Ահա հրապարակում շարժումն ավելացավ. բանվորները խումբ-խումբ դիմում են դեպի ճաշարանն ու կուտակվում նրա մուտքի մոտ, կասսի առաջ: Սիրուչի շուրջը տիրում է մի խիտ, ականջին անսովոր լուռ-

թյուն. դադարել է քար ջարդող մեքենայի դղբոցը. կանալի խորքից չեն լավում խուլ թխկոցներ ու պայթյուններ, չեն լավում և մոտակա արհեստանոցի քուրաների բոսոցն ու մուրճերի չխկոցը:

Սիրուչը չի գնում նախաճաշելու: Նա արդեն քանիեորոգ անգամն է, հանում է ծոցից մի բաց նամակ, վոր յերեկ հանձնեց նրան պոստատարը, ու կարդում է, ժպտում, ապա աչքերը հասելով դիմացի հեռանկարին, մտածում է իր ընկերուհու, Լյուբայի մասին, վորից ստացել է այդ նամակը: Յերկու ամիս առաջ նա այստեղ էր աշխատում, հենց այս մոտորի վրա, իսկ այժմ վորքան հեռու յե իրենից, են սարերի յետեն է, սրանցից էլ դենը, մեծ Ռուսաստանում: Սիրուչը, կկոցում է աչքերն ու հիշում Լյուբայի յեռանդոտ, կենսուբախ, կյոր դեմքը. ո՞վ գիտե, դուցե նա էլ այժմ նստած իր մոտորի կողքին, մտածում է Սիրուչի մասին...

Ձով քամին խաղում է Սիրուչի դեմքին, լցնում է կուրծքը վառ հույզերով ու անթեկ կապում է նրան իր ընկերուհու հետ: Նա հանում է ծոցից իր տետրն ու մատիտն ու սկսում է գրել ծնկների վրա նամակի պատասխանը:

«Սիրելի Լյուբա, քո նամակն ստացա. անչափ ուրախ եմ, վոր ինձ չես մոռացել: Քո գնալուց հետո յես այնպես արի, ինչպես դու խորհուրդ տվիր. շարունակեցի սովորելը և այժմ արդեն մոտորիստ եմ, ու նստած եմ, գիտե՞ս վորտեղ, քո սիրած քարի վրա, մեքենայի տոնիկի կողքին: Գործս հաջող եմ տանում. ելի շարունակում եմ սովորել և հետզհետե ավելի լավ եմ հասկանում մեքենայիս «ներքին» կյանքը:

«Մեր ցեխն էլ լավ է աշխատում. պլանից հետ չի մնում, բայց յես և մի քանի ընկերներ այդ պլանից հեռու յենք թռչում... այստեղ, ընկեր Լյուբա, մի կարևոր հարց կա, վորի մասին կգրեմ ներքևը, իսկ առայժմ նա դադանիք է...

«Մի շարաթ առաջ Մոսկվայից յեկել էր մեզ մոտ ընկեր ժարովը պրոֆմիության խնդիրներով: Մեծ ժողով արինք ակումբում. դահլիճը ծայրեծայր լիքն էր:

Ընկերը շատ լավ եր խոսում: Յես ազահուլթյամբ լսում եյի ու տետրումս նշանակում գլխավոր կետերը: Մեր ամբողջ միութեան պլանը մեկ է, ասում եր նա, և մենք բոլորս միասին, վորպես մի մեծ կոլեկտիվի անդամներ, կառուցում ենք սոցիալիզմի հսկա շենքը: Ինչպես մեքենայի ամենափոքր վիճակն անգամ սերտ կապված է ընդհանուրի հետ, նույնպես ել ամեն մի գիտակից բանավոր իր փոքր գործը կատարելիս միշտ պիտի իր աչքերը դարձնի դեպի մեր մեծ, համամիութենական պլանը...

«Յես լսում եյի ընկերոջ և հիշում քեզ: Չե՞ վոր մենք խոսել ենք դրա մասին... Այո՛, ընկեր Լյուբա, մեր գործը մեկ է, սոցիալիզմի հսկա շենքն է... Ա՛յ, հիմա ել, չնայած, վոր մենք հեռու յենք իրարից, բայց ինձ այնպես է թվում, թե յերկուսս ել մեր միլիոնավոր ընկերների հետ մի ընդհանուր գործարանումն ենք, և այդ մեծ գործարանը մեր Խորհրդային Միությունն է: Յերբ իմ մոտորը բզզում է, մտածում եմ յերբեմն, թե եզրույթյին քոննեկ է բզզում ու իմին մրցման է հրավիրում...»

«Հիմա ասեմ, ընկեր Լյուբա, թե այն ի՞նչ գաղտնիք է, վորի մասին վերևը գրեցի, այժմ մենք միայն յերկու քար ջարդող մեքենա ունենք. և դրա պատճառով պլանը կրճատել են. յես շարունակ մտածում եյի, թե ի՞նչ յեղ կարելի յե գտնել, ու հանկարծ ստանում եմ քո նամակը...»

«Ստանում եմ և ուրախությունից վեր թռչում...» բանից դուրս է գալիս, վոր այդ գործարանը հենց այն քաղաքումն է, վորտեղ դու յես աշխատում... Հիմա իհարկե, գլխի յես ընկնում, թե ասելիքս ի՞նչ է... չե՞ս կարող, ընկեր Լյուբա, խոսել ձեր ընկեր բանվորների հետ վոր նրանք գերակատարեն իրենց պլանը և այդ ավելցուկից մեզ հատկացնեն յերկու մեքենա...»

«Այս է, սիրելի Լյուբա, իմ գաղտնի պլանը, վոր քեզ հայտնում եմ: Մերոնցից այս բանը հայտնել եմ Վասակին և բջիջի Սուրենին: Վստահ եմ, վոր սրտիդ շատ մոտ կառնես և անպատճառ կիրադործես իմ առաջար-

կը: Իսկ յեթե կատարես, մենք ուղղակի թևեր կառնենք, կթռչենք: Դե տե՞ս, ինչ ուրախություն կլինի յերբ կհայտնենք վարչութեանը ձեր բանվորների վորոշումը—տալ այսինչ «չենին» յերկու մեքենա. և հետո ինչ ցնծություն կլինի, յերբ կղեկուցենք արտադրական ժողովում... այդ գիշեր, Լյուբա, յես ուրախությունից աչքերս չեմ փակել...»

«Ի հարկե, ձերոնցից համաձայնություն ատնելուց հետո պաշտոնական դիմում կանենք. վարչությունն ուրախութեամբ կգնի մեքենաները:

«Դե, ընկեր Լյուբա, մե՛կնիր ձեռքդ, վոր սեղմեմ. ցո՛ւյց տուր, վոր մեր գործը մեկ է, վոր մենք ապրում ենք մի ընդհանուր սոցիալիստական պլանով: Չարկիր ու ցնցիր քո աննման յեռանդով: Անհամբեր սպասում եմ պատասխանիդ...»

«Ել ուրիշ ի՞նչ գրեմ, Լյուբա, այդ գլխավոր, այրող հարցից հետո: Անցյալ օրն արտադրական ժողովում յես տաքացա ու մեղադրեցի մեր ընկերներին, վոր նրանք ծանոթ չեն մեր շինարարութեան մանրամասնություններին: Ինձ միացավ և ընկեր Վասակը: Ընդհանրապես նա վերջերս շատ է հառաջադիմում թե բջիջում և թե մյուս յերույթներում: Ժողովներում մենք միևնույն գիծն ենք առաջ տանում—«յերեսներդ դեպի հարվածայիններ»... Ելի շարունակում ենք միասին պարապելը: Բայց չկարծես, Լյուբա, թե մեր մեջ բացի գուտ ընկերականից ուրիշ կապ կա. միայն մի գաղտնիք ել կա մեր մեջ,—միասին կազմակերպում ենք «ենտուգիստների իմբակ»: մեր ցուցակն օր-օրի վրա ավելանում է կոմյերիտների անուններով...»

... Միբուռը հիշեց, վոր նամակը պիտի տա թարգմանելու իր ուսանուհի քրոջն ու անհարմարություն դգալով, ջնջեց Վասակի մասին գրածից յերկու տող— «բայց չկարծես, Լյուբա, թե մեր մեջ բացի գուտ ընկերականից ուրիշ կապ կա»: Հետո կանգ առավ ու սկսեց մտածել, թե ճի՞շտ է, արդյոք, վոր իր և Վասակի մեջ «ուրիշ» կապ չկա: Նա հիշեց Վասակի վառ հայացքները պարապելու ժամանակ, նրա «առանձին»

տաք վերաբերմունքը, վորով նա զատում է իրեն մյուս կանանցից... Յեվ հետո ինքը, Սիրուչը, ի՞նչպես է ուրախանում ամեն անգամ նրան տեսնելիս... Ու իր ներսում մի ձայն կարծես իր գրածի հակառակն էր շշմուշում, — «այո, մի առանձին, մտերմական կապ կա քո և Վասակի մեջ»...

Մտախոր վայր ընկավ Սիրուչի ձեռքից ու հիշեցրեց նամակի մասին: Նա նորից շարունակեց.

«Անունս գրել են կարմիր տախտակի վրա, բայց յես ուղղակի դժգոհ եմ, չեմ ուզում անցնել նրա մոտով. ինձ թվում է, վոր տախտակն ասում է. — դու արդեն հասել ես գաղաթնակետին, պիտի կանգ առնես. իսկ յես կուզեյի մի՛շտ, մի՛շտ առաջ գնալ...»

«Ե՛հ, ընկեր Լյուբա, շարունակ դժգոհ եմ մեր աշխատանքի տեմպից. կուզեյի թեևերով հասնել ամեն տեղ, ու բոլո՛րին, բոլո՛րին վառել ենտուզիազմով, վոր աշխատանքը յեռա, կրկնապատկի իր թափը...»:

\*\*\*

Հանկարծ Սիրուչը լսեց յետևից քայլերի ձայն: Յերեսը դարձնելով, նա նկատեց Վասակին ու շփոթվեց, հարծես հանցանքի մեջ էր բռնվել:

Նա շտապով ծածկեց տետրն ու բռնեց ձեռքին թեթեւ ճիւղելով:

— Բարև ընկեր Սիրուչ, — ասաց Վասակը, կանգնելով նրա առաջ. — եդ ի՞նչ ես գրում:

— Մի գաղտնի բան...

Յերկուսն ել լռեցին:

— Ի՞նչ կա ընկեր Վասակ:

— Առանձին վոչինչ. բրիգադ ենք կազմել աշխատանքներն ստուգելու համար. ի՞նչ կասես, վոր քեզ ել ստուգենք, — ավելացրեց նա ժպտալով:

— Յես միշտ պատրաստ եմ, պատասխանեց Սիրուչը լուրջ տոնով:

— Բա եդ ի՞նչ ես գրում:

— Ընկեր ստուգատես, հանգստյան ժամերը չեն

ստուգում. իսկ թե հետաքրքրվում ես — կարող ես կարդալ. նամակ եմ գրում ընկեր Լյուբային մեր «գաղտնի պլանի» — մեքենաների մասին: Ահա կարդա:

Վասակը նստեց դետնի վրա, Սիրուչի մոտ ու սկսեց կարդալ: Իսկ Սիրուչը գաղտնագողի դիտում էր նրա դեմքը, վորի խոշոր, առնական գծերն այնպես ծանոթ էյին իրեն և այնպես դուրեկան: Մի տեղ Վասակը կարծես կանգ առավ ու կարմրեց. Սիրուչը գլխի ընկավ, վոր այդ Վասակի մասին գրած տողերն են ու վրա թրուով, խլեց Վասակից իր տետրը:

— Սխալվեցի. չպետք է տայի քեզ՝ կարդալու. սրտ մեջ վոչ թե մեկ, այլ յերկու գաղտնիք կա...

Վասակը նայեց Սիրուչին ամոթխած ժպտով, ասես մի անպատկառ բան էր արել: Ու դրուժյունը հարթելու համար ասաց.

— Սիրուչ, յեթե եդ պլանը հաջողվի, ի՞նչ անուն պիտի տանք քեզ. արդեն հարվածային ես, կարմիր տախտակի վրա գրված ես. մնում է ուղղակի ասել — հրաշալի աղջիկ ես.

— Վոչ մի անուն հարկավոր չի. յես ենքան ուրախ կլինեմ, վոր ամեն ինչ դրանով կծածկեմ:

Վասակը հայացքով կլանում էր Սիրուչի վառվռուն արևառ դեմքը, նրա կրակոտ սև աչքերը, վորոնք կարմիր գլխաշորի շրջանակի մեջ մի առանձին գրավչությամբ քարշում են նրան: Ու կարծես հանկարծ մտաբերելով ինչ վոր բան, նա ուզում է ասել Սիրուչին, բայց տատանվում է, ամաչում, ու գլուխը կախ, ձեռքի փոքրիկ ձողով քշփորում է հոգը:

— Սիրուչ, յես ուզում եյի քեզ հետ խոսել... ասում է Վասակը ցածր ձայնով, առանց նայելու նրա դեմքին... բայց մինչև հիմա...

Սիրուչը մարտդ մտած, շեղակի հայացքով դիտում է Վասակին. նրան դուր է գալիս, վոր Վասակը, այդ հաղթանդամ տղան, վորի ձայնից դղրդում է ակումբի դահլիճը, այժմ փոքր տղայի նման շփոթվում է իր առաջ:

— Յես ուզում եյի ասել — նորից սկսում է Վասա-

Ալը, յես շատ եմ համակրում քեզ... արտասանում ե նա մեծ դժվարութեամբ, հենց իմանաս ամեն մի բառը մի ծանրութեան եր, վոր նա դուրս եր քարշում անդունդից:

Սիրուչի ներսում ինչ վոր յերջանիկ հոսանք ե անցնում Վասակի խոսքերից, բայց նա զգում ե, վոր ինքն ել պիտի պատասխանի նման խոսքերով ու շիկնում ե, վարակվում նրա շփոթութեանից:

— Յես քեզ շատ եմ համակրում—կրկնում ե Վասակին... ճիգ անելով շարունակում,—իմ զգացումները դեպի քեզ... յես սեր եմ զգում...

Վասակը լուում ե, ծանր շնչում. նա անդիտակցաբար կոտորում ե ձեռքի ձողն ու դեն շարտում: Նրա դեմքն այրվում ե, կարծես թեժ կրակի դիմաց եր նրստած:

Սիրուչն ամոթխած նայում ե իր տետրին, ապա հիշելով, վոր Վասակն սպասում ե իր պատասխանին, ասում ե գլուխը չբարձրացնելով:

— Յես քեզ միշտ համարել եմ իմ ամենամոտ ընկերը...

Վասակն քաջալերվում ե այդ խոսքերից:

— Ուրեմն, ընկեր Սիրուչ, դու յեւ ինձ սիրում ե՞ս... ասում ե նա կարոտ հայացքով:

Սիրուչը լուում ե, նա սիրտ չի անում, ասի—«սիրում եմ», այդ նրան շատ դժվար ե թվում: Ու նայում ե դիմացի այդուն. նրա ավերված ցանկապատից յերևում ե մի կանաչ շերտ, վորի վրա աչք են զարնում յերկու կակաչների կարմիր դլխիկները: Նրանք որորվում են թեթե քամուց, վողջունում են Սիրուչին:

Նա դարձնում ե յերեսը դեպի Վասակը: Յերկուսի հայացքները կապվում են իրար հետ մի նոր գործով:

— Յեթե դու յեւ նույն զգացմունքներն ունես... ուրեմն Սիրուչ, դեմ չե՞ս ամուսնանալուն... ասում ե Վասակը, ինքն ել զարմանալով, թե ի՞նչպես ասաց այդ մոռական խոսքը:

Սիրուչը ներքին թելով քաշում, հավաքում ե իր հավասարակշռութեանը:

— Ամուսնանա՞լ... չե՛, ընկեր Վասակ, մինչև մեր պլանը չիրագործվի, յես չեմ ամուսնանա...

Վասակի մեջ կասկած ե գալիս. նրան թվում ե, թե Սիրուչն այդ ձևով ուզում ե մերժել իրեն:

— Ի՞նչ պլան,—հարցնում ե նա վարանոտ:

— Մ՛յ, ես նամակում գրած ե դրա մասին, քեզ ել արդեն ասել եմ:

— Մեքենանե՞րը:

— Այո:

— Ուրեմն Սիրուչ պիտի սպասենք մինչև...

— Այո, մինչև...

Յերկուսն ել ժպտում են, կարծես չհավատալով այդ հետաձգմանը:

— Դե մի համբույր, շնջում ե Վասակը:

— Չե, ընկեր Վասակ, համբույր կստանաս ես որը, յերբ նամակի պատասխանը կգա. իսկ հիմա տալիս եմ քեզ իմ ձեռքը...

Վասակն իր ուժեղ ձեռքի ափով սեղմում ե Սիրուչի փոքրիկ մատներն ու չի ուզում բաց թողնել:

— Իսկ հիմա գնա գտիր քո բրիգադը,—ասում ե Սիրուչը լրջացած.— Ի՞նչ կասեն մեզ տեսնողները— կասեն նստել են իրար կողքի ու սեր են խաղում:

Վասակը հնազանդ աշակերտի նման վեր ե կենում, խորը ժպտում Սիրուչին, ու նորից ձեռք մեկնում նրան:

— Գիտե՞ս ի՞նչ կա Սիրուչ. քեզ պես ընկերոջ հետ վոչ մի դժվարութեան աչքիս չի գալիս...

— Ուրեմն քո ենտուղիադը յես ե՞մ... եդ չեղավ Վասակ, հին բան ասացիր...

Վասակը գլուխը շարժում ե, կշտամբելով ու գնում: Սիրուչը նայում ե նրա յետևից, հրճվանքով դիտելով նրա ուժեղ, հաղթական կազմվածքը, նրա հաստատուն քայլերը, մինչև, վոր նա ծածկվում ե իր աչքերից, իջնելով ներքև:

Ու մնում ե նստած, մտքում անդիտակցաբար շարունակելով իր տեսակցութեանը Վասակի հետ: «Սիրում ե, սիրում ե»,—կրկնում ե նրա ներսում մի ախորժեղի ձայն... հովը փչում ե, շոյում նրա այրվող դեմ-

քը, շարժում է կարմիր գլխաչորը, խաղում մազերի  
հետ: Սիրուչի աչքերը կանգ են առնում դիմացի այգու  
վրա: Կանաչ շերտում յերկու կակաչների կարմիր  
գլխիկներն որորվում են քամուց, կարծես նրանք ել  
լննում են իրար—«սիրում ե, սիրում ե»...

...Սուլիչի թանձր ձայնը հնչում է նորից, այս ան-  
գամ ավետելով գործի սկիզբը: Սիրուչը վեր է թռչում,  
ու ծոցը դնելով իր տետրը, ներս է մտնում տոնիկը,  
նորից սրբում իր մոտորը: Քիչ անց տոնիկի մյուս դռնից  
յերևում են բանվորները:

— Դե, ընկեր Սիրուչ, սկսիր, տեսնենք,—ասում է  
վարպետ Տիգրանն իր մազոտ դեմքի վրա ցուցադրելով  
մի խոր աղոսավոր ժպիտ—նոր խմած դարեջրի ազդե-  
ցության տակ:

Սիրուչը քթի տակ ժպտալով շարժում է պտուտա-  
կը ու միացնում էլեկտրական հոսանքը: Մոտորն սկսում  
է արագ պտտվել վզգալով, նրան հետևում է քար ջար-  
դող մեքենան, իր խժռող բերանի խուլ աղմուկով.  
դղրդացնելով տախտակե տոնիկը: Կարծես մեքենայի  
չնչով տարածվում է փոշին,—տոնիկի դռների առաջ  
չողչողալով արևից: Դրսից հնչում են եքսկավատորի  
անհանգիստ սուլոցներն ու արհեստանոցի բարկացկոտ  
բոռոցը: Սիրուչը համակվում է շարժումով. նա փոքր  
ինչ դիտում է իր մեքենան ու հետո դուրս նայում դռնա-  
կից, նրա հայացքը սլանում է դեպի բնության հե-  
ռանկարը. մտքի աչքերով նա տեսնում է լայնասփյուռ  
հորիզոնի մեջ բազմաթիվ ընկերներ, «մաստաներ»,  
վորոնք շարժվում են, աշխատում իր և Վասակի հետ,  
ու մի նոր, սոցիալիստական, մայիսյան կյանք են ստեղ-  
ծում յերկրի վրա...

\*\*\*

Յերեք շաբաթ անց, առավոտյան Սիրուչը մի ծրար  
ձեռքին, շտապ քայլերով, հեվ ի հեվ մոտեցավ Վասակի  
սենյակի դռանը, ու պինդ թխկացրեց:

Վասակը դարձելով աղմուկից, յենթագրեց, թե  
ինչ վոր անախորժ բան է պատահել, յեկել են իրեն իմաց

անելու ու առանց հազնվելու, բորիկ վեր թռավ անկող-  
նից ու մոտեցավ դռանը:

— Ո՞վ է,—հարցրեց:

— Յես եմ, յես, Սիրուչն եմ, բաց արա:

Սիրուչի ձայնն ուրախ ցնցեց Վասակին:

— Մի րոպե սպասիր, Սիրուչ հազնվեմ:

— Ու շտապ-շտապ հազնվելով, նա բացեց դուռը:

Սիրուչը ներս ընկավ վառվռուն, լայնացած աչքե-  
րով:

— Վա՛սակ, ցնծա՛, նամակիս պատասխանը յեկել  
է. ընդունում են առաջարկը...

Վասակը նայում էր ժպտերես ու թվում էր, չէր  
հասկանում Սիրուչի ասածը:

— Վա՛սակ, մի զա՛րթիր, լսիր, ի՞նչ եմ ասում—  
մեքենաներն ստանալու յենք հասկանո՞ւմ ես... մի վո-  
դեկորվիր ե՛, —ասաց Սիրուչը, անհամբեր, թափահա-  
րելով Վասակի թևը:

— Հասկանում եմ, Սիրուչ, վոդեկորվում եմ,—ա-  
սաց Վասակը բռնելով նրա յերկու ձեռքից. շնորհավո-  
րում եմ, կեցցե՛ս, Սիրուչ, աննման աղջիկ ես...

Վասակը մոտեցրեց դեմքը, ուզեց համբուրել: Սի-  
րուչը դուրս քաշեց իր ձեռներն ու մի քայլ հետ քաշ-  
վեց:

— Մա ի՞նչ բան է,—ասաց նա լրջանալով:

— Վոչինչ, միայն թո խոստումի կատարումը...  
չե՞ վոր դու ասիր—յերբ նամակի պատասխանը կգա,  
են ժամանակ...

Սիրուչը ծիծաղեց:

— Ե՛հ, յես ել կարծում եյի լուրջ բան ես ասում.  
դու իսկի կարգին չվոդեկորվեցիր. քեզ շարժե համբու-  
րել...:

Վասակը մոտեցավ ու գրկելով Սիրուչին համբու-  
րեց շրթունքները:

Սիրուչը ճարպիկ շարժումով դուրս թռավ նրա  
գրկից:

— Ո՞հ, Վասակ, չունչս կտրեց... ուրիշ ժամանակ  
յեթե ինձ համբուրեյիր, քեզ ուղղակի կծեծեյի...

— Ուրիշ ժամանակ չեր լինի դադանի պլանը. սա հարվածային պլանի համբույրն է...

— Չէ՛, չէ՛, դու վողեորության տղա չես, դու համբույրի տղա յես. անունդ պիտի հանեմ կարմիր տախտակից...

— Դե Սիրուչ, խնայիր հարվածներդ. չե՞ վոր քնաթաթախ եյի ու ահարեկված քո պինդ թխկոյից... դե, նստի՛ր, մի քիչ խոսենք:

— Չե գնում եմ. պետք է հայտնեմ ընկերներին. եսոր ժողով կանենք... ո՛հ, ինչքան ուրախ եմ...

Ու արագ թափահարելով Վասակի թևը, մի սիրալիկ հայացք ձգեց նրա դեմքին ու դուրս թռավ սենյակից, թողնելով իր հնչյուն ձայնի ակկորդների հետ մի թռթռուն ուրախություն...

1932 թ.

## ՆԵՂ ՓՈՂՈՅԻ ՍԻՍՖՈՆԵԱՆ

Գավառական գործկոմի աշխատակիցների զտումն էր: Ժամի հնգից դահլիճն արդեն ծայրեծայր լիքն էր ու նոր յեկողների համար դարձել էր անմատչելի: Բեմի վրա, կարմրով ծածկված սեղանի մոտ, մեջտեղը նրստած էր կենտրոնից յեկած նախագահը, — հոգնած, գունատ դեմքով ու խռնված, սև մազերով: Նա լսում էր ամբիոնի մոտ կանգնած զտողին, առանց յերեսը դարձնելու, կկոցելով իր քնապակաս, կարմրած աչքերն ու կնճռոտ հայացքով նայում էր դիմացի հասարակության, վորով առիթ էր տալիս մի քանի վախկոտ ծառայողներին կարծելու, թե նա ուզում է «թափանցել իրենց ներսը»: Նրա կողքին, աջ ու ձախ, շարվել էյին զտման մասնաժողովի անդամները:

Փողոցի կողմի պատուհաններից շեղ ընկնում էյին ամառվա արևի ճառագայթները, տանջանքի մատնելով իրենց զոնայում նստածներին, ու առանձնապես փայլելով իրար կողքի նստած յերկու հին ծառայողների ճաղատ գլխներին: Գործից դուրս նրանք միշտ միասին էյին լինում, այդ պատճառով էլ անունները դրել էյին «Թաղևոս և Բարդուղիմոս»:

Բեմի վրայից նոր իջավ Փին-բաժնի վարիչ Նահապետյանը—փափուկ մարմնով, փափուկ ձևերով մի մարդ, վորի մասին կարելի յեր ասել, վոր նա ծառայել է, ծառայում է, ու կչարունակի ծառայել, — և ուրիշ վոչինչ: Մի ժամից ավել նա պատմում էր, ավելի շուտ—կարդում էր իր յերկարամյա գործունեյության մասին: Միայն, վորպես պատուհանի ապակու վրա գերված ճանճի բզոցը, անցնում էր ականջից ականջ նրա ձայնը, հիշատակելով այն բազմաթիվ հիմնարկները, վորտեղ նա ծառայել էր: Սեղանի վրայի գրաֆինը

յերկու անգամ դատարկվեց ու նորից լցվեց, բայց նա դեռ շարունակում էր իր «ցուցակ ծառայութանցը»:

Դահլիճում նստած աշխատակիցները, նեղված շոգից, հեղձուձիչ ոգից, ու ձանձրալի գտվողից, թուլացած հետ եյին ընկել աթոռների մեջքին, ու վոտը վոտի վրա դրած, կենտրոնացրել եյին հայացքներն իրենց կոշիկների ծայրերին, ասես այնտեղ էր թաղնված իրենց կոծող գլխավոր պատասխանը, — «կղտվե՞մ», թե՞ չեմ «գտվի», կմնա՞մ թե՞ չեմ մնալ», — այս էր նստած, այս էր տիրողն ամեն մեկի մտքում:

Յերբ Նահապետյանը ցած իջավ բեմից, կարծես սարից հով փչեց բոլորի դեմքին: Մի կենդանի շարժում անցավ շարքերով, իսկ պատի մոտ կանգնած կոմյերիտականները թեթև քրքջում եյին, կրկնելով Նահապետյանի մեջ բերած հիմնարկների տարրորինակ անունները. նրանց համար «բարեգործկան ընկերութունը» և «մարդասիրական ընկերութունը» նույնքան ծիծաղելի եյին հնչում, վորպես «տերտեր», «փիլոն», «յեպիսկոպոս» բառերը:

Կարճատև, ինքնահոս ընդմիջումից հետո նախագահը կանչեց.

— Աղելինա Փորսոզյան...

Թռչունի մանր, արագ քայլերով բարձրացավ փոքրահասակ մի կին, կապույտ, համեստ հագուստով ու թուխ, սրված դեմքով: Նա ինքնավստահ կանգնեց ամբիոնի մոտ ու չրթունքները սեղմած՝ մի քանի վայրկյան նայում էր դիմացի նստողներին: Չաման մասնաժողովի անդամներից մեկը, թեքվելով դեպի իր կողքին նստածի ականջը, ասաց ժպտալով.

— Նանը չմեռնի տիկին Չանիկին, ասեղի ծակով ել կանցնի...

Այսպես եյին անվանում նրան ծառայողներն իրար մեջ խոսելիս:

Աղելյան թեթև հագաց, գլուխը թեքեց, վիզը, ձգելով թռչունի նման, ու սկսեց փոքր ինչ խղված ձայնով.

— Ընկերներ, յես ծնվել եմ Չախչախ գյուղում...

հայրս քահանա յեր, սկզբնական կրթությունը ստացել եմ ծխական դպրոցում...

Քանի գնում, նրա ձայնն ամրապնդում էր ու տեմպն արագանում: Նա թուռցիկ անցավ նախախորհրդային տարիներին վրայով, ու յերկար կանգ առավ խորհրդային շրջանի վրա: «Վորբանոցի կառավարչուհի... ճաշարանի գանձապահուհի, վարժուհի, հիվանդանոցի տընտեսուհի»... անցնում եյին իրար հետևից նրա վարած պաշտոններն ու, ամեն մեկի մասին խոսելիս, միշտ ավելացնում էր— «ունեմ վկայական ծառայությանս մասին» և ցույց էր տալիս ձեռին բռնած թղթերը: Անընդհատ ու արագ գլուխը շարժելով, նա անցնում էր հիմնարկից հիմնարկ, տալով անգիր արած աչակերտի նման: Հեռվից այնպիսի տպավորություն էր անում, ասես կոցահարում էր ողջ, իսկ ձայնն այնպես էր հնչում, կարծես բարակ չոր ձողեր էր կտրատում ճոճուցներով: Վերջապես նա կանգ առավ իր վերջին ետապի— գործկոմի ճաշարանի վրա ու վողեորված ավելացրեց, վոր ներկայումս կոոպերատիվի խանութային հանձնաժողովի հարվածային անդամ է:

Նա արագ շնչելով՝ հուզված կանգ առավ, մաքուր թաշիկնակով սրբեց ճակատի քրտինքն ու պսպղուն, արագաչարժ աչքերով նայում էր հանդիսականներից վերև, դիմացի պատին:

Նախագահն ինչ վոր թղթերով զբաղվելով, ուշացնում էր իր խոսքը: Կոմյերիտների շարքում ժպտալով նայում եյին տիկին Աղելյային, կարծես սպասելով, վոր ելի կշարունակի:

— Լավ դուրս կանգնած ե յերևում, — ասաց նրանցից մեկն իր կողքինին, — դասն անգիր արած պատմեց...

Իսկ «Բարդուղիմեոսը», յերեսը դարձնելով «Թագևոսի» աքաղաղի նման ձգված բարակ վզին ասաց.

— Հիմար չկարծես հա, տիկին Չանիկը վորաեղ ուտելու ու հագնելու բան կա, ենտեղ ե ծառայել:

— Աշխարհն ուտողինն ե, — պատասխանում է «Թագևոս», փիլիսոփայական տոնով, առանց յերեսը

գարձնելու, — բա մեզ պես հո չոր տեղերը չի արածում...

Նախագահը գլուխը բարձրացրեց.

— Խորհրդայնացումից առաջ վո՞ր կուսակցութիւն էյիք պատկանում, — հարցնում է նա.

Անկուսակցական էյի, — ժպիտ ձևացնելով պատասխանում է Ադելյանը:

— Ձե՞ յիք համակրում վորևէ կուսակցութիւն:

— Վոչ, յես միայն ծառայում էյի:

— Իսկ այժմ ի՞նչ համեմատութիւն մեջ եք դնում անցյալը և ներկան:

Անցյալը թողնելով, Ադելյանը պատասխանում է «այժմ»-ի մասին.

— Յես այժմ մեծ համակրութեամբ եմ վերաբերվում խորհրդային իշխանութիւն և կոմունիստական կուսակցութիւն:

— Ի՞նչու յեք համակրում խորհրդային իշխանութիւնը.

— Վորովհետև նա բոլոր աղքատների պաշտպան է:

— Միայն այդքա՞ն. եհ մի բարեգործական ընկերութիւն էլ կարող է ասել, թե աղքատների պաշտպան է:

Ադելյան փոքր ինչ չփոթվում է, բայց հանկարծ նրա հիշողութիւնն ինչ վոր թռիչք է անում, ու վրայ է տալիս.

— Վորովհետև մենք կովում ենք իմպերիալիստական բուրժուազիայի դասակարգային թշնամիների դեմ, սոցիալիստական շինարարութիւն ասպարիզում...

— Ուրեմն դուք կովում եք բուրժուազիայի թշնամիների, այսինքն պրոլետարիատի դեմ, — ժպտում է նախագահը.

Դահլիճը քմծիծաղ է տալիս:

— Վոչ, յես սխալվեցի. — մենք կովում ենք բուրժուաների և իմպերիալիստների դեմ:

Նախագահն իր անցյալ գտումների փորձի հիման

վրա պարզված է համարում գտվողի մտավոր-քաղաքական դեմքը, ասելով մտքում — «ինչ վոր կա, սա յե, էլ ավել բան չի քամվիլ»... ու դիմում է հասարակութիւնը.

— Ո՞վ ունի հարցեր, կամ առարկում:

Բողեաչափ վոչ վոք չեք արձագանդում: Առջևի նստարաններից հետ են նայում, տեսնելու համար, թե ո՞վ է խոսելու:

Հանկարծ հետևի շարքերից մեկը բարձր ձայնով ասաց.

— Յես ուզում եմ խոսել:

Բագվի բանվոր Սարգիսն եր, վորն արձակուրդին յեկել եր հայրենիք հանգստանալու: Նա մեծ դժվարութեամբ խիտ շարքերը ձեղքելով դուրս յեկավ, կանգնեց բեմի առաջ. նրա լիքը, փոքր ինչ գունատ դեմքը աշխատում եր լրջութիւն պահպանել, բայց հեզնող աչքերը խանդարում էյին:

— Ներողութիւն, — հարցնում է նա, դառնալով գտվողին, — դուք տիկին Իդիլյան չե՞ք:

— Ադելյան, — ուղղում է գտվողը, դեմքը խոթոռելով ու չարագուշակ նայում է Սարգսին, աղոտ վերհիշելով նրա դեմքը:

— Հա', դուք Յերևանում են նեղ փողոցում չեյի՞ք ապրում, հրապարակի դիմաց...

Ադելյան հանկարծ մտաբերում է Սարգսին ու վախով բռնկված, ճիգ է անում չճանաչելու տալ նրան:

— Դուք խառնում եք, յես Իդիլյան չեմ...

Բանվոր Սարգիսը քմծիծաղ է տալիս. նա խոսում է, ու թվում է, թե խոսողը նրա սև, թափանցող աչքերն են:

— Դե վոր ձեր անունով չեք ուզում ճանաչվել, ուրիշ անունով կասեմ, — դուք տիկին Չանիկը չե՞ք:

Դահլիճը ժպտում է ու թեթեւ շարժում անում:

Ադելյան զինաթափ է լինում, վոչինչ չի պատասխանում ու գլուխը թեքում է:

— Հա, ես տիկին Իդիլյան, ընկերներ, — ասում է

Սարգիսը, յերեսը դարձնելով հասարակության,—իմ հարեանն եր Յերեանում...

— Աղելիա, — ուղղում է նախագահը:

... Մի նեղ փողոցում եյինք ապրում, — շարունակում է Սարգիսը, — մի տան մեջ, հենց կողք-կողքի: Դաշնակցության ժամանակ ես իմ հարեան, — տիկին Իդիլյան, վորբանոցի մայրապետն եր...

Դահլիճն ուղղում է «մայրապետ», նրա տեղ «կառավարչուհի» առաջարկելով, բայց ընկեր Սարգիսը շարունակում է առանց ուշադրություն դարձնելու:

— Ես տիկնոջ բնակարանը, ի՞նչ ասեմ, դառել եր վոնց վոր գնալ-գալու բյուրո. ամբողջ որը խմբապետների վոտը չեր կտրում. գալիս եյին, մթերքներ, խմիչքներ բերում, տունը լցնում, հետո յեյ մինչև ուշ գիշեր խնճուղքներ սարքում, աղմկում, չեյին թողնում, վոր հանգիստ քնենք...

Աղելիայի առաջ հանկարծ ամբողջ մերկությամբ պարզվում է բանվոր Սարգսի յելույթի իմաստը, ու ահա սրտին նա վճռում է պաշտպանվել ամեն կերպ, ինչ ել վոր լինի...

— Սուտ ե, յես եղպես բան չեմ արել, — բողոքող, բարձր ձայնով ասում է նա:

Նախագահը նկատում է լրջորեն:

— Թույլ տվեք ընկերոջ վերջացնել իր խոսքը:

Ընկեր Սարգիսը հեզմանքով հետ է նայում, վոտից գլուխ չափում Աղելիային, ու դառնալով հասարակության, նորից կապում թելը:

— Հա՛, շարունակում եմ խոսքս—վորբանոցի մայրապետ եր, ամբողջ որը բերում եր, կամ բերում եյին կոնսերվներ, խտացրած կաթ, գալետներ, ու հազար մի բան: Ես տիկինը մի գլուխ հենց «Վարդուշ Զան», «Սուրիկ Զան» եր ասում, բերանիցը միայն քաղցր «Զան» ու «Զանիկ» եր դուրս գալիս, իսկ նաղբն են եր, վոր տունը լցնում եր քաղցր բաներով: Հենց դրա համար ել, տիկին Իդիլյանի անունը դրել եյին «տիկին Զանիկ»... Հիմի ես բոլորը, ընկերներ, նրա համար եմ պատմում,

վոր չկարծեք, թե չեմ ճանաչում. ենպես եմ հիշում, ինչպես ես օրվա բանը...

Ասենք եղ մի կողմը թողնենք, անցնենք գլխավորին—ցավն են եր, վոր ես տիկին Իդիլյան որ չեր անցնում, վոր մի խմբապետի ցույց շտար մեր բնակարանի կողմը և սպառնալով շասեր:

— Ես բայլչեկիների քոքը պետք է կտրել...

Տիկին Աղելյան ինչ վոր անորոշ ձայն հանեց, ու գեց առարկել, բայց նախագահը ձեռքի շարժումով լեցրեց:

...Եղ ել վոչինչ... դրան ել դիմացանք. ամեն ինչ անցավ, յեկավ խորհրդային իշխանությունը... տեսնեմ հենց առաջին որը ես տիկինը կարմիր փալասներ է կպցնում իրան դռների վրա, հետո ել վորբանոցի աղջիկներից մի խումբ հետևն արած, անցնում է մեր նեղ փողոցով ու կանչում:

— Կեցցե՛ խորհրդային իշխանությունը:

Յես նկատում եյի վոր նա եղ բանները ենպես եր սարքում, վոր յես տեսնեմ. ընտանիքիս հետ ել բաղցրացել եր վոնց վոր մեղը ու շաքար: Պատշգամբով անցնելիս մի քանի անգամ ականջովս ընկան նրա խոսքերը. բարձր եր ասում, վոր լսեմ:

— Յերանի մի քիչ վաղ գար խորհրդային իշխանությունը, ես անիծված դաշնակիների հոտը կտրցնեմ...

Յես ել լսում եյի, մտքումս ծիծաղում ու լռում: Դե, ընկերներ, մենք իշխանությունը նոր եյինք վերցրել, հազար ու մի գործ կար, շատ անգամ պատահում եր, առավոտը վաղ դուրս եյի գալիս ու վերադառնում ուշ գիշերին. ո՞վ ժամանակ ուներ ուշադրություն դարձնելու ես տիկին Իդիլյանի վրա. դրանից շատ մեծերը կային, իսկ դա, վորպես մեր թշնամի, — յեղած-չեղած մի հաշիվ եր:

Տիկին Աղելյան փոքր ինչ հանգստանում է, ու խորը շունչ քաշում. «ես մեկը լավ եր», — մտածում է նա, — տե՛ր աստված, յերանի սրանով ել վերջանա»...

...Անցավ ժամանակ, — շարունակեց Սարգիսը, յեկավ դաշնակիների ավանտյուրան: Գործն ենպես խառ-

նըվեց, վոր չկարողացա ժամանակին դուրս գալ Յե-  
րեւանից ու ստիպված յեղա առաջին որը թագնվել մեր  
տան ներքնահարկում: Բարձրացել էյի պատի վրա, մի  
փոքրիկ պատուհանի նեղ անցքից դիտում էյի մեր գա-  
վիթը: Մեկ էլ տեսնեմ, տիկին Իդիլլյան տանից դուրս  
բերեց դաշնակների յեռագույն դրոշակն ու հենց գա-  
վիթից սկսած, մի քանի ավարա տղաներ շուրջն առած,  
դուրս գնաց բղավելով:

— Կեցցե՛ մեր յեռագույն դրոշակը, կեցցե՛ սրբա-  
զան դաշնակցությունը...

Դարպասի բաց դռներից յերևում եր փողոցը. տե-  
սա, վոր մի քանի անգամ իրա շքախմբի հետ գնաց յե-  
կավ փողոցով, ելի դաշնակցական կեցցեներ կանչե-  
լով:

Հիմի յես մտածում էյի, թե ես կնիկը, վոր դիմակը  
փոխեց, դրա վրա զարմանալու բան չկա—մանր բուր-  
ժուակն ճահիճներում պետք է մանր—բուրժուական  
գորտեր կռկռան... բայց դե հարց եր գալիս—կմատ-  
նի՞ ինձ, թե չե... մտածում էյի,—կարելի յե չմատ-  
նի,—այն բոլորից հետո, ինչ վոր կատարվել եր...  
ինքս ինձ ասում էյի— կմնամ մինչև յերեկո, իսկ հե-  
տո դուրս կգամ թագստից, կազատվեմ...

Բայց վոնց վոր յերևաց, յես շատ միամիտ էյի,—  
դեռ եղ մտածելս չեր վերջացել, մեկ էլ տեսնեմ—ես  
տիկին Իդիլլյան հետն առած մեծ բեխերավոր մի մաու-  
զերիստ, յեկավ մեր տուն: Հետո իմացա, վոր սրանք  
մտել են մեր բնակարանը, ահաբեկելով կնոջս, վրան  
ատրճանակ բռնել, թե՛ ասա, վո՞րտեղ է ամուսինդ-  
նա էլ, ի հարկե, պատասխանել է, թե չգիտեմ: Յերբ  
ներքև իջան, յես լսեցի նրանց խոսակցությունը—տի-  
կինը քաջեց խմբապետին սանդուղտների տակն ու ա-  
սաց:

— Հենց վոր տուն գա, իսկույն իմաց կանեմ քեզ:  
Խմբապետը մտրակով խփեց սյունին, սպառնաց,  
մի հայհոյանք ուղղեց մեր հասցեյին, ու գնաց:

Հիմի ընկերներ, ինչպես առաջվա ժամանակ ասում  
էյին, պատիվ ունեմ ներկայացնելու ձեզ տիկին Իդիլ-

լյային. դուք լսեցիք, թե ինչպես նա փրփուրը բերա-  
նին ինքն իրան գովում եր. յես էլ ես հայելին առաջն  
եմ դնում, վոր լավ տեսնի իր իսկական պատկերը...

Տիկին Աղեւյան ընկճված, նայում է վրտների ա-  
ռաջ. նրան թվում է, թե մեջը ինչ վոր թեւեր են  
կտրվում, թե մարմինը փլվում է, ու պիտի գլորվի խոր  
անդունդը...

Բոպեյական լուսթյան մեջ նա կարծես սպասում է,  
վոր բանվոր Սարգիսը կշարունակի իր խոսքը: Նա ճիգ  
է անում, ինչ վոր արհեստական թուխք անելու ու հան-  
կարծ բղավում է խտերիկային ձայնով:

— Սո՛ւտ ե... գրպարտություն ե... յես բողոքում  
եմ... յես կապացուցեմ...

Նա շարունակում է իր անկապ բացականչերը:  
Նախագահը վեր է կենում տեղից զանգահարում: Կար-  
ծես հուզումն անցնում է ժողովականներին. սկսվում է  
ընդհանուր շարժում. ամեն մեկը շտապում է հարևա-  
նին հայտնելու իր տպավորությունը: Հավասարակշու-  
թյունը կորցնում է նույնիսկ Նահապետյանն ու դառ-  
նալով իր կողքինին, ասում է տիկնոջ մասին:

— Սա վոչ թե ծառայություն է, այլ թյուրիմա-  
ցություն:

«Թաղևոսն» ու «Բարդուղիմեոսը» չվարած նայում  
են իրար յերեսի:

Աղմուկի մեջ մի պատանի մեծ դժվարությամբ ա-  
ռաջ է գալիս խիտ շարքերի արանքով ու հասնելով բե-  
մին՝ նախագահին հանձնում ձեռին բռնած թուղթը:

Հանդիսականների ուշադրությունն անցնում է  
պիտների վրա, վորը կանգնել եր գինվորական պողպատի,  
դեմքը խոժոռած, մոռալ արտահայտությամբ. մի  
կենտրոնացած միտք իշխում եր նրա դեմքի վրա,  
կնճուռում թարմ ճակատը, գունատում այտերը...

Յերբ լուսթյունը վերականգնեց, նախագահը կար-  
դաց:

— «Մայրիկ, դու դավաճանել ես մեր կարմիր դրո-  
շակին. յես այլևս չեմ կարող ապրել քեզ մոտ. յես հրա-

ժարվում եմ քեզանից ու այսուհետև կապրեմ իմ ընկեր-  
ներ—պիոներներին հետ:—Գարիկ»:

Նախագահը նայեց արձանացած պիոներին սպառնացող  
աչքերին և ուզում էր ինչ վոր պատասխանել, բայց այդ  
վայրկյանին հանկարծ պայթեց տիկին Ադելյայի իս-  
տերիկային ծղրտոցը.

— Վա՛յ վորդիս, եդ ի՛նչ արիր... վո՛րդիս...  
քեզ համար... քեզ պահելու համար եմ արել...

— Ուրեմն ճի՞շտ էյին ընկերոջ ասածները,—  
բարձր խրխոտ ձայնով հարցրեց նախագահը, բայց  
տիկին Ադելյան չպատասխանեց. նա նորից բղավեց,—  
վո՛րդիս, ու նվաղելու նշաններ արավ...

Իսկ վորդին,—պիոները գինվորական ձևով պտտվեց  
ձախ կողմի վրա ու շարժվեց դեպի մուտքը:

1931 թ.

## Մ Ո Ւ Ա Խ Ո Տ Ը

Վաղ առավոտից կոլխոզականները սկսել էյին քաղ-  
հանը ճակնդեղի ու ծխախոտի ցանքերում: Ընդարձակ  
դաշտում, սկսած կոլխոզի մեծ այգուց, սփռվել էյին  
մի քանի տասնյակ տղամարդիկ ու կանայք ու մաքրում  
էյին մատաղ ծիւերը մոլախոտից: Որը պարզ էր ու  
վճիտ. պայծառ արևը լիուլի բացել էր հորիզոնը. յեր-  
կընքի ջինջ կապույտը, ասես նորոգված ու թարմացած  
բնության հետ, գրավում էր աչքը, տանում հեռուներն  
ու իջեցնում կանաչազարդ սարերի վրա, մեղմ յեզերե-  
լով նրանց յերկարածիզ գագաթները:

Պետրոսի մասն ընկել էր այգու մեջ, մի մեծ բա-  
ցատում, վորի յերկու կողմից պտղատու ծառեր էյին:  
Գլխին մի աղլուխ փաթաթած, կոացած մարդի վրա,  
նա խնամքով քաղում էր մոլախոտերը ու ձգում առվա-  
փոսը; վորտեղ նրանք թառամում էյին, ուշաթափ լի-  
նում արևի հուրքից:

Առավոտյան հովը հետզհետե տեղի յեր տալիս կե-  
սորվա տապին. տաքացած հողն ալիքում էր ներքևից  
իր սոթը, ծանրացնում շունչը, ու քրտինք տալիս ճա-  
կատին. արևը խայթում էր կորացած մեջքը, յերբեմն  
միայն գիջելով սարից յեկած հովին, վորը թեթև անց-  
նում էր իր ախորժելի շնչով ու դանդաղում դիմացի  
ծառերի վրա: Գարավոր ընկուղենին ծանրախոհ, խուլ  
աղմկում էր իր խոշոր տերևներով, կեռասենին բաց-  
վում, կարմրին էր տալիս իր նորահաս պտուղներով.  
Իսկ սալորենիների մանրիկ տերևներն արագաչարժ  
պար էյին բռնում:

Պետրոսն սկսել էր աշխատանքն արտի ծայրից ու  
դնում էր դեպի ներքև: Մերթ ընդ մերթ, յերբ նրա

մեջը բողոքում եր յերկար ճկվելուց, ու արևի տա-  
պից, նա կանգնում եր, ձգվում ու հանգիստ տալիս  
մկաններին: Այդ բոպեններին այգու ծառերի խիտ ստ-  
վերները գայթակղիչ գրավչությամբ կանչում էյին,  
բայց նրա հայացքը դառնում եր դեպի ներքև, վորտեղ  
յերևում եր Արփիկի գիլ կարմրած դեմքը սպիտակ  
գլխաշորի մեջ: Կանգնում եր Պետրոսը, ամեն անգամ  
աչքով չափում իրենց բաժանող տարածությունն ու ա-  
սում:

— Հա՛, քեզ մատաղ, հա՛, մոտենում ենք իրար... .

Նա ասում եր ինքն իրեն, հաղիվ լսելի ձայնով,  
բայց կասկածով հետ եր նայում, — չլինի՞ թե վորևե մե-  
կը լսեց իր ասածը: Յերբեմն նա փոքր ինչ ձգում եր  
իր հանգիստը, ավելի յերկար եր նայում, բայց յերբ  
Արփիկը, զգալով իր վրա հառած հայացքը, ինքն ել եր  
նայում, Պետրոսն իսկույն կռանում եր նորից ու շա-  
րունակում պոկոտել անթիվ մանրիկ մոլախոտերը: Ար-  
փիկի հայացքն իր մեջ առնելով, նա յեւ չէր նկատում  
չոգն ու տոթն ու կրկնապատկում եր յեռանդը, ախոր-  
ժելի թեթևություն զգալով ամեն մի վերջացրած, քաղ-  
հանած մարգից հետո:

Բայց ահա մոտենում է դադարի ժամը. բոլորն  
զգում են այդ բոպենները, կարծես մեկն անտես շնջում  
է նրանց աղանջին ու հանգստի հրավիրում: Վերջա-  
պես ճաշ բերողը յերևաց բացատի ծայրին: Մեկ մեկու  
յետևից բոլորը թողին գործն ու խմբվեցին մեծ ընկու-  
ղենու տակ: Աշխատանքի լուսթյունը խախտվեց. սրա-  
խոսելով, ծիծաղելով, խմբակը նստեց ճաշի:

Ճաշից հետո կոլխոզականները ցրվեցին այգում:  
Ընկուղենու տակ մնաց միայն Արփիկը: Պետրոսը, թե-  
պետ մեծ ցանկություն ուներ մնալու նրա մոտ, բայց  
բամբասանքի առիթ չտալու համար նույնպես քաշվեց  
անկամ, դանդաղ քայլերով:

Քիչ անց դիմացի այգուց դուրս յեկավ Արփիկի մո-  
րաքույրը՝ Հերիքնազը, ու աջ ու ձախ աչք ածելով,  
մոտեցավ նրան:

— Բարով Արփիկ ջան, վո՞նց ես:

— Լավ եմ, — ասաց Արփիկը, փորձող հայացք ձգե-  
լով նրա վրա:

— Յեկել էյի մեր բաղը, ասի մի գնամ տեսնեմ.  
Ի՞նչի չես յերևում:

— Ժամանակ չկա, մորքիր. նստիր:

Հերիքնազը նստեց կանաչ խոտի վրա, Արփիկի մոտ,  
ու ձեռքերով կղակը բռնած փոքր ինչ լուեց տատանման  
մեջ, ապա սկսեց փաղաքշող ձայնով:

— Արփիկ ջան, չարչարվում ես, ելի. բա սա քու  
բանն ա՞:

— Ինչի՞ չի իմ բանը. ուրիշներից ինչո՞վ եմ պա-  
կաս կամ ավել:

— Ե՛հ, ասում ես ելի... դե գիտաս Արփիկ, քու  
մոր տեղն եմ... վոր տեսա քեզ ետտեղ մենակ նստած  
սիրտս փուլ յեկավ...

— Ինչի՞ յեմ մենակ. բա եսքան ընկերներն ի՞նչ են:

— Ձե՛, իմ ասածն ուրիշ ա... բա քու բանը վո՞նց  
պետք ա լինի, Արփիկ ջան, ելի պետք ա բաժանված  
մնա՞ս...

— Նոր ես իմանո՞ւմ, վոր վերջացած պրծած ա.  
ասելդ ի՞նչ ա:

— Դե լավ չի ե՛լի...

— Բա քու լավը վո՞րն ա. ուզում ես ելի գնամ  
են տավարի ցավի մո՞տ:

— Արփիկ ջան, բա վո՞նց անենք, տղամարդ ա, ես-  
պես ել կլինի, ենպես ել. կնիկը պետք ա համբերի...

— Ինչի՞ պետք ա կնիկը համբերի, — վրա պրծավ  
զայրացած Արփիկը. — յես նրա ճորտն ե՞մ. զոռով մար-  
դու յեն տվել, հիմի խելքի յեմ յեկել, չեմ ուզում. ինձ  
հետ ապրող մարդը պետք ա իմ սրտովը, իմ ընկերը լի-  
նի, թե չէ իսկի մարդ չեմ ուզում:

— Բա առանց տղամարդու, առանց տեր ու տիրա-  
կանի վո՞նց կլինի. տղամարդու, վոտի ցեխն ել տանը  
զարդ ա...

— Եդ հին խրատները քեզ համար պահի. առաջդ  
յերեսա չեմ. յես գիտամ, ո՞վ ա քեզ զրկել. նա հենց  
ինքը տեղովը մին վոտի ցեխ ա... դու լավ կանես,

ձեռք քաշես. մի անգամից իմացիր, վոր կուժը կտարել, փշրվել ա, ել կոծկել չի լինիլ:

— Դե լավ, լավ, սիրտդ շուռ մի բերիլ. խոսք ա ելի, ասում եմ. ի՞նչ անեմ, սիրտս ցավում ա.

— Այ, վերջին անգամն եմ ասում, մորքեր, գործը զագսով հաստատված, պրծած ա. թե վոր մեկ ել խոսք ես գցել դրա մասին, բերանիցս կծու խոսքս կլսես.

— Լավ, վոր սիրտդ նեղանում ա, ել բան չեմ ասիլ. դե վոր վերջացած ա, ել ի՞նչ խոսք. որենքի բան ա...

Հերիքնազը լսում ե ու նայում չորս կողմը սպասողական դրուժյան մեջ. ասպա, կարծես ինչ վոր հիշելով, հարցնում ե.

— Աղչի, Արփիկ, ասում են սիրտդ ուրիշի վրա, զբուստ ա՞:

— Ելի բողջեդ բաց ար՞իր—զայրացավ նորից Արփիկը.— լավ կանես դրանից չխոսես. եդ բամբասողները ինչ ուզում են, թող կուկուան. յես ուշք դարձնողը չեմ—յես ոչովի հաշիվ չունեմ տալու.

— Դե Արփիկ ջան, կարելի ա մեծացել եմ, խելից ընկել. ի՞նչ անեմ, դիմանում չեմ. տեսնում եմ քեզ պես ջահել, սիրուն կնիկն առանցի մարդի, առանցի ոջախի... իմ սիրտը հու քա՞ր չի...

Արփիկը լսեց ու դժգոհ նայում եր գետնին: Հերիքնազը ջղայնորեն շոյում եր կզակը, նորից զգուշությամբ աչք ածելով չորս կողմը: Չանցած մի քանի րոպե, դիմացի այգուց դուրս յեկավ խունացած պիջակով մի գյուղացի, ու փոքր ինչ մոտենալով կանգ առավ:

Նրա դեղնած, ջղոտ դեմքի ամեն մի կետից գազագած մարդ եր նայում. գազազած. եյին փոս ընկած կարմրած աչքերը, ծամածուած բերանը, ալեխառն, ավելանման մորուքը:

Հերիքնազը նրան նկատելուն պես վեր կացավ տեղից, իսկ Արփիկը մնաց նստած, յերեսը դարձնելով մի կողմը:

— Բարի աջողում,—ասաց Սարիբեկը (այսպես եր նրա անունը), դիմելով Հերիքնազին:

Հերիքնազը պատասխանեց գլխի շարժումով:

— Բա դու մեծ կնիկ ես, Հերիքնազ, մոր տեղն ես, կարում չե՞ս, խրատես եդ կնկան, վոր նամուսը հվաքի, տուն գա...

— Ի՞նչ ես կոծոծի նման փեշիցս կպել,—վրա պրծավ Արփիկը,—քեզ հզար անգամ ասել եմ, վոր բաժանվել եմ որենքով...

— Բա ես որենք ա՞, վոր կնիկարմատը վեր կենա, տուն ու տեղ թողնի, թե բաժանվում եմ մարդուց...

— Բա վո՞րն ա որենքը—վոր զոռով մարդու տան, ուշունցի ու ծեծի փայ անե՞ն. դնա քու ուզած կնիկը ճարի յես քու ընկերը չեմ. դու ձայնագուրկ, յես աշխատավոր...

— Եդպես ա, հա՞, մենք մարդահաշիվ չե՞նք. մի ասա տեսնեմ, ո՞վ ա եդ որենքն անողը.—իմ տանը նոքար եր, հիմի մեծ մարդ ա դառել, ինձ ձայնից զրկում ա՞:

— Յես քեզ հետ գլուխ չունեմ. ինձ հանգիստ թող: Պետրոսը հեռվից դիտում եր այս տեսարանը. նկատելով, վորը ձայները բարձրանում են, նա մոտ յեկավ այնքան, վոր լսելի լիներ խոսակցությունը, ու ախանջը պահելով նրանց կողմը, այնպես ձևացրեց, իբր թե դիտում ե մարդերը: Տաքտիկական նկատառումներով նա չեր ուզում խառնվել խոսակցությանը, բայց ուզում եր պաշտպանել Արփիկին, յեթե Սարիբեկը վիրավորեր նրան կամ բռնություն գործ դներ:

Սարիբեկը, նկատելով Պետրոսին, ավելի մոայլվեց, ու սիրտը վախ ընկած—ուզեց վերջ տալ խոսակցությանը:

— Բա հիմի ասելդ ի՞նչ ա,—դիմեց նա նորից:

— Են ա, վոր քու ձամբեդ զնաս, ինձանից ձեռք քաշես:

— Լավ, յես հո գիտեմ, քեզ գլխից հանողն ո՞վ ա,—ասաց նա, իսկ նայելով Պետրոսի կողմը.—եդ ել չի մնալ քեզ...

— Ինձ ոչով հրամայող չկա... յես եմ իմ գլխի տե-  
րը. ինձ սովորեցնողը խորհրդային էլ խաանությունն ա,  
գնա նրա հետ խոսի. ինձ հանգիստ թող, թե չե ժող-  
դատարան կգնամ.— դրա համար մեծ պատիժ կա:

— Հը՛մ, հաթա (սպառնալիք) ել ես տալի՞ս...  
դե կտեսնես սրանից յետը...

— Ինչ ուզում ես արա. քեզանից վախող չկա. դու  
ինձ համար վոնց վոր են մոլախոտը, քաղի ու դեն գը-  
ցի...

Սարիբեկի դեմքը ծամածուվեց կատաղությունից.  
նա ուզում եր թունդ հայհոյանք թափել Արփիկի գըլ-  
խին, բայց Պետրոսի ներկայությունը կաշկանդեց  
նրան:

— Հա՛ յես... մոմոաց նա ատամները կրճատաց-  
ներով ու յերեսը դարձնելով, հեռացավ, շեղելով ճամ-  
բեն, դիպչելով ծառերի ճյուղերին, ու ընկնելով առ-  
վափոսերը:

Պետրոսը, նկատելով նրա նահանջը, հանգիստ  
ժպտում եր յետևից:

Արփիկը վեր կացավ տեղից, թափ տվեց փեշերը,  
ուզղեց գլխաշորը, ու նկատեց Պետրոսին: Նրանց հա-  
յացքները վայրկյանաբար իրար առան թեթև ժպիտով:

«Ե՛հ, մարդ ել կա, մարդ ել,— անցավ Արփիկի  
մտքով. նրա մեջ ցանկություն յեկավ մոտենալ Պետ-  
րոսին, փաթաթվել վզովը, ասել, վոր նրան շատ ե սի-  
րում, բայց այդ անկարելի յեր... պեաք եր համբերել,  
մինչև վոր Պետրոսը բացի խոսքը...»

Արտի ծայրից նշան տվին կարմիր դրոշակով: Դա-  
դարը վերջացավ ու նորից սկսվեց քաղհանը: Հերիք-  
նազը մնաս բարով ասելով, հեռացավ, իսկ կովխողի  
կանայք շրջապատեցին Արփիկին:

\*\*\*

Իրիկնապահի արևն անդոր սահում, անցնում եր,  
անցնում աշխատավորների վրայով. լեռների հովն իր  
առատ շնչով ուշքի եր բերում հոգնած մարմինները. բա-  
ցատի մի կողմից, ծառերի յերկար ստվերները թեք

կտրում էյին մարգերն ու գնում, ծալվում դիմացի ցան-  
կապատի վրա:

Պետրոսն ու Արփիկն արդեն հասել էյին իրար ու  
միասին աշխատում էյին վերջին մարգի վրա, զուգըն-  
թաց գնալով— մեկն աջ, մյուսը ձախ կողմից: Յերկուսն  
ել հացիվ էյին զսպում իրենց ուրախությունը, վոր  
միասին են, այսպես մոտիկ, ու կարող են խոսել մինչև  
մարգի վերջանալը:

— «Մ՛յ, հիմա կասեմ»,— անցնում եր Պետրոսի  
մտքով, բայց նա խոսում եր բոլորովին այլ բաներից.

— Արփիկ, եսոր արտաժամ ենք, կարող էյինք մի  
մարդ ել ավել քաղհանել:

— Դե շատ զոռելն ել լավ չի. եզուցվա համար ել  
պիտի ջան պահել...

Պետրոսը լռում ե մի պահ, հետո ասում.

— Եդ քու մարդը ի՞նչ եր բորոթում, բա բաժան-  
ված չե՞ս:

— Բաժանված ել եմ, մտքից հանած ել. բայց դե  
հաջոցը չի կտրում. զահլես գնացել ա.

— Թե վոր եղպես դադար չի տալիս, չարչարում ա,  
դի՛մի՛ր ժողդատարան, գըրի՛ր թե հալածում ա...

— Չեմ ուզում բամբասանքի մաստակ դառնամ թե  
չե վաղուց դրա պոչը կշռած կլինեյի. բայց եսոր փիս  
դամարին կպա. կատաղեց...

— Վո՞նց:

Արփիկը ժպտում ե, կամար սև հոնքերը բարձրաց-  
նելով:

— Ասի դու վոնց վոր մի մոլախոտ-պոկի ու դեն  
զցի...

Պետրոսը ծիծաղեց.

— Թամամ մոլախոտ... ամա՛ դրանց լավ զտե-  
ցինք. թող գնան առաջվա աղայությունը միտը բե-  
րեն...

— Յերանի մի քիչ շուտ գար եղ մաքրելը, դրանց  
քոքը կտրեր միանգամից:

— Չաղսին արդեն հայտնել ե՞ս:

— Վո՞նց չե, քա՛նի ժամանակ ա...

Նորից մեջ է ընկնում լուսթյունը, նորից Պետրոսի մտքով անցնում է—«ա՛յ հիմի կասեմ»... Բայց վճռա- կան բույեյին նա կանգ է առնում.—«չե՛ մի քիչ կարգե՛ բերեմ գործերս, սենյակը նորոգեմ... հետո»...

Ու խոսում է ուրիշ նյութերից.

— Դրանք հո շահագործող են, ես խոսերի նման ուրիշի հյութերով ապրող. ինչ վոր նոր բան կա, դրանց գլխովին վնաս ա. դրանց մոտ սոցիալիզմի անուն տաս,—մեկ է, թե խանչալը կողքը խրես... Բայց ի՞նչ կասես, վոր մեր կոլխոզնիկները մեջ էլ կան մին-մին փչեր. չեն հասկանում, վոր գործը փչացնում են...

— Դե հասկանալը մի որում չի լինիլ, սովորել ա հարկավոր,—ասում է Արփիկը մտերմաբար նայելով Պետրոսին, կարծես ասելով— «ինձ ել կսովորեցնես չե՞...»:

— Ափսոս վոր մեզանից քչերն են յեղել կարմիր բանակում, ենտեղ շատ բան են սովորեցնում...

Ապա փոքր ինչ լուելուց հետո նա շարունակում է իր մտքերը.

— Գիտես ի՞նչ կա Արփիկ, ես սոցիալիզմի, կոլխոզի մարդն ուրիշ բան ա. նա պետք է հասկանա աշխատանքը. չպետք է ասի—յես իմ փայ գործը վերջացրի, ու դրադ կքաշվեմ. չե՛, նա պետք է ասի—ես իմ փայը կանեմ, ես ավելի ել պլանի փայը... կարելի ա վոր մի հիվանդ ընկեր կա, կամ թույլ, չի հասցնում գործը. նրա տեղն ավելացնեմ իմ աշխատանքը... եղպես վոր լինի ել ո՞վ կհասնի մեր յետեից. են ժամանակ յերկի-րը դրախտ կդառնա...

Մարդը վերջանում է, բայց զույգը ելի դեռ մլուլ է տալիս: Արդեն դադար է. կոլխոզականները խմբվել են արտի ծայրին ու հետաքրքիր հայացքներն են ուղղում Արփիկի ու Պետրոսի կողմը: Արփիկը, սթափվելով, արագ քայլերով գնում է դեպի խումբը. նրան ավելի հանդարտ հետևում է Պետրոսը: Իրար ընտելացած խումբը թեթև զրույցով քայլում է դեպի գյուղը, մի ընտանիքի անդամների նման:

Նրանց հանդիպում է գյուղի ծայրին կոլխոզի ցրիչ Պավլիկն ու հայտնում.

— Ընկերներ, ես որ ժողով ա...

\*\*\*

Յերեկոյան արտադրական ժողովից հետո Պետրոսն ու Արփիկը կարծես իրար խոսք տված, դուրս յեկան միասին, ու նեղ փողոց մտնելով արագացրին քայլերը, վորպեսզի մենակ մնան:

Յերկուսն ել հրճվանքի մեջ էյին, մանավանդ Արփիկը. յերկուսն ել այդ ժողովին հայտարարվեցին հարվածայիններ...

Չարմանում եր Արփիկը. վո՞նց թե ինքը մի թույլ մնիկ, տանջված, խեղճացած իր մարդուց, հիմի տղամարդկանց հետ ուս է դնում, ու մինչև անգամ հարվածային է դառել...

— Տեսա՞ր, Արփիկ, վոր ասում եմ մեր մեջ փչեր կան... Սարգիսը, մեկ էլ Շուշանը վրա ընկան ինձ, շնորհքները ցույց տվին.—ասում են եղ ի՞նչ խնամիություն ա. գնում էք հեշտապրծուկ անում, մի յերկու խոտ պոկում, թե հարվածային եք... յես ել ասի—դե յե՛կեք ձեր աչքով տեսեք թե մի մոլախոտ կգտնե՞ք մարգերում... դե հազար ասա, վոր հասկանում չեն...

— Նախանձում են, չեն ել ամաչում...

Նրանք քայլում են լուռ, յերկուսն ել սպասելով թե ինչ—վոր արտասովոր դուրեկան խոսք է ասվելու. Արփիկը սպասում է, վոր Պետրոսը պիտի «բացվի», բայց դարմանում է, յերբ հասնում է իր բնակարանին ու ելի նա լուռ է «եղ մասին»...

Իրար ձեռք են սեղմում ու բաժանվում, յերկուսն ել մտածելով իրար մասին...

Պետրոսը գնում եր նեղ ու մութ փողոցներով, մտածելով թե ահա, մի քիչ ել անցնի, եսպես մի ամիս, գործերը կդրատի, ու իր միտքը կհայտնի Արփիկին. դե նրա սիրտն ել, յերեվում ա, իր վրա յա... ու կապրեն միասին, կաշխատեն... հետո միտքն անցնում եր կոլխոզին, մտածում եր, թե ի՞նչ պետք է անել, վոր բո-

լորն ել ուրիշ տեսակ, «սոցիալիզմի մարդիկ» դառնան ու հասկանան աշխատանքը... պետք է սովորեցնել, դեռ շատ պետք է սովորեցնել...

Նա մոտենում է գյուղի ծայրին, վորտեղ իրենց տունն էր: Մովելով դեպի մի ցանկապատի անկյունը, նա հանկարծ շքմում է ատրճանակի ձայնից, ու ակամա հետ է ընկնում, զգալով մի ցնցող հարված ուսին: Մի ակնթարթում ինչ-վոր միտք ասում է.—վա՛յր ընկիր, ձեռքի՛ր սպանված... ու նա ընկնում է, փուլում գետնին. մեկը վազում է թմփթմփալով ու հետո տիրում է լուռ թշուռ:

«Վիրավորված եմ... մեռնում եմ»... անցնում է Պետրոսի մարող գիտակցության մեջ. մահվան ոտարոտի միտքն ընդգրկում է նրան...

Բայց ահա լավում են մարդկանց ձայներ, զալիս են լայտերներով ու խմբվում իր շուրջը. ուսի վրա արյուն է սառչում, հոսում է ներքև: Իրեն բարձրացնում են, տանում տուն: Ինչ վոր մոռացություն է զալիս վրան, կարծես ուրիշ աշխարհում լինեք...

\*\*\*

Յերեք օր է անցել: Պետրոսը լավանում է, բժիշկը բանի անգամ նայել է ուսի վերքն ու ասել, վոր վտանգ չկա: Մայրը հազիվ է ուշքի յեկել, ու ելի վախենում է, հարցնում բոլորին, վորպեսզի ստուգի,—ճիշտ է՞, վոր վտանգ չկա ու չչկված է, ինքն էլ չի իմանում թե ի՞նչ է անում:

Արփիկը հենց նույն գիշերն իմանալով դեպքի մասին, մոռացավ ամեն ինչ, իսկույն վազեց Պետրոսանց տունը, ու մինչև հիմա յեւ գիշեր ցերեկ խնամում է նրան, թողած հին գյուղի ամոթխածությունը: Քանի լավանում է Պետրոսը, մորն ավելի ու ավելի խորթ է թվում ես «ոտար» կնիկը, բայց համբերում է, վորովհետև կոլխոզիցն է:

Յերեք օր է անցել, բայց դեռ չի անցել իրարանջումը կոլխոզում. ժողովներ են անում, գնում, զալիս Պետրոսի մոտ, սիրտ տալիս նրան: Կոլխոզի նախագահ

Մխակը, քրտնքից այրված դեմքով, մեծ բլուկնուրը դրսի կրծքադրսանից դուրս ցցած, հարցնում է խրոխտ ձայնով.

— Պետրո՞ս, եդ վո՞ր ճակատամարտում ես վերք ստացել... մի՛ վախիլ,—թշնամին ձեռներիս ա արդեն. Սարիբեկը բռնված ա. տեսնող ա յեղել փախչելիս, ատրճանակն էլ գտել են գոմում...

Պետրոսն ուզում է ինչ վոր ասի, բայց նախագահը միջոց չի տալիս.

— Ղո՛չաղ կաց, Պետրոս, ես թշնամիները «կուզան ու կերթան». մենք ելի մեր հարվածային գործը կշարունակենք...

— Ախչի Արփիկ, յերևում ա, լավ ես մտիկ անում, շուտ ա լավանում, միայն թե տե՛ս, մենակ աչքով չի մտիկ տաս, մի քիչ էլ փորը կշտացնես... Դե յես գնացի, գործ ունեմ, մնաք բարով...

Նախագահի ակնարկը ժպիտներ է թողում Արփիկի ու Պետրոսի դեմքին: Արփիկը նայում է դետնին ու անհարմար զգալով, խոսք է գցում ուրիշ բանի վրա:

— Պետրոս, իմացա՞ր Սարիբեկը բռնվել ա... ուզում էր քու գլուխն ուտի, իրանը կերավ...

— Հա՛, Արփիկ, քո մոլախոտը գնաց... Հիմի կապրես նոր կյանքով... Մի բան ունեմ ասելու Արփիկ, արի մենք մշտական մոտ ընկերներ լինենք, ապրենք միասին... Թե վոր դու դեմ չես...

Արփիկը լուռ է:

— Դե վոր մոտ ընկեր ես, Արփիկ, ձեռք տուր ինձ. ապրենք միասին, աշխատենք մեր կոլխոզում...

Ու առողջ ձեռքը հանում է անկողնից.

Արփիկը ձեռք է տալիս և ուզում է շուտով ելի հետ տանել, բայց Պետրոսը սղմում է, չի թողնում:

Ներս է մտնում մայրն ու կանգնում ապշած.

— Մա՛յրիկ, խնդրում եմ, դու յեւ ձեռք տուր Արփիկին. հիմի սա իմ մոտ ընկերն ա, պետք ա միասին ապրենք...

Մայրը խեթ նայում է Արփիկին իր հին, խամրած աչքերով. յերևում է, նա դժգոհ է, բայց վորդու խաթ-

ըը չի կոտորում, մոտենում է ու իր չոր, սառը մատնե-  
րով բռնում Արփիկի ձեռքը: Ապա նորից դուրս է գնում  
բակը ինքն իրեն փնթփնթալով:

«Նսպես ել աշխարհ կլի՞... Կոլխոզ, կոլխոզ—ասե-  
լով յերեխիս իրան կապեց... բա ազապ տղեն մարդա-  
թող կնիկ կառնի՞»...

1932 թ.

## Դ Ա Վ Ա Դ Բ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն Ը

Լույսը նոր էր բացվել, յերբ Սուքիասը զարթեց  
դռան թխկոցից: Նա իսկույն վեր թռավ անկողնից ու  
չապկանց, վոտաբորիկ մոտենալով դռանը, հարցրեց.

— Ո՞վ է:

— Յես եմ, Յերվանդը, — լավեց դրսից մի խուլ  
ձայն:

— Մի քիչ սպա՛սիր, ես բոպեյիս, — ասաց Սու-  
քիասն ու դառնալով դեպի թախթը, սկսեց շտապով  
հագնվել: Մինչ այդ նրա կինը, մի ակնթարթում վրան  
ձգելով իր դերյան, հավաքեց անկողինները, թողնելով  
պառկած իր յերկու յերեխաներին:

Սուքիասը բացեց դուռը: Յեկողը գյուղխորհրդի  
նախագահն էր:

— Բարի լույս, — ասաց նա, քունը կոտրած մար-  
դու թավ ու խոհուն ձայնով. — ներողություն կանես,  
խկի գալու ժամանակը չի, բայց դե հանգամանքը պա-  
հանջում ա:

— Վոչինչ, ընկեր Յերվանդ, համե՛ցեք, նստի՛ր,  
մեր գործը ժամանակ—անժամանակ չի հարցնում:

— Գիշերս իմացա, վոր յեկել ես. ես ինչի՞ ուշա-  
ցար:

— Դե՞ ի՞նչ ասեմ, գիտես ելի քաղաքի բանը—  
գնում ես վարիչի մոտ, ուղարկում է գործավարի մոտ,  
նա յեւ հաշվապահի, վերջն եւ կնպես է դուրս գալիս,  
վոր վաղը պիտի գնաս. եղպես մի յերկու բյուրոկրատի  
պատճառով գործը ձգձգվում է, մի թուղթ գրելը դառ-  
նում է պառավի հեքիաթ:

— Հիմի դու են ասա, ցորենն ու տրակտորը գալիս  
ե՞ն թե չե:

— Շուտով կուղարկեն. հասաատ խոսք եմ առել, վոր մեզ առաջին հերթին տան:

— Բա եղ լավ չեղավ... հանգամանքն ենպես ա յեկել, վոր մենք մինչև ետոր պետք ա անպատճառ ստացած լինեյինք. մեզ համար մի որն ել ահագին նշանակություն ունի...:

— Ի՞նչ է պատահել—անհանգիստ տոնով հարցրեց Սուքիասը:

— Կուլակները դաստեն նորից սկսել ա պրավակացիաներ տարածել...:

— Ելի սկսե՞ց...:

— Հա, քու գնալուց հետո նրանք նորից շարժվեցին. սկսեցին տարածել, թե վերևից կարգադրություն ա յեկել, վոր կոլխոզները ցրեն, բայց տեղական իշխանությունը չի ուզում հրամանը կատարի: Են ել են ասել, թե վոչ հաց կստանան, վոչ սերմացու. ով խելք ունի, որ առաջ իր գլխի ճարը տեսնի, դուրս գա կոլխոզից...:

— Բա դուք չեյի՞ք կարող առաջն առնել:

— Գործը շատ գաղտնի յեն տարել. բայց գլխավորն եղ չի. նրանք նպատակ են դրել տապալել գարնանացանը, իսկ դրա հետ ել հույս ունեն, վոր կքայքայվի կոլխոզը. բանն եսպես ա.— յերեք որ առաջ կուլակ Մարտինը հրավերք ա սարքել, մթամ յերեխի կնունքի հանգամանքով, կանչել ա մի քանի հողի ել մեր տատանվող կոլխոզականներից: Յերբ գինին ընկնում ա մերոնց կատարները, են դաստեն սկսում ա ուստավարի կծիկի տուտը բաց անել— ի՞նչ էք, ասում են, քաղցած—ծարավ նստել եղ կոլխոզի անապատում. դուրս յեկեք, փորներդ մի բան տեսնի. չե՞ք իմանում, վոր Մոսկվայից կարգադրել են, վոր ցրեն կոլխոզները: Մերոնք ել ասում են, թե եղ հրամանը դեռ մեզ հայտնի չի. յեթե դուրս գանք, աչքի կընկնենք, մեզ «հակա» կասեն... նրանք ել թե՛ անունը դուրս գալ մի՛ք դնի, բայց ցրվեցեք մի կողմի վրա, մթամ աշխատանքի եք գնում... հացի մասին ել արխային կացեք, մենք մեր մեջ կպահենք ձեզ, միայն թե մեր ասածն անեք... Եսպես խոսք

են կապում, վոր յերեք որից հետո, այսինքն այս առավոտ, ցրվեն...:

Սուքիասը զարմացած աչքերը սևեռեց Յերվանդի վրա, կարծես չհավատալով նրա ասածին: Իր կինը, քիչ հեռու կանգնած, յերկյուղով լսում եր խոսակցությունը, յենթադրելով, թե ինչ վոր դժբաղդություն ե պատահել:

— Բա դուք ի՞նչ եյիք շինում,—ասաց նա հարձակողական տոնով:

— Դե յես գործով խեղդված եյի, ժամանակ չունեյի, մեր տղերքն ել հենց իմանում են, թե կոլխոզի ցուցակը կազմեցին, են ա ամեն ինչ պրծավ. ել չեն մտածում, թե ինչքան խութիկեր պետք ե դրստովեն, վոր գործը գլուխ գա: Թարսի պես բջիջի քարտուղարն ել հենց քո հետևից գնաց քաղաք. պատահել չե՞ս:

— Ձե, դուրս գալուց մի քիչ առաջ իմացա, վոր հիվանդ պառկած ե:

— Մի հանգամանք ել կա մեջը. ես մեր փուչ Բարդամն ել կուլակների հացին ա յեղ քսում...:

— Բարդամը... ա՛յ յես նրա նամուսին ի՞նչ ասեմ:

— Հա՛, դու հո գիտես, նա աչքը դրել եր Մարտինի աղջկա վրա. ասում են գեղեցիկ ա, համ ել նրա հերը մի քիչ պահած կրճունք ունի: Հիմի ես մոտերքումս արդեն բարեկամացել, նշանվել ա, ու գինու թասի վրա ինչ ասես փչում ա իր մասին, հավատացնում ա, թե նամակ ա գրել կենտրոն, շուտով ինձ ու քեզ պետք ա հեռացնեն... իսկ եղ բոլորի աստառն են ա, վոր նա ընկել ա ազդեցության տակ, ուզում ա կոլխոզից դուրս գա, բայց վորպեսզի աչքի չընկնի ու չտուժի, հարմար ա տեսնում ներսից քայքայել...:

— Քայքայե՞լ... նա ի՞նչ է, վոր եղ բանը գլուխ բերի. միայն ինքն իրան կարող ե քայքայել. մի անգամ արդեն կուսակցությունից հանել են, աղաչանքով վերականգնվել ե, հիմի յել ինչպես յերևում ե, գլուխը ցավում ե, ուզում ե բոլորովին հեռացնեն... քո տեղեկությունները ճիշտ ե՞ն...:

— Հաստատ.

— Ումնից իմացար:

— Կոմյերիտ Սամիկից. եղ անալիտանը կարծես հետևից ել աչքեր ունի:

— Ո՞վքեր են մեր կոլխոգականների կուլակների ազդեցության տակ:

— Սամիկը յոթ հոգու անուն տվեց, բայց իսկականն ետը կիմանանք, թե ո՞վքեր են նրանց կողմը. դե քեզ հայտնի ա ելի, ովքեր կլինեն. են վոր ուզում եյինք դտել...

— Հը՛մ... եգպե՞ս. ուրեմն դավադրություն են կազմել և ուզում են պայթեցնել մեր կոլխոգը...

— Հա՛, ենդուր եմ ասում, վոր ուրիշ հանգամանք ա. լավ կլիներ, վոր հետահետ բերեյի ցորենն ու արակատորը. դրանով նրանց պողերը կկտորեյինք...

— Ճիշտ ե ցորենն ես մոմենտին մեծ գործ կարող եր տեսնել. գյուղացիք նեղված են անցյալ տարվա բերքի պատճառով, բայց ելի կասեմ, վոր շատ եք աչքաթող արել... ինչ և ե—նրանք ոգտվել են իմ բացակայությունից և մի նոր փորձ են արել կոլխոգը տապալելու, բայց տակը կմնան...

— Հիմի ի՞նչ կասես, ընկեր Սյուքյաս. յես առաջարկում եմ գնալ միասին գյուղի ծերին հանդիպել մեր դատալիք կոլխոգականներին. առաջինը՝ կիմանանք, թե ո՞վքեր են կուլակների ազդեցության տակ ընկել, վրա յերկուսն ել՝ մեզ տեսնելն նրանց ուչքի կրբերի:

— Ես ե՞ր քո ասելիքը. բայց արթի՞ եգքան մեծ ուշադրություն դարձնել. լավ չե՞ր լինի, մի ուրիշին ուղարկեյինք:

— Չե՛, մեր գնալն ուրիշ ա. գործը պետք ե հենց գլխից կարգի բերել. բավական ա, վոր նրանք իմանան, թե իրանց Փանդերը մեզ հայտնի յեն, արդեն կապերը կթուլանան...

— Լա՛վ, թող քո ասածը լինի:

— Դե վեր կաց, գնանք, թե չե կուշանանք:

Ու միասին դուրս յեկանք տնից:

Արևի առաջին ճառագայթները խաղում եյին գյուղի շրջակա բլուրների վրա, դուրեկան ջերմություն խոտտանալով. հեռվում, լեռների լանջերին, սպիտակին եյին տալիս ծերպ—ծերպ ձյունները, վորոնք որ—որի վրա պակասում եյին ու լայնացնում յեկող դարնանս սահմանները: Դրսում գգացվում եր այն մեղմացած, թարմացնող յեղանակը, վորը հիշեցնում եր աշխատանքի մասին:

Սուքյասն ու Յերվանդն արագ քայլերով դիմեցին դեպի գյուղի ծայրը, պտույտ տալով նեղ փողոցներով, վորպեսզի կոլխոգականները չնկատեն: Հեռվից նրանց ծածուկ հեռեում եր կոմյերիտ Սամիկը. նա դիչերը «գաղանիքը» Յերվանդին հայտնելուց հետո ել չեղ քնել, ու լուսարացին յեկել եր կանգնել նրա տան մոտ, վորպեսզի իմանա, թե ի՞նչ ե անելու: Յերք Սյուքյասն ու Յերվանդը կանգ առան խճուղու մոտ, Սամիկն ել կանգ առավ, թազնվելով մի տան հետևը:

Մի քանի րոպեյից հետո նա մտավ հանդիպակ նեղ փողոցը, դուրս կանչեց իր ընկերոջը, ու ինչ վոր հրահանգներ տալով, նորից վերադարձավ իր առաջվա տեղը:

Մոտ մի ժամ սպասելուց հետո Սուքյասն ու Յերվանդը, նկատելով հեռվից յեկող կոլխոգականներին, չարժեցին դեպի խճուղին: Սամիկը նույնպես մոտեցավ խճուղուն ու նորից թազնվեց, գգուշությամբ հեռեելով իր դիտարանից:

Յերք կոլխոգականները մոտեցան, Սուքյասը ժըպտաց.

— Ես ե՞ս սրանց դավադրությունը. ուղտը ծնեց—ծնեց, մի մուկ ծնեց. ընդամենը հինգ հոգի են:

— Սպա՛սիր, կարելի ա ելի են գալիս,— ասաց Յերվանդն ու մոտ գնալով, առաջինը բարեկց.

— Բարեաջողում,— ասաց նա, աշխատելով, վորքան կարելի յե հանդիստ ձևանալ:

— Բարի լուս,— մեկ—մեկու յետևից ձայն տվին կոլխոգականները, չկարողանալով ծածկել իրենց շփո-

Թուօթյունը: Բոլորի մտքով անցավ, թե առաջները  
կտրել են, վորպեսզի պատժեն դասալքության համար:

— Խեր ըլի, եղ ո՞ւր եք գնում:

Վոչ վոր չպատասխանեց. ճնշող լուօթյան մեջ ա-  
մեն մեկը սպասում եր, թե մի ուրիշը կխոսի: Վերջա-  
պես լուօթյունը խզեց ամենից հասակավոր Մաղաթը:

— Դե ընկեր Սուքիաս, քեզ հայտնի ա, վոր հացի  
պակաս ենք... Գնում ենք մշակութենի...

— Բա եղ վո՞նց ե, բոլորդ միանգամից իրար եք  
ընկել:

— Իրար ենք ընկել, վոր մեկ-մեկու քոմադ անենք,  
համ ել միասին աշխատենք...

— Վոսկի խոսքեր ես ասում, Մաղաթ, միայն ինչի  
մեր կոլխոզումն ել եղպես չես խոսում. կարծեմ, վոր  
մեր կոլխոզն ել իրար ողնելու, իրար հետ աշխատելու  
համար ե...

Մաղաթը կապ ընկավ, փոքր ինչ լռեց, ապա փոր-  
ձեց դուրս գալ անհարմար դրուօթյունից:

— Դե առանց հացի վո՞նց աշխատենք, ընկեր Սու-  
քիաս:

Լսելով հացի մասին, մյուսներն ել մեջ ընկան.

— Հացի կարիք ունենք, չենք կարող սպասել...

— Տանը մի կտոր հաց չկա, վո՞նց դիմանանք...

— Դուք ձեր հացը թողնում եք, գնում ուրիշ տեղ  
հաց փնտռում—ասաց Սուքիասը.— դա յե՞ ձեր խելացի  
գործը:

— Բա վոր ես րոպեյիս մեր տներում հաց չկա՞,—  
նորից խոսեց Մաղաթը:

— Դուք չգիտեյի՞ք, վոր յես գնացել եմ քաղաք  
հացի ու սերմացվի համար. իսկ յեթե շատ նեղված ե-  
յիք, ինչո՞ւ չեյիք դիմում ընկեր Յերվանդին. նա մի  
ճար կաներ, մինչև իմ գալը...

Կոլխոզականները գլուխները կախեցին, ճնշվելով  
Սուքիասի խոսքերից: Առաջ յեկավ Յերվանդը:

— Իսկ ձեզ հայտնի ա՞, վոր գարնանացանի աշ-  
խատանքները պետք ե եզուցվանից սկսենք. չե՞ վոր ձեզ

իմաց եմ տվել. սա անելու բան ա՞. վեր եք կենում, ա-  
ռանց հայտնելու գնում:

Կոլխոզականները լուռ եյին:

Լարված դրուօթյունից նրանց ազատեց Բարաղամը,  
վորը գալիս եր սայլով, իր անոր—Մարտինի և նրա կնոջ  
հետ: Նրանք գնում եյին քաղաք բաժինք գնելու իրենց  
աղջկա համար: Բարաղամը նստել եր խոտի վրա, վոտ-  
ները կախել, ու մեծամիտ դիրք տվել իրեն, խոժոռած  
դեմքով ու ցից պահած գլխով:

Նկատելով Սուքիասին ու Յերվանդին, նա գլխի ըն-  
կավ, վոր կոլխոզականները ձախորդ վիճակի մեջ են  
ընկել, ու յերեսը դարձրեց մի կողմը, ցույց տալու հա-  
մար, թե ինքը վոչ մի կապ չունի նրանց հետ:

— Ընկեր Բարաղամ, խնդրեմ իջնես սայլից, հետդ  
խոսելիք ունեմ,—դիմեց նրան Սուքիասը:

Սայլը կանգ առավ:

— Քաղաք եմ գնում, վոսզ գործ ունեմ, չեմ կա-  
րող—ասաց Բարեղամը մեծամիտ, տոնով:

— Ընկեր Բարաղամ, վորպես կոլխոզի նախագահ,  
պահանջում եմ, վոր դու մնաս այստեղ, հակառակ  
դեպքում յես քեզ կհամարեմ դեղերտիր:

Սուքիասի վճռական տոնից Բարաղամը սթափվեց.  
նա զգաց, վոր հակառակվելու դեպքում գործը կարող  
ե վատ հետևանք ունենալ ու անգոր կատաղությունը  
մեջը խեղդելով, իջավ սայլից: Նա դժկամ մոտեցավ  
խմբին, ու կանգնեց, յերեսը թեքելով մի կողմի վրա:  
Նրա հիմնասիրությունը խոցվում եր այս պարտությու-  
նից, մանավանդ իր անոր, զորքանչի, ու կոլխոզական-  
ների առաջ, վորոնց մոտ նա միշտ պարծենում եր իր  
պիրքով ու աղդեցությամբ:

— Դուք կարող եք գնալ, դիմեց Սուքիասը Բարա-  
ղամի անորը, վորը սայլը կանգնեցրել, սպասում եր:

Բարաղամին հետ պահելը ընկճող տպավորություն  
թողեց կոլխոզականների վրա: Նրանք չեյին սպասում,  
թե նա այդպես կհպատակվի Սուքիասին: Նրանք, ընդ-  
հակառակը, կարծում եյին, թե նա վոչ միայն ինքը  
«կճղի», կանցնի, այլ և իրենց ել կքաշի յետևից:

Մաղաթը նորից դիմեց Սուքիասին խեղճացած ձայնով.

— Բա մեզ բաց չես թողնելու... ախր հացի համար ենք գնում...

Մյուսները ձայնակցեցին.

— Թողեք գնանք մի ձար անենք...

— Մեր բնտանիքներն ո՞վ պետք ա պահի...

Սուքիասը ձեռով նշան արավ, վոր լուեն, ապա յերբ ձայները դադարեցին, ասաց.

— Ընկերներ, դուք մտածում եք հացի մասին բայց պետք է իմանաք, վոր յես ձեզանից ավելի յեմ մտածում. դուք գիտեք, վոր յես եղ մասին գնացել եմ քաղաք, դիմում արել. խոստացել են մի քանի որից հետո ուղարկել ցորենն ու տրակտորը: Իսկ մինչև ստանալն ել մի ձար կանենք, բայց հիմի դուք ասեք, ի՞նչ է ձեր արածը. դուք թողնում եք կոլխոզն ամենապատասխանատու մոմենտին, յերբ աչքներիս առաջ դարնանացանն է: Մի՞թե ձեզ համար հասկանալի չէ, վոր զենք եք դարձել կոլխոզի թշնամիների ձեռքին և ինքներդ եք վնասում ձեր ընդհանուր գործին: Յես չեմ կասկածում, վոր շատ շուտով կզգաք ձեր արած սխալը և ինքներդ կդատապարտեք ձեզ...

Սուքիասի խոսքը դեռ չէր վերջացել, յերբ խճուղուց լավեց թմբուկի ձայն: Գյուղից գալիս եյին զինվորական յերթով կոմյերիտների ու պիոներների միացած խումբը: Նրանց նկատելուն պես, կոմյերիտ Սամվելը դուրս յեկավ իր թագստոցից ու արագ քայլերով գնաց միանալու իր ընկերներին:

Մինչ այդ նա սպասում էր անհանգիստ, ու շարունակ կասկածի մեջ էր, թե իր ընկերները կուշանան ու իր «ծրագիրն» ել չի հաջողվիլ:

Թմբուկի աշխույժ ձայնը քանի մոտենում, ավելի էր գրգռում ուշադրությունը: Սուքիասն ակամա լռեց, համակված մի ցնծուն ուրախությամբ, կարծես յերկար թուխպ որերից հետո արև էր ծագում: Ժպտուն դեմքերով նա ու Յերվանդը դիտում էյին աշխույժ յերթը, մոռացած իրենց գալու նպատակը: Կոլխոզականները

յերեսը դարձրած, նայում էյին ամոթխած, ասես իրենց թագուն հանցանքն այժմ պիտի հայտարարվեք թմբուկներով բոլորի առաջ:

Յերթը հասնելուն պես կանգ առավ. Սամվելը դուրս յեկավ յերկու քայլ շարքերից առաջ ու ասաց առույգ ձայնով.

— Ընկեր Սուքիաս և ընկեր Յերվանդ, մեր գյուղի կոմյերիտների ու պիոներների միացած կոլեկտիվը վորոչեւ է ոգնության գալ կոլխոզի դարնանացանի աշխատանքներին և այսորվանից ձեր տրամադրության տակ է. ոգտվեցե՛ք մեր ուժերից, ինչպես հարմար կգտնեք...

Անակնկալից հուզված, Սուքիասը մի քանի վայրկյան դժվարանում էր խոսել:

— Միրելի ընկերներ, — սկսեց նա, — վողջունում եմ ձեր գեղեցիկ վորոշումը. թեպետ մենք կարող ենք մեր ուժերով առաջ տանել գործը, բայց ձեր աջակցությունը մեզ կրկնակի յեռանդ կներշնչի: Ընկերներ՛ր, դուք մեզ ձեռք եք մեկնում այն մոմենտին, յերբ մեր կուլակներն աշխատում են խլրտում ձգել մեր շարքերում. ահա ձեր առաջ կանգնած այս մի քանի ընկերները, ականջ դնելով նրանց սուտ լուրերին, ուզում են լքել մեր գործը հենց դարնանացանի սկզբին: Սրանք այն տատանվող տարրերից են, վորոնք դեռ յերեսը չեն դարձրել անցյալից ու կանգնել են սոցիալիզմի դռների առաջ մոլորման մեջ. հին ցավը, հին սեփականությունը ծանր քարերով դեռ քարշում է սրանց փեշերից. յես չգիտեմ, կարողացա՞ր արդյոք համոզել այս ընկերներին, վոր դառնան իրենց աշխատանքին, բայց յես գիտեմ, վոր յերբ լսեցի ձեր թմբուկի ձայնը, յես լցվեցի մի մեծ ուրախությամբ. և ասի մտքումս — քանի վոր մեր յետևից ծլում, բարձրանում են այս շարքերը, վորչ մի դժվարանք չի կարող լինել մեր առաջը... ընկերներ՛ր, դուք գիտեք, վոր յես յեկել եմ քաղաքից, բանվորական շարքերից — ձեր կոլխոզում աշխատելու. իմ յետևից կգան և ուրիշները, բայց շատ չի անցնիլ, դուք ինքներդ կփոխարինեք մեզ. սակայն դուք չեք նմանիլ այս ընկեր-

ներին. ձեր հաղթական շարքերը կմտնեն սոցիալիզմի դռներով առանց վարանման, առանց հետ նայելու, ու կտանեն իրենց յետևից բոլոր տատանվողներին. այսօրվանից հայտարարում եմ դարունը բացված—ասաց նա սխալմամբ, փոխանակ ասելու. «դարնանացանը բացված»—դուք կզնաք խմբովին մեր մոտիկ արտերը—քարերը հավաքելու... կրկին և կրկին վողջույն ձեր մատաղ յեռանդին...

— Կեցցե՛... մի՛շտ պատրաստ, —միաբերան թընդացրեցին շարքերը, մի քանի անգամ կրկնելով:

— Այժմ ձեզ եմ դիմում, ընկեր կոլխոզնիկներ—չարունակեց Սուքիասը.—ի՞նչ է ձեր վճիռը. ուզում եք զնա՞լ, խտացնել մեր թշնամիների շարքերը, թե՞ վերադառնալ ձեր կոլեկտիվ աշխատանքին:

Կոլխոզականները դարձյալ լուռ էյին, կաշկանդված տրամադրության մեջ, կարծես պաշարված լինեյին: Լուռթյունը խախտեց ծայրին կանգնածը, վորը շարունակ կնճռոտած, մուսյլ դեմքով նայում էր դետնին:

— Ա՛յ խալխը, ի՞նչ եք սղւս կացել—դիմեց նա, յերեսը դարձնելով դեպի խումբը—բա չե՞ք տեսնում, մեզ խաբել են, վոր ապրուստից դցեն ու հետո թշնամու սրտով ուրախանան. մեզ ասում էյին, թե Մոսկվայից կարգադրել են, կոլխոզները ցրեն. ո՞ր ա եդ հրամանը—տեսնում ե՞ք, սուտ են ասել... բա մեր նամուսն ի՞նչ կասի, վոր մենք գործը թողնենք, զնանք ու ես յերեսերը գան մեր տեղն աշխատեն... չե, սա անելու բան չի. մենք պետք ա շուռ տանք յերեսներս, վոնց վոր յեկել ենք, ենպես ել հետ զնանք, մեր աշխատանքին կպչենք...

Տատանման շարժումն անցավ խմբի վրայով, բայց վոչ վոք չեր խոսում ամաչելուց: Սուքիասը նորից դիմեց նրանց:

— Դե, ընկերներ, վերջին խոսքն եմ ասում.— ով ուզում է, թող զնա, ով չե—վերադառնա մեզ հետ...

Սամվելը նշան արավ: Կոմյերիտ-պիոներական խումբը գինվորական կարգով յերեսը դարձրեց դեպի

դյուղն ու քայլեց առաջ: Նրանց յետևից շարժվեցին կոլխոզականներն լամոթխած դեմքերով: Բարտղամը քայլում էր դժվարությամբ, վոտները բռնվածի նման, իսկ ամենից վերջը զնում էյին Սուքիասն ու Յերվանդը Սամվելի հետ:

— Ա՛յ տղա, ես դավադրությունն ուրիշ տեղից դուրս յեկավ,—ասաց Սուքիասը:

— Հա՛, մեր Սամվելի ականջից պետք է քաշենք, ես նրա բաներն են. դավադրությունը սա յե սարքել, և վոչ թե կոլխոզականները:

Սամվելը կարմրեց մինչև ականջներն. ու ասաց չփոթած ժպտով.

— Դե յես կարծում էյի շատերն են զնալու... ուզում էյի ոգնության հասնել...

— Ի՞նչ, կարծում էյիր դայլերը մեզ պիտի ուտե՞ն... Բայց վո՛չինչ, կեցցե՛ս, քո դավադրությունը լավ տեղին էր, ես դասից հետո սրանք ել մտքից չեն հանիլ կոլխոզը...

Նորից լավեց թմբուկի ձայնը. քայլերն ավելի անխուժացան. յերթը համակեց բոլորին մի ընդհանուր զգացումով...

1932 թ.

Բ Ա Բ Ե Լ Ո Ն Ի Ա Շ Տ Ա Ր Ա Կ Ը

Աշունն է: Զորագլխին թառած գյուղը վերջացրել է իր դաշտային աշխատանքները: Ամայի կալերում յերևում են խոշոր դարմանի մնացորդները, վորոնք հետզհետե դժգունում են խոնավությունից, իսկ նրանց շուրջը, տեղ-տեղ կանաչին են տալիս ցորենի ծլած հատիկները: Մանր, մռայլ քլաթուխպը գալիս է, կանգնում չրջակա բլուրների վրա ու անսլատկառ սպառնում ներս խուժել գյուղը: Պարտեզներն որ-որի վրա դեղնում են, ու տերեւները, կարծես վախեցած, անհանգիստ սոսափում են ցրտաշունչ քամիներից:

Գյուղը յդատարկվել է տղամարդկանցից. նրանք բոլորն էլ աշխատում են ներքևի ձորում, վորտեղ արդեն մի տարի յեր, ինչ սկսվել էր հիդրոկայանի կառուցումը: Տներում մնացել էյին կանայք, յերեխաներն ու կաթուկ ծերունիները: Միայն Մուքեյն էր, վոր չեք մասնակցում այդ աշխատանքին, ու մենակ մնալով, տիրում էր աշնան ծառի նման:

Մուքեյը հիսունից անց էր, բայց դեռ առույգ էր ու յերիտասարդի նման աշխատունակ: Նա գյուղը յեկողի աչքին էր ընկնում իր հին տարազով, վորը համառորեն պահպանում էր անխախտ: Նրա շուրջն ինչ ասես հազնում էյին, խառնելով գյուղն ու քաղաքը, իսկ Մուքեյին միշտ կտեսնեյիք իր պապական շալի չուխայով, արխալուղով ու ծանր, մոթալի փափախով: Հագնելիքի մնացած պարագաներն էլ պահպանվում էյին իրենց կարգով: Գյուղացիներին գրգռում էր Մուքեյի մոլեռանդ ձգտումը դեպի հին տարազը, բայց մանավանդ գրգռում էր այն, վոր նրա հագուստը միշտ կարգին էր, միշտ նոր էր թվում: Իրենք քանի շոր էյին մաշել նրա

չուխայի հետ, բայց տես, նրանն ասես մի շաբաթ առաջ լինի կարած: Նրա խնամոտ ու զգուշ վերաբերմունքը դեպի իր հագուստն առակ էր դարձել գյուղում. նրա մասին պատմում էյին, վոր միայն թուրքական զորքերից փախչելու որն էյին տեսել շորերը ցեխոտ. յերբ մեկին ասում էյին, թե շորդ մաշվել է, նա պատասխանում էր.

— Ի՞նչ անեմ, Մուքեյի չուխան հո չի, վոր անմաշ մնա:

Մանավանդ նա սրբության նման փայփայում էր իր պատվավոր մոթալի փափախը, վորը սև դույնի յեր, կոնաձև, զազաթը փոսած: Տուն դառնալիս նա հազցնում էր այդ փափախը կարմիր չթից կարած մի տոպրակի մեջ ու այդպես դնում պատի մեջ շինած պահարանի մի առանձին դարակի վրա, վորպեսզի չմաշվի ու չփչանա փոշուց:

Յերբ Մուքեյը դնում էր գլխին այդ փափախը, նա հին քյադխուղայի պատկառելի տեսք էր ստանում: Ու իր խոշոր, նահապետական դիմազծերը,—մեծ, հիմնավոր քիթը, ծանրախոհ աչքերն ու ակոսված ճակատը, առատ բեղն ու մորուքը, այնպես ներդաշնակում էյին փափախի հետ: Իսկ յերբ նա նստում էր գյուղի հավաքատեղն ու գրուցում հասակավոր մարդկանց հետ, այդ բոպեններին թվում էր, թե շուրջը վոչինչ չի փոխվել, թե մի հին նահապետ է խոսում ծանրակշիռ խոսքերով, ու իր սև սաթի տերողորմիայի խոշոր հատիկներն էլ դանդաղ չրսկալով իրար յետեից, հաստատում են նրա ասածները, կրկնելով.

— Ճշմարիտ է, ճշմարիտ է...

Մուքեյի հետ գրուցողները մեծ մասամբ ծերունիներ էյին կամ իր հասակի մարդիկ, նրանք իրար լավ էյին հասկանում ու իրենց հավանությունը տալիս գլխի շարժումներով: Նստում էյին հին մարդիկ, գովաբանում հին, «աստծու որհնած» աշխարհն ու քննադատում, ժխտում նորը: Ու վոչ վոք չեք զարմանում նրանց քննադատությունից, ինչպես չէյին զարմանում, վոր ծերունիները ձեռնափայտով են ման գալիս ու սիրում

են ժամ գնալը: Գյուղի կոմյերիտները, շահեւները, նրանց մոտով անցնելիս քմծիծաղ ելին տալիս ու իրար ասում:

— Ծանր արտիլերիան հավաքվել ա...

Բայց յես մոռացա տակ ամենադիւսաւորը. Մուրելը մի սրբութուն ունեւր, վորը պահպանում եր ջերմեռանդ կրօնավորի յերկյուղածությամբ: Դա մի հին, կաշեկազմ աստվածաշունչ եր, վորը ժառանգութուն էր մնացել իր հորից, իսկ նա նվեր եր ստացել մոտակա վանքի մի վարդապետից: Այդ աստվածաշունչը պահւում եր հաստ, քաթանի պարկի մեջ, դոյրբի նույն դարակի վրա, վորնեղու փափախն եր դրած:

Ինքը գրադեա չլինելով, Մուրելը յերբեմն հրավիրում եր տիրացու Գրիգորին, հյուրասիրում եր նրան, արագ խմացնում, ու կարգալ տալիս ջրհեղեղի ու Բաբելոնի աշտարակաշինության պատմությունները, ապա վերջը՝ յերեք գլուխ սաղմոս: Շատ եր Մուրելի սրտին մոտ գալիս վրեժխնդիր պապի—աստծու բարկութունը, նրա պատիժներն ու նրա հանդիսավոր հաշտութունը—ծիածանի կամարի նշանով: Ապա սկսում ելին ցածր, խորհրդավոր ձայնով յերկար ու բարակ զրուցել աստվածաշնչի զանազան պատմությունների շուրջը, աշխատելով նշաններ փնտռել նրանց մեջ ներկա ժամանակի վերաբերությամբ, ու բաժանվում ելին իրարից, ավելի հուսադրված իրենց աստծու հզորության ու վրեժխնդրության վրա:

Շատ եր պատվում ու պաշտում իր աստծուն Մուրելը, բայց վատ օրերի յեր հանդիպել. ամեն կողմից քննադատում ելին, տատանում նրա ամուր, «անսասան» գահը: Ինքն իր մեջ ուժ չզգալով պաշտպանվելու համար, նա գաղաղում եր շահեւների հարձակումներից ու խախտում իր նահապետական հանգստությունը:

Ահա այդ աստծու պատճառով եր, վոր նա թշնամացել եր խորհրդային իշխանության հետ, վորովհետեւ նա այնպես եր մտածում, վոր յեթե աստված չկա, որենք

եւ չկա. մարդ կարող ե սպանել, թալանել, ամեն ինչ անել:

Մնացած բաներում նա յեթե բարեկամ չեր, թշնամի յել չեր ե «յոլա եր տանում» իր գործը: Իբրև միջակ գյուղացի նա մեծ զգուշությամբ պահպանում եր միջակության նորման, ծառի նման քշտելով իր անտեսության ավելորդ շիվերն ու ճյուղերը, վորպեսզի չընկնի կուլակների և ուռճացածների շարքը:

Վախենալով, վոր կղէպչեն իր աստծուն, կխախտեն իր հավատն ու ծեսերը, նա խուսափում եր ժողովներից, ընտրություններից և առհասարակ «տերության» հետ գործ ունենալուց: Ասենք այդ մեկը ժառանգական եր նրա մեջ. իր հոր մասին ել պատմում ելին, թե նա յել խուսափում եր «որենքի» հետ շիվելուց և իր ցարական հարկերը վճարում եր պատուհանից, վոր իրեն չկաշեն ու մի շառ չզցեն վրան:

Բայց այս ընթացքը տանելի չեր, յերբ հարցը վերաբերում եր ժողովներին, ընտրություններին. իսկ այժմ գյուղի բոլոր տղամարդիկ աշխատում են հիզբողայանում, փող են տուն բերում, «սպայոկներ» ստանում, իսկ ինքը, Մուրելը... նա մնացել ե մենակ ու տխրում ե աշնան ծառի նման, և վոր գլխավորն ե—նա տատանվում ե...

Նա ինքն իրեն դրադեցնում եր, վորպեսզի խլացնի իր մտքերը, բայց իզուր. տանը փափսում եր զանազան մանր—մուկ գործերի շուրջը—գոմն եր մաքրում, սայլի կոտրած ձաղր փոխում, շտկում ցանկապատը, հետո նստում եր կնոջ մոտ, ճախարակի առաջ, բամբասում իր մեծ տղային, վորը բաղաքում բանվոր եր, ապա դուրս եր գալիս փողոց ու հանդիպելով հատ ու կենա ծերուկներին, գրուցում եր նրանց հետ, հորանջում ու վերագառնում տուն, յերբ ստամոքսը զգացնել եր տալիս ուտելու ժամանակը: Ու մտրտեղ ել լիներ, մտքում շարունակ վորոճում եր այն միտքը, թե ահա, բոլորն ել աշխատում են ձորում, փող են տուն բերում, իսկ ինքը մնացել ե տանը: Ինչո՞ւ յե նա այդպես դատվում մյուս գյուղացիներից... նրա մեջ ինչ—վոր մի կատկած կա,

վոր յեթե բանվոր դրվի, մի պատուհաս կգա գլխին, կկորցնի մի թանկագին բան, կկորցնի իր հին, պապերից սրբագործված հավաար...

Բայց այժմ նա տուն է վերադառնում փողոցից, գանդաղ քայլում է ու նորից տատանվում.— «Հը՞, գնա՞մ, թե չգնամ... առաջինը՝ փողը քաղցր բան ա, վրա—յերկուսը՝ եսքան մարդ բանում ա ձորում, բա յես ի՞նչ եմ, տանձի կոթ ե՞մ... յես ել նրանցից մեկը... ոչով ել չի ասում, թե ենտեղ նեղութուն են տալիս»...

Վերջին անգամ տուն դառնալիս Մուքելը փորձեց իր բաղդը տերոզորմյայով, նա մի տեղից բաժանեց հատիկները յերկու մասի ու սկսեց հաշվել.— դուրս յեկավ ջուխտ, ուրեմն գործը բարի յե, Մուքելը կարող է գնալ հիդրոկայանում աշխատելու...

\*\*\*

Վերջապես...

Մուքելն ել բանվոր է դրվել հիդրոկայանում և աշխատում է խիստ կանոնավոր, դես ու դեն չընկնելով, վեճի չբռնվելով ընկերների հետ:

Ընդհանուր յեռուզեռն աշխատանքի լարված թափը վարակում է Մուքելին, արագացնում նրա ձեռն ու վորտը: Չորս կողմը մարդ ու մեքենա իրար խառնված մի յեռանդուն ժխոր եյին առաջացնում: Վերև ու ներքև մրջյունների նման վխտում եյին բանվորները, քանդում հողը, ձեռնասայլակներով կրում շինանյութերը. վագոնիկներն անընդհատ բարձրանում, ցածրանում եյին ու սերի վրայով: Յերբեմն Մուքելը բուպեապես կանդ էր առնում շունչը տեղը բերելու համար, նայում էր շուրջը սփռված խառնիճադանճ բաղմության վրա ու դարմացած բացականչում.

— Պա՛հ, եսքան էյ մարդ, եսքան ել մեծ գո՞րծ...

Միայն մի բան ծանրութուն էր տալիս նրա մտքին.— ի՞նչպես պետք է հիդրոկայանի ջրից լույս ստանար. վորքան ել նա հարց ու փորձ էր անում սրան ու նրան, ելի չէր կարողանում լիովին հասկանալ, ու

զբանից թերահավատում էր, մտածելով,— «Խելքի բան չի, ջրիցը լիս չի դուրս գալ»...

Բայց շատ չանցած պատահեց այն, ինչ կարող էր պատահել միայն Մուքելին. մի որ գործից հետո յեկան իմաց արին, թե ժողով է լինելու: Մուքելն ըստ իր սովորության, ուզում էր չգնալ, բայց իր համադյուզացի ջահել բանվորները, իմանալով նրա բնավորութունը, ուզեցան ձեռք առնել, ու պնդեցին, թե ժողովը մթերման հարցերի մասին է, և անպատճառ պետք է բոլորը ներկա լինեն: Մուքելն ակամա հպատակվեց, նրանք ել տարան դիտամբ նստեցրին ակումբի առաջին շարքում, լավ իմանալով, վոր բազմամարդ ժողովից Մուքելը նահանջելու տեղ չի ունենալ:

Մի քառորդ ժամ հաղիվ տևեց, ժողովը սկսվեց, բայց ո՞վ սարսափ, կենտրոնից յեկած մի ընկեր սկսեց խոսել վոչ թե մթերման հարցերից, այլ հակադրոնական մի դասախոսութուն արավ...

Մուքելը նստած էր մոտիկ, վա՛յ են նստելուն, ասես կոծոծների վրա յեր. ու պարզ լսում էր ամեն ինչ— վա՛յ են լսելուն. ամեն խոսքի վրա մերթ կարմրում էր, մերթ սփրթնում. ինքն իրեն կրծում էր, անխճում էր բաղդը, ուզում էր դուրս գալ, փախչել, բայց խիստ կանգնած ամբոխի միջով վոչ մի հնար չկար ճամբս բանալու:

Ու մնաց Մուքելը մինչև վերջը, և դուրս յեկավ բոլորի հետ, ջրտնքում կորած, «բաղնիս արած», այլայլված...

Գնում էր գյուղը կարծես համաճարակից էր փախչում, չչլվված յեզի նման խուսափելով մարդկանցից, անիծելով դասախոսին քարեկարկուտ, մահտարածամ ու սանդաբամետ կանչելով անաստվածների գլխին:

Ու են գնալն էր, վոր գնաց, ել չվերադարձավ իր աշխատանքին. նույնիսկ աշխատավարձն ստացավ ուրիշի միջոցով: Հիդրոկայանը մթնեց նրա աչքերին.— «Վոտա կտորեր չգայի եղ Բարելոնի աշտարակը շինելու»,— կրկնում էր նա հաճախ ու վրա տալիս իր թունդ անեծքները:

Մի շարաթ եր, Մուքելը լուռ ու մթադնած եր, կարծես քաթուխայ եր իջել սրաին: Ժամերով նստած եր գրուցում եր իր տերոզորմիայի հետ: Նա կուզեր փոխել միանգամից իր լսած դասախոսութիւնը, ազատվել նրանից, բայց ընդհակառակն եր լինում, — հակահրոնական մտքերը մեկիկ-մեկիկ հանկարծ գալիս եյին հիշողութիւն մեջ ու աներես հարցնում — «բաթե վոր աստված կա, սրան ի՞նչ կասես»... Ու նա ակամայից սկսում եր վորոճալ այդ միտքը, ու վերջը զգալով, վոր անգոր ե հերքելու, հերստտում եր, կորցնում եր հավասարակշռութիւնը: Մտազբաղ ու ցրված դրութիւն մեջ — նա նույնիսկ սկսել եր աչքաթող անել իր հագուստը. նրա ուսերին յերբեմն նկատվում եյին դարմանի հետքեր, չստերն ել առաջվա նման չեյին փայլում:

Մեծ տղայի դալն ուշքի բերեց նրան, մոռացութիւն տալով իր ճնշող մտքերը, բայց դա յել յերկար չտեկեց. յերեկոյան թեյից հետո, Պետրոսը, մտերմական ու կիտահեղնական ժպիտան յերեսին, սկսեց հարց ու փորձ անել հորը:

— Մ'պի, եղ վո՞նց ա քո բանը դլուխ չի յեկել հիդրոկայանում...

— Վոտա կոտրեր, չզնայի են բրիչակը, — ասաց Մուքելը մոռալ տոնով:

— Վո՞նց թե... եսքան ժողովուրդ բանում ա. ի՞նչ պակաս բան ա:

— Հա՛, եղքան մարդ են հվաքել, վոր ճամբիցը հանեն, անաստված դարձնեն. բայց թող եղ անողները լավ իմանան, վոր իրանց արարմունքն անպատիժ չի մնալ. հին ժամանակ ել, յերբ Բաբելոնի աշտարակը սկսեցին շինել, ուզում եյին դլուխը մինչև յերկինքը դուրս բերել, բայց աստված իմացավ անորենների ծուռ միտքը, լեզուները խառնեց ու աշտարակը փուլ յեկավ: Հիմի յել սրանք յեկել են ասում, թե աստված չկա, մենք մեր հնարքով պետք ա ջրիցը լիս հանենք. «իսկ

աստված լսում ա եղ բոլորն ու ստասում», վոր մի որ իրանն ասի, վոր պատիժը տա...

— Ելի քո Բաբելոնի աշտարակը չես մոռացե՞լ, եղ հեքիաթները հնարել են տերտերները ժողովրդին խաբելու համար... դու աչքդ բաց արա. տես, թե մարդն իր գիտութեամբ, իր աշխատանքով ինչեր ե ստեղծում...

— Բա ջրիցը լիս դուքս կգա՞... տե՛ր, մեղա քեզ...

— Մենակ ես մեր հիդրոկայանը հո չի. քանի տեղ են շինել, կարող ես գնալ քո աչքով տեսնել:

— Ի՞նչ տեսնեմ — հրեն մեր գեղումն ել սներ են տնկել, մթամ ելեկորականի համար, կրեբեն սների մեջ նովթ կածեն, վերևի ծերից կվառեն, հետո կասեն, թե ջրիցը լիս ենք հանել. դա սուտ բան ա, աչքակապութիւն ա, անաստվածների սուտ հրաչքն ա...

Պետրոսը չկարողացավ ծիծաղը պահել:

— Դե լավ, ապի, թե վոր եղպես չես հավատում, արի պայման կապինք. յեռ կխնդրեմ ուսուցչին, վոր քեզ հետ պարապի, համ պրպիտութիւն սովորեցնի, համ ել ամեն բան բացատրի, ինչ վոր հարկավոր ե. հետո յել, յերբ հիդրոկայանը վերջացնեն, լույսը վառեն, դու յել համոզվես իմ ասածին, քո պարտքը լինի, վոր դուքս գաս, ժողովրդի առաջ հայտնես, վոր սխալվել ես, և քո աստվածաշունչն ել դնես ելեկտրականի սնի տակ:

Անսպասելի առաջարկից Մուքելը հանկարծակի յեկավ ու դեմքը խոժոռեց, վոչինչ չպատասխանելով:

Բավական յերկար պաուզայից հետո նա ասաց, կշտամբանքի ձևով դլուխը շարժելով.

— Ուրեմն դու յել ես են անորեն — անաստվածների հետ միացել ե՞ս, մի ասա տեսնեմ, թե վոր աստված չկա, բա ո՞վ ա ստեղծել ես յերկինքն ու յերկիրը...

Ընդհատված վեճը նորից սկսվեց. խոսք խոսքի վրա բռնկվեց հայր ու վորդու հին կրոնական կռիվը: Հետողհետ տաքանալով, նրանք բարձրացնում եյին ձայները, զրավելով հարևանների ուշադրութիւնը և շփոթեցնելով Մուքելի կնկան, վորն այժմ միայն ցանկանում եր իր վորդու կարոտն առնել: Նա մեկ-մեկ մի-

չամտում եր, վորպեսզի դադարեցնի վեճը, բայց վոչ մի ազդեցութիւն չէր անում:

— Ապի, յես քեզ բան եմ ասում, դու աչքդ բաց արա. եղ տերտեր, վարդապետ, յեպիսկոպոս, ա՛ստ-ված, ա՛ստված են կանչում ժողովրդին խաբելու հա-մար. հարուստներն աղքատների արյունը ծծում են, հոգևորականն ել որհնում ա, վոր ինքն ել մասն ստա-նա...

Բայց Պետրոսն իր գլխավոր զենքը դեռ պահում եր վերջին:

— Մի խաբերա ավազակ ել մեր տեր—Մաթևոսն ա, այ, թե չես հավատում, կարդամ նրա գրած հրաժարա-կանը...

Այս ասելով նա հանեց ծոցից լրագիրն ու կարդաց.

«Հարգելի հայրենակիցներ,  
Յերեսուն տարի շարունակ քահանայութիւն անե-լով, յես խաբել եմ ձեզ սուտ առասպելներով ու հե-քիաթներով ու դրանցով շահագործել եմ ձեզ: Այժմ, զղջալով և զգալով իմ վնասակար գործունեութիւնը, խնդրում եմ ներողամիտ լինե՞ք և մոռացութեան տալով իմ անցյալը, հատկացնելով ինձ մի կտոր հող, թույլ տաք ինձ այսուհետև ապրել ձախառիս քրտինքով և ար-գար վաստակով: Այսորվանից յես հրաժարվում եմ քահանայութիւնից»:

Նախկին տեր—Մաթևոս Դանելյան:

Հարվածն այնքան ապշեցնող եր, վոր մի բոպե Մու-քելին թվաց, թե Պետրոսը հնարում ե, բայց ի՞նչ... Լրագիրը ձեռին եր, ել ի՞նչ հնարել...

— Թո՛ւհ քու նամուսին... ասաց նա ու դեն յարտեց իր ձեռքի տերողորմյան, վոր նա անում եր իր կյանքի ամենահուղիված բոպեներին:

Նա փոքր ինչ լռեց, ապա վեր կացավ տեղից.

— Լա՛վ, Պետրոս, քու պայմանին համաձայն եմ. թող եղպես լինի, վոնց վոր ասեցիր, կամ դեսը, կամ դենը... այ, ձեռք եմ տալիս քեզ...

Պետրոսը լրջութիւն տալով դեմքին, մեկնեց իր ձեռքը...

\*\*\*

Մի տարի յել անցավ, անցավ ձմեռն ու յեկավ թարմ ու պայծառ գարունն իր բուրալից կանաչներով, ծաղիկ-ներով: Նոր ծաղիկներն հետ նոր լուրեր եյին գալիս, թե հիւրերկայանը վերջանալու վրա յե և մայիսի մեկին պետք ե լինի նրա բացումը: Քանի մոտենում եր ժամա-նակը, Մուքելն ավելի յեր անհանդատանում, հիշելով Պետրոսի հետ կապած պայմանը: Բայց ի՞նչ... Մուքելն իր խոսքի տերն եր, նա պետք ե աներ այն, ինչ վոր խոս-տացել եր...

Այո, Մուքելն իր խոսքը կկատարի, միայն նա ան-հանդատանում ե, թե վոնց պետք ե դուրս գա ժողովրդի առաջ, ու հայտարարի իր «նոր հավատի» մասին... այդ ե նրա դժվարութիւնը: Իսկ վոր ինքն առաջվա Մուքելը չի, ինչ կասկած կարող ե լինել. իր առաջվա սրբու-թիւնը—աստվածաշունչը փոչակալել ե արդեն սուրա-բում, ու ինքը իսկի ձեռը չի տալիս, և վոչ ել թողնում ե, վոր տանեցիք ձեռը տան... նա արդեն ոտար եր իրեն համար...

Փոխվել ե Մուքելը, ու ինքն ել զարմանում, թե ինչպես յեղավ այս բոլորը, ինչպես հետզհետե անցնող օրերի հետ պոկվեց հին հավատից: Ու պարզեց իր մըտ-քերը, վորոնք այնպես խառնվեցին տեր—Մաթևոսի հրա-ժարականից հետո: Բայց նա մինչև այժմ ել չի մո-ռանում «խաբերա» տերտերին, չի կարողանում ազատ-վել իր հերսից. ամեն անգամ նրան հիշելիս միշտ կըր-կնում ե—«թուհ քո նամուսին»... նրա պատավոր ինք-նասիրութիւնը վառվում ե, վոր տերտերն իրեն ել ու-րիշների հետ խաբել ե յերեսուն տարվա ընթացքում:

Բայց յես դարձյալ մոռացա ամենազլխավորը.— Մուքելը պարապում ե ուսուցչի հետ այն ժամանակից, յերբ նա պայման կապեց իր վորդու—Պետրոսի հետ: Նա այժմ փոքրիկ գրքեր ե կարդում, յերկար մտածելով աս-մեն յերեսի վրա: Համարյա ամեն օր գնում ե ուսուցչի մոտ, զրուցում նրա հետ, կարդում դասը, լսում նրա բացատրութիւններն ու նոր բեռնով ծանրացած վերա-

դառնում եր տուն, ինքն իրեն ասելով—ա՛խ, թե ես բանն առաջ կլինեմ...

Փոխվել է Մուքեյլը... Այժմ ամեն անգամ իր տեղորոշմիս հետ զրուցելիս միշտ ասում եր մաքում:

— Ա՛յ տղա, եսպես ել բա՞ն... ելեկարականը դու մի ասիլ իմ տեղորոշմիս մեջ ա ելել, յես անտեղյակ...

Վերջապես յեկավ հիզրոկայանի բացման ուրը... Ահա նա կանգնած է գյուղի հրապարակում, բազմության կենտրոնում, ելեկարական սյունի մոտ... միտինդն արդեն վերջանալու մոտ է, և գյուղխորհրդի նախագահը վերջին ձայնը տալիս է Մուքեյլին...

Նա մոտենում է նախագահին, բարձրանում է տախտակամածի վրա, ձեռքին բռնած իր աստվածաշունչը: Հանկարծ յերեկոյան մթնաշաղը ցնդվում է ելեկարական լույսից ու ժողովուրդը միաբերան կանչում է ցնծագին:

— Կեցցե՛՛. — հնչում եր յերկար ու կրկնվում նորից ու նորից:

Յերբ նախագահը հանդարտեցնում է ժողովականներին, բոլորի ուշադրությունն սկսում է կենտրոնանալ Մուքեյլի վրա:

— Ա՛յ ժողովուրդ, — ասում է նա, — ետը մեզ համար մեծ աչքալիտեք ա, մեծ ուրախություն ա. յես ել ձեզ հետ ուրախանում եմ, բայց յերանի մեր ջահելներին, նրանք հենց տակից ապրելու յեն ես լուսավոր կյանքով: Ասում եմ ուրախանում եմ, բայց սրախ վրա մի բան կա ծանրացած, վոր ուզում եմ ձեզ հայտնի անել. յես շատ եմ մեղանչել, շատ եմ վատ խոսել, թե ես հիզրոկայանն անաստվածների, անորենների գործ ա, ու ենպես եյի մտածում, թե աստված կպատժի ու կկործանի նրանց շենքը, ինչպես վոր կործանեց Բաբելոնի աշտարակը: Ա՛յ ժողովուրդ, շատ ժամանակ իմ աչքերը խավար եյին, յես չեյի հասկանում, վոր են նոր լիսը վոչ թե սուրբերից ու աստծուց ա, այլ թե մարդու գիտության, նրա հունարի, աշխատանքի գործ ա. յես ես բոլոր պայծառ բաները սուտ ու կեղծ եյի համա-

րում, իսկ ես աստվածաշունչը՝ ճշմարիտ. հիմա յես ասում եմ—վոչ թե աստված ա ստեղծել ես աշխարհը, այլ թե մարդիկ են հնարել աստծուն, վոր նրանով ծածկեն իրանց անարդարությունը. սուտը մեր հին աստվածն եր, մեր հողևորականներն եյին, վոր իշխանավորների հետ ապրում եյին ժողովրդի աշխատանքով: Դրանցից մեկն ել մեր տեր—Մաթևոսն եր, վոր ինքն իր բերանով խոստովանվեց, վոր յերեսուն տարի խաբել, մոլորեցրել է ժողովրդին: Հիմի յես բերել եմ հետս մեր հին որենքի, մեր խավար ժամանակի գիրքը— աստվածաշունչը. առաջ յես վախում եյի սրանից ու պաշտում եյի, իսկ տեր—Մաթևոսն ու իր նմանները սրանով մեզ խաբում եյին: Հիմի, ա՛յ ժողովուրդ, իմացե՛ք՝ յես բերել եմ ես խավար, մոլորեցնող գիրքն ու ձեր առաջ դեն եմ գցում...

Այս ասելով նա ձգեց աստվածաշունչն ելեկարական սյունի տակ...

Ամբողջ ժողովուրդը մնացել եր ապշած Մուքեյլի խոսքերից ու մանավանդ այդ վերջին արարմունքից:

Պետրոսը կանգնած եր հոր յետևն ու հրճվում եր. կարծես նա յել մի ուրիշ հիզրոկայան եր կառուցել իր հոր սրտում, իսկ հրապարակորեն հայտաբերելով նրա նոր համոզմունքը, նույնպիսի հիզրոկայաններ պիտի կառուցվեյին և բոլորի սրտում...

1932 թ.

Հ Ա Ն Դ Ի Պ Ո Ւ Մ Ը

Դանելյանը նոր եր վերադարձել հայրենի քաղաքը  
յերկարատե բացակայութիւնից հետո:

Յերեկոյան, յերբ նա ներս մտաւ սրճարանը, նրան  
մոտեցաւ բանվորի արտաքինով մի մարդ:

— Ներողութիւն, յեթե կարելի յե... ձեզ հետ  
ուզում եմ խոսել,— ասաց նա, շփոթվելով:

Դանելյանը ճանաչեց: Այդ մարդն անախորժ հի-  
շողութիւններ դարձեցրեց մեջը, սակայն դժվարացաւ  
մերժել նրան:

— Խնդրեմ, ասաց նա կիսաբերան, կարծես մի  
ծանր պարտականութիւն եր կատարում: Ու ահամա  
մնաց կանգնած սեղանի մոտ:

— Խոսքս մի քիչ յերկար ե լինելու... յեթե կարե-  
լի յե, թույլ տվեք ձեզ մոտ նստեմ...

Դանելյանը նստեց, ձեռքով հրավիրելով նրան  
նստելու դիմացի աթոռին:

Յեկվորը մի յերկու բոպե աչքերը ձգեց գետնին,  
խուսափելով Դանելյանի հայացքից: Շփոթվելուց նա  
կարմրել, քրտնել եր:

Դանելյանն աչքի տակով դիտում եր նրա դեմքը:  
Անցյալի համեմատ բավական փոխված եր յերևում.—  
յերկար, անկանոն բեղերը կրճատվել եյին, թողնելով  
քթի տակ մի փոքրիկ, սև կտոր: Թեթև, հազիվ նշմա-  
րելի կնճիռները ճակատին ու աչքերի մոտ խոհուն,  
կենտրոնացած արտահայտութիւն եյին տալիս դեմքին:

— Ընկեր Դանելյան, գուցե դուք ինձ մոռացել  
եք... յես Յերամյանն եմ, ձեր նախկին հարևանը,—ա-  
սաց նա, փորձող հայացք ձգելով Դանելյանի վրա:

— Այո, չեմ մոռացել,—սառը պատասխանեց Դա-  
նելյանը:

— Յես գիտեմ, վոր դուք ինձ վատ մարդ եք համա-  
րում են տարվա դեպքից հետո... Հենց դրա մասին ել  
ուզում եմ խոսել ձեզ հետ...

Դանելյանը դեմքը խոժոռեց: Վերջին խոսքերը նրան  
զարմացրին.—«Յերեկ հարբած ե, թե չե այսպես չեր  
սկսիլ», անցաւ նրա մտքով:

— Շատ անգամ եմ ուզեցել ձեզ նամակ գրել, բայց  
բայել եմ.—չարունակեց Յերամյանը,—հիմի վոր պա-  
տահեցի, վճռեցի անապատճառ խոսել ձեզ հետ... կար-  
ծում եմ, չեք նեղանալ... յես հաճախ հիշում եյի ձեզ...  
ինձ տանջում եր են միտքը, թե ընկել եմ մի մարդու  
աչքից, վորին հարգում եմ. յես ձեր մասին լավ բաներ  
եմ լսել...

— Լավ, յեթե այդպես պահանջ եք դիմում բացա-  
տրվելու, խնդրեմ, յես պատրաստ եմ լսելու,—ասաց  
Կանելյանը լուրջ տոնով:

Ճաշարանի սպասավորը յեկաւ կանգնեց նրանց  
առաջ:

— Մի չիչ գարեջուր,—պատվիրեց Դանելյանը:

Յերամյանը վառեց ծխախոտի գլանակն ու մի քա-  
նի անգամ իրար վրա ներս քաշելով ծուխը, սկսեց.

— Դուք ի հարկե, հիշում եք, են ժամանակ շատ  
ալեկոծված եր մեր կյանքը: Խորհրդայնացումից մի  
տարի առաջ ընտանիքիս հետ գաղթել եյի գյուղից քա-  
ղաք ու տեղավորվել ձեր բակի գետնահարկում: Իմ ու-  
նեցած տան սարքը մի կարպետ եր, յերկու գզգզված  
վերմակ ու մի պղինձ: Դուք եդ բոլորը յերեկ նկատում  
եյիք սանդուխներից իջնելիս:

Կինս վոտի վրա հիվանդ եր, յերկու յերեխան վզին:  
Փոքր յերեխաս շարունակ լաց եր լինում, մոր ծիծը բե-  
րանը դնում, լմլմացնում, հետո տեսնելով, վոր մեջը  
կաթ չկա, բաց եր թողնում ու ավելի ճշում: Մյուսն ել  
բաղցած, մի գլուխ լացակումած հաց եր ուզում:

Մերոս մղկտում եր ես սուգ ու շիվանի մեջ, բայց ի՞նչ անեյի, սովի տարի եր, յես ել, դատարկ. մնացել էյի մոլորված: Ո՞ւմ դիմեյի. վոչ ծանոթ ունեյի, վոչ բարեկամ, քաղաքն ել ինձ ուղղակի վախեցնում եր իր մեծությամբ:

Մի քանի անգամ գնացի յերկաթուղու կայարան մշակութուն անելու, բայց տեսա, գործը քիչ եր, ցանկացողը շատ, միմյանց ձեռքից խլում էյին: Գնացքների ժամանակն ել վորոչ չեք,—պատահում եր, վոր յերկար սպասում էյի, հետո հույս կտրելով, վերադառնում տուն, գուր տեղը չտեսրս մաշելով, ու յերկար ճանապարհից հոգնելով:

Մեկ-մեկ ել գնում էյի շուկա, բայց ենտեղ ել հաղարից մի անգամ բեռն եր ընկնում ինձ, իսկ մեծ մասամբ ժամերով կանգնում էյի, հետո մի տեղ նստում ու թուլությունից նվազում: Մի առ ժամանակ եսպես մնում էյի, հետո կարծես քնից զարթելով, ասում էյի ինքս ինձ—«ի՞նչ եմ նստել, մի գնամ տեսնեմ յերեսաներս ի՞նչ գրության մեջ են»...

Բայց յերբ տուն էյի վերադառնում, լսում յերեսաներիս լացը, տեսնում կնոջս սգավոր դեմքը, սիրոս տակն ու վրա եր լինում, ելի ապում էյի մտքումս—«ի՞նչ եմ տուն մտել, մի դուրս գամ դես-դեն ընկնեմ, կարելի ե մի բան ճարեմ»...

Եսպես, վոչ մի տեղ հանգիստ չունեյի: Ամեն բուպե կարծես մեկը մտրակում եր ինձ, ու քշում, վոր գնամ ապրուստի ճար գտնեմ:

Ե՛հ, ծանր օրեր էյին. սվ քաշել ե եղ օրերը, նա ինձ լավ կհասկանա...

\*\*\*

Սպասավորը բերեց դարեջուրը: Դանելյանը լցրեց բաժակներն ու առաջարկեց Յերամյանին, բայց նա չնորհակալություն հայտնելով, մերժեց:

— Ի՞նչու ինձ չեյիք դիմում,— ասաց Դանելյանը. յես կարող էյի ձեզ համար գործ գտնել:

— Ի՞նչ ասեմ... դուք վորպես ինտելիգենտ, քա-

ղաքավարություն էյիք բանեցնում, չեյիք խառնվում իմ «նեքքին գործերի» մեջ, չեյիք հարցնում, թե ի՞նչ գրության մեջ եմ, յես ել գյուղից նոր էյի յեկել, քաշվում էյի, մտածելով թե՛ վոնց կլինի են «աղա մարդու» հետ խոսեմ: Եղպես իրար չեյինք մոտենում և յես մնում էյի անողնական:

Տեսնում էյի չորս կողմս, ինչպես հարուստներն ապրում են լիուլի, քեֆերի մեջ, նկատում էյի նրանց կուշա դեմքերը, վորոնք ենպես խեթ էյին նայում—արհամարհում էյին ինձպես աղքատներին ու կատաղությունս գալիս եր: Բայց գյուղից բերած իմ հասկացողությունն ի՞նչ եր.—վոր եղ բոլորը եղպես ել պետք ե լիներ—բաղբը մինին հարստություն ե բերում, մեկելին աղքատություն. աշխարհս եղպես յեկել ա, եղպես ել կզնա...

Տեսնում էյի ինչպես որ-որի վրա թուլանում եր, հյուծվում ընտանիքս, ուզում էյի բղավել, մոնչալ, բայց ո՞ւմ վեջն եր. սովի տարի յեր, աղքատը չունեք վոր տար, հարուստն ել, թեկուզ տնով մեռնեյի, ուշագրություն չեք դարձնիլ...

Քաղցածությունից ու հոգսից ենպես էյի թուլացել կարծես ծանր հիվանդությունից նոր էյի վեր կացել.—գլուխս պտտվում եր ու վոտներս հազիվ էյի քաշ տալիս:

Յերբ մի վորեե կենդանի քաղցած ե լինում, նա չի կանգնում կերակուրի առաջ ու ասում—«գողությունը վատ բան ե»... նա հետևում ե իր ստամոքսի հրամանին և ուղղակի ուտում ե: Իսկ մարդը, թեկուզ քաղցած—հազար ու մի բան ե մտածում, ու բերանի ջուրը գնալով անցնում ե ուտելեղենի մոտով: Բայց վերջապես գալիս ե մի օր, յերբ նա ել չի կարողանում իր մեջը նստած կենդանու առաջն առնել: Եղ ժամանակ նա ել գողությունը գողություն չի համարում, վոնց վոր թե՛ ես բանն իրենն ե, գալիս ե ու վերցնում...

Յես ել հենց եղ որն ընկա: Յերբ անցնում էյի խառնութիւնների մոտով, տեսնում էյի մի ուտելու բան, իօկույն մտածում էյի գողանալու մասին... Հիշում եմ,

մի անգամ մօսի խանութի առաջից անցնելիս ենք քաղ-  
ցած էյի, վոր մեջս ցանկություն էր գալիս վոչխարի  
դմակը թոցնել ու հենց ենպես, հում-հում ուտել...  
ի՞նչ թաղցնեմ, յերկու անգամ հաց գողացա մի անգամ  
էլ մօսի կտոր...

Կամաց-կամաց միտքս ամբողջովին ընկավ եդ ճամ-  
բեն ու գողությունը սկսեց յերևալ աչքիս, վորպես մի  
սովորական ապրուստի միջոց:

Սկզբում յերևակայում էյի, թե մի խոշոր գո-  
ղություն կանեմ, մի անգամից կապահովեմ ընտանի-  
քըս, բայց հետո իջա բարձր ամպերից ու վճռեցի ավե-  
լի համեստ ծրագիր ընտրել, այսինքն—մեր տան հա-  
րեաններից գողանալ... Սրանց մեջ էլ բարձր ու ցածր  
անելով, վերջապես կանգ առա ձեզ վրա...

— Բայց մի՞ թե չէյիք նկատում, վոր ներքեր, ձեր  
կողքին բնակվող արհեստավորներն ինձանից շատ ա-  
վելի լավ էյին ապրում... Գիտե՞ք, վոր այն ժամանակ  
յես էլ շատ նեղ վիճակումն էյի...

— Ի՞նչ էյի հասկանում. ինտելիգենտը շատ անգամ  
քաղցած է լինում, բայց դրսից վոչինչ չի յերևում:  
Տեսնում էյի ամեն առավոտ մաքուր, քաղաքավարի  
հագնված գնում էյիք գործի, յես էլ նորեկ գյուղացու  
աչքով դատելով, ձեզ համարում էյի հարուստ, մանա-  
վանդ, վոր ինձ հետաքրքրողը շորերն էյին:

Ասենք թեկուզ իմանայի ձեր դրությունը, դարձ-  
յալ կասեմ՝ քանի վոր դուք ինձանից լավ էյիք ապրում,  
իմ պակասավոր աչքը պետք է ձեզ վրա ծուռ նայեր.—  
մարդիկ տեսնում են կյանքի անհավասարությունը և  
դրա համեմատ էլ շարժվում են նրանց մտքերը:

Յեոտ արդեն վճռեցի ձեզանից գողանալ, սկսեցի  
բակից գիտել, ուսումնասիրել ձեր բնակարանը: Ի՞նչ  
յերկարացնեմ, մի գիշեր էլ, յերբ դուք թատրոնումն  
էյիք, յես նախորոք պատրաստած բանալիով բացի ձեր  
բնակարանի դուռն ու տարա շորեղենը...

Դուրս գալով, էլ չմտա իմ բնակարանը, այլ ուղ-  
ղակի քայլեցի դեպի մոտակա գյուղը: Գնում էյի ու

չարունակ յերևակայում, թե հետեիցս մարդիկ են վա-  
զում:

Փոքր ինչ հանդարտվեցի, յերբ արդեն քաղաքից  
դուրս էյի: Ճանապարհից շեղվեցի, մտա մի ձորակ ու  
պառկեցի, գլխիս տակ դնելով իմ բեռը:

Յերկար Ժամանակ քունս չեր տանում: Նայում էյի  
աստղերին ու մտածում, վոր իմ կյանքն արդեն ուրիշ  
հունի մեջ ընկավ, վոր սրանից հետո հալածված մար-  
դու նման շարունակ պիտի մի տեղից մյուսն անցնեմ,  
թագնվեմ, կասկածեմ ամեն մի աչքի, վոր ինձ վրա  
կրնկնի:

Միայն շատ ուշ, մի քանի րոպե յես քնել էյի ու  
յերագով ընկել: Տեսնում էյի յերագում, իբր թե ինձ  
չըջապատել է մի ահագին բազմություն. ամենքը յե-  
րեսները ծամածուած, բերանբաց ճղճղում էյին, ցույց  
տալով ինձ իմ գողացած սպիտակեղենի կտորները...

Չարթեցի, ահով բռնված ու ականջ դրի: Հեռվից  
չների հաջոց էր գալիս, և ճամբորդների ձայներ:  
Նկատելով, վոր լուսանալուն մոտ է, վեր կացա ու շա-  
րունակեցի ճամբես:

\*\*\*

Լուսանալուն պես թագնվեցի մոտակա թփերի  
տակ ու սկսեցի կարգի բերել «ապրանքս», վորպեսզի  
գնողները գլխի չընկնեյին, թե գողացած է, ապա գոր-  
ծը վերջացնելուց հետո գնացի գյուղն ու ներս մտամ մի  
հարուստ գյուղացու բակը: Դեռ նոր էյի բացել ապ-  
րանքս, կանայք վրա թափվեցին գլխիս: Մի ժամ չան-  
ցած, վերջացրի առևտուրս, մոտս պահելով միայն  
յերկու կտոր սպիտակեղեն, մտադրվելով փոխանակել  
մթերքների հետ:

Բոյորը զարմանում էյին, վոր յես փողով եմ ծա-  
խում մինչդեռ քաղաքից յեկող վաճառողները մթերք-  
ների հետ էյին փոխանակում: Գյուղացիների տեսա-  
կետից իմ արածն անմտություն էր, բայց նրանք  
չգիտեյին, վոր յես ստիպված եմ եղպես անում, գո-  
ղությունս ծածկելու համար:

Առևտուրս վերջացնելուց հետո պիտի վերադառնայի քաղաք, շարունակեց Յերամյանը, բայց մտաբերեցի, վոր ցերեկով կարող եմ նկատվել, ուստի վճռեցի սպասել մի քանի օր:

Նորից դուրս յեկա գյուղից ու թիփերի տակ պառկելով, անցկացրի որս: Փորս կշտացնելով հաց ու պանրով ու աղբյուրի ջուրը վրան խմելով, սկսեցի մտածել ապագա «գործունեյությանս» մասին: Չարմանալի անհոգություն յեկավ մեջս դեպի իմ վիճակը. շատ հանգիստ էյի մտածում այն մասին, թե ինձ կհետևեն, կբռնեն. և անտարբեր էյի դեպի ընտանիքս: Հեշտ առևտուրը ինձ թե տվեց, վոգեվորեց: Թղթախաղում առաջին անգամ տարած մարդու նման նորից ձգտում էյի դեպի խաղը—գողությունը:

Յես ասում էյի ինքս ինձ—«սրանով ին՞չ պիտի դառնա... թե գողություն եմ անում, կարգին անեմ»...

Յեվ ահա դիտումս պատրաստվեց գողության նոր ծրագիր...

Յերեկոյան դեմ գնացի նորից գյուղը, ներս մտան հարուստ տունը, վորտեղ ծախել էյի ապրանքս: Ծոցումս պահած յերկու կտոր սպիտակեղենը ընծայեցի տանտիրոջ և խնդրեցի, վոր թողնեն ինձ գիշերելու իրենց տանը, պատճառաբանելով, թե մոտակա գյուղում գործ շատ ունեյի, ուչացել եմ, իսկ միջնով չեմ ուզում գնալ, վորովհետև կարող են թալանել:

Տան տերն ուրախությամբ համաձայնվեց: Ինձ տեղավորեցին յերկրորդ հարկի սենյակում, վորը մաքուր զարդարված պահում էյին «ազիզ» հյուրերի համար: Իմ ծրագիրն ել հենց եղ եր, վոր գիշերն անցկացնեմ եղ սենյակում ու «գործս տեսնեմ»:

Բարձրացա վերև ու աչք ածելով չորս կողմը, մանրամասն դիտեցի պահարաններն ու պառկեցի, սպասելով, վոր ներքևը խորը քուն մտնեն:

Յերբ համոզվեցի, վոր ներքևում ել ձեն—ձուն չկա, վեր կացա, բորիկ վոտներով մոտեցա պահարաններին ու մեծ գողուչությամբ բաց արի, հանեցի

նրանց միջի կանացի հագուստներից ինչ վոր արժեքավոր եր ու պարկս լավ լցնելով կամաց իջա ներքև:

Տան տիրոջ շունը բլթաց կարճ հաջոցով, ու սկզբում տեղից շարժվեց, բայց հենց վոր դուրս յեկա բակից, վազեց հետևիցս:

Նրա ձայնի վրա դուրս թափվեցին փողոցի մյուս շներն ու հարձակվեցին վրաս: Յես արդեն ինձ կորած էյի հաշվում, սպասում էյի, վոր գյուղացիք կգարթնեն, կբռնեն ինձ, բայց եղպես չեղավ: Միայն մի գյուղացի դուրս յեկավ շապկանց, մեջքը քորելով «աչուն կ'որի», բղավեց ու նորից տուն մտավ:

Չեռքիս փայտով մի կերպ պահելով շներին, քրտնքի մեջ կորած, վերջապես հասա գյուղի ծայրը ու նստեցի մի տեղ հանգստանալու: Ենպես էյի ուրախ, հենց իմանաս նոր էյի մահից ազատվել:

Ուշ գիշերին հասա քաղաք: Թեպետ վճռել էյի տուն չգնալ, բայց հոգնած էյի, ուղեցա մի յերկու ժամ հանգստանալ, հետո ճամբա ընկնել:

Դուռը թխկացրի: Կինս աչքերը տրորելով, յեկավ բացեց:

— Դո՞ւ ես... վո՞րտեղ էյիր... ես ի՞նչ պարկ ե ասաց նա հազիվ կարողանալով աչքերը բացել:

— Շորեղեն ա, պիտի ծախեմ:

— Ո՞վ ե ավել քեզ շորեղեն,— գրգռված ասաց կինս:

— Սո՛ւս, կամաց խոսիր... մեկի հետ ընկերացել եմ...

— Հազիր ասա գողացել ե՞մ... հիմար մարդ չկա, վոր քեզ շորեր տա...

— Ին՞չ ես ավել—պակաս խոսում... ին՞չ, նամուս ծախել ե՞մ, վոր գողությամբ ապրեմ...

Չզարմանաք, կյանքում եսպես շատ ե պատահում. ով անցնում ե բոլոր խաղերից, նա ամենից բարձր ե խոսում նամուսից ու ազնվությունից...

Եսպես հարձակվելով կարողացա կնոջս համոզել, բայց արի տես, վոր կես գիշերին նրա կանացի հե-

տաքըրությունը բռնեց—ուզում եր պարկը բաց անի, իրեն համար չորեր ընտրի:

Մի կերպ հետ կացրի, խոստանալով առավոտը ընծայել մի զգեստ, բայց դեռ լույսը չբացված, պարկը վերցրի ու դուրս յեկա ենպես զգուշ, վոր կինս չնկատեց:

Գնացի դեպի յերկաթուղու կայարանը: Գնում եյի ու ինքս ինձ նախատում—ի՞նչ հիմարություն եր տուն գնալը, չե՞ վոր նոր եյի եղտեղ գողություն արել և կասկածի տակ եյի... և հետո, մի՞թե չպետք է առաջուց իմանայի, վոր կինս անհուսալի տարր է այս գործում...

Չեմ յերկարացնի պատմությունս,—յեկա կայարան, նստեցի ապրանքատար վագոնն ու իջա յերրորդ կայարանում:

Գնացի մոտակա գյուղը, ապրանքս փոխանակեցի մթերքներով ու հետեյալ գիշերը վերադարձա քաղաք:

Յերբ կինս տեսավ մթերքները, ուրախությունից ամեն ինչ մոռացավ:

— Ես վո՞րտեղից ա, հարցրեց, բայց յերևում եր, շատ ել խորը չեք հետաքրքրվում, թե ի՞նչ աղբյուրից է: Չարմանում եյի, թե ինչպես նա չորերի պարկը տեսներով հերսոտեց, իսկ մթերքների պարկի առաջ ուրախանում, հրճվում եր:

Իսկույն իր շնորհքները հավաքեց, իրիկնահաց պատրաստեց: Մեծ յերեխաս, կերակուրի հոտն առնելով, վեր թռավ, ու հաց ու պանիրը, յուղը իրար խառնեց: Քնկոտ աչքերով կանգնել եր առաջս ու խոր—խոր կծոտելով գյուղական հացը, բերանն ենթան եր լցնում, վոր դժվարությամբ եր ծամում:

Նա մոտեցավ ինձ, ուրախության արցունքներն աչքերին. ուզում եր ինչ վոր ասի, բայց բերանը լիքն եր, չեք կարողանում խոսել:

Յես համբուրում եյի նրան, ուրախանում, վոր ապրեցնում եմ, կյանք եմ տալիս նրան...

Արցունքներս թազցնելով, ասում եյի մտքումս.

— Վոր իմանաս, ու՞մ չորերն են ուտում...

\*\*\*

Յերամյանը բոպեյապես կանգ առավ:

— Խմենք գարեջուրը, առաջարկեց Դանելյանն ու ինքը խմեց: Յերամյանը չվերցրեց բաժակը, ծիտում եր, ազահուլթյամբ: Ապա վերջացնելով, շարունակեց.

— Յերկու որ եր, տանից չեյի դուրս գալիս. կնոջս ել պատվիրել եյի, վոր մթերքները ծածուկ պահի, ասելով, թե միլիցիան կարող է գրավել: Չգիտեմ, նա եզ բոպեյին հավատացա՞՞մ եր, թե իմ «հալար» աշխատանքով եմ ձեռք բերել այդ բոլորը, թե գուցե ձեացնում եր, վոր հավատում է: Համենայն դեպս նա շատ հանգիստ եր վայելում, իսկ յես վոչ ուտելն եյի իմանում, վոչ խմելը. ամեն մի շփոթոցից, ամեն մի փոտնաձայնից վեր եյի թոչում, խկույն մտածում—«ես ա գալիս են ինձ տանեն»...

Յես—նկատում եյի, վոր դուք ել գնում—գալիս եք, ջրեյական միլիցիա եք բերում, ցույց տալիս ու մեր կողմը խեթ նայում: Առած է գող—սիրտը դող: Յես վախենում եյի, վորովհետեւ յենթագրում եյի բոլոր նշաններով, վոր դուք պիտի ինձ մատնանշեյիք, վորպես գողի:

Յերեք որ տանը թաղնվելուց հետո ել չհամբերեցի, դուրս յեկա շուկա, իրբ թե մշակություն անելու: Մի քիչ պտտվեցի, հետո ուզում եյի միբոց աննել յերեխաներիս համար, մեկ ել հանկարծ մի մարդ պինդ բռնեց ինձ հետեից:

— Ա՛յ, սա ա,—բղավեց նա, ու իր ուժեղ ձեռներով յերկաթի ողակի նման պինդ սեղմեց ինձ:

Փորձեցի ազատվել, բայց իզուր. սկսեցի բղավել, սգնություն կանչել, բայց իսկույն վրա հասավ մյուս գյուղացին ու բոռնցքով ենպես խփեց գլխիս, վոր քիչ մնաց ուշքս կորցնեմ: Խփողն են գյուղացին եր, վորի տանը խայտառակ նամարություն եյի արել...

— Այ անաղուհաց շուն, — ասում էր նա կատա-  
ղած ու խփում, սիրտը հովացնում:

Աղմուկի վրա յեկավ միլիցիոները, և, ուշա-  
դուռթյուն չդարձնելով իմ հնարովի բացատրու-  
թյունների վրա, տարավ ինձ յերկու գյուղացիների  
հետ...

Եղպես, գողութունը դարձրի փեշակ, սկսեցի  
ապրել նրանով: Առաջին կալանքը թեպետ շատ վա-  
խեցրեց ինձ, բայց բանտում նստած «կազմակերպված»  
բանդիտներն ինձ սովորեցրին արհամարհել վտանգ-  
ներն ու դատարանում պաշտպանվելու միջոցները: Մի  
ամիս չանցած, բանտում տեղ չլինելու պատճառով ինձ  
արձակեցին ժամանակից առաջ: Դատն էլ ձգձգվեց, վո-  
րովհետև գյուղացին չներկայացավ նշանակված օրը:  
Եղ միջոցին վրա հասավ քաղաքացիական պատերազմը,  
և ինձ մոռացան...

Յեկավ խորհրդային իշխանութունը, բայց յես  
նրան հանդիպեցի վոչ իբրև աշխատավոր. յես ար-  
դեն սովորել էյի ուրիշի հաշվին ապրելու — «հեշտ ապ-  
րելու» միջոցը, և մտադիր չէյի թողնելու իմ արհես-  
տը: Ինձ առաջարկում էյին աշխատանք, պաշտոն,  
բայց յես չէյի վերցնում: Իմ տեսակետից յես մինչև  
անգամ ուրախանում էյի, վոր «խառը ժամանակ է»  
կարելի յե «գործ տեսներ» այսինքն գողանալ, թա-  
լանել, քանի վոր նոր կառավարությունը գեռ խորը  
չի գնացել... մեկ-մեկ գնում էյի միտինգ, լսում  
էյի ճառերն, բայց նոր խոսքերը ոգտազործում էյի  
ինձ համար, ծռում էյի դեպի իմ կողմը: Շատ կարճ  
էր՝ իմ դատողությունը. յես մտածում էյի. — բայլ-  
չեմիկները յավ են անում, վոր հարուստներից խլում  
են, աղքատներին տալիս, յես նրանց վերջնական նպա-  
տակի խորքերը չէյի մտնում, այլ ասում էյի ինքս ինձ,  
յես կվերցնեմ ունեցողներից իմ փայլը, թող մնացած  
մարդիկ էլ իրենց փայլը վերցնեն...

Ահա այդ ժամանակ էր, վոր յես կապվեցի մի  
բանգիտային խմբի հետ: Մենք մի գիշերում կողոպ-  
տեցինք հինգ տուն: Սկզբում ուրախ էյինք, կարծելով

թե լավ «պարտակեցինք» բայց մի շարաթ անց տուտը  
բացվեց, յես էլ մյուսների հետ ընկա խորհրդային դա-  
տարանի ձեռքը...

Թե ինչպես ինձ դատեցին ու դատապարտեցին, չեմ  
պատմում. — իմ նպատակն էտ չի. կասեմ միայն, վոր  
սկզբում վճռել էյի ուրանալ հանցանքս, բայց քննչի  
մի յերկու հարցերից հետո շփոթվեցի ու ամեն ինչ  
խոստովանեցի...

Դատարանը վճռեց ուղղիչ տուն յերկու տարով...

\*\*\*

Ուղղիչ տունը... մինչև կյանքիս վերջը չեմ մո-  
ռանա ուղղիչ տունը...

Հիշում եմ, ինչպես սրտակոտոր գնում էյի են-  
տեղ, ինչ ծանր մտքերով. ինձ թվում էր, թե գնում  
եմ նորից իմ առաջվա դաժան բանտը, վորի պատկերը  
տպավորվել էր մեջս մի քանի ամիս առաջ: Ու այդ  
մույլ հիշողությունը հալածում էր ինձ առաջին  
օրերը: Ինձ ճնշում էր և այն միտքը, թե ընտանիքս,  
մնալով անոգենական, սովամահ կլինի, յես էլ դուրս  
ընկնելով սովորական մարդկանց շարքերից, ո՞վ գիտե  
թե ինչ վիճակի մեջ կընկնեմ, կդառնամ կենդանի մի  
գիակ, կկորչեմ...

Անցավ մի շարաթ: Նամակ ստացա կնոջիցս. գրում  
էր, թե կին բաժնի ոգնությամբ յերեխաներին կցել  
է մսուրին, ու ինքը գործի մտել, ու հետն էլ գրա-  
գիտություն է սովորում. իմ մասին էլ գրել էր. — հույս  
ունեմ, վոր աշխատանքով կջնջես քո հանցանքը...

Հեռագհետև սկսեցի ուշքի գալ ու հասկանալ չորս  
կողմիս կյանքը. ու տարրերինակ զարմանքի մեջ ընկա:  
Տեսնում էյի — հետս ենպես են վարվում, կարծես  
խկի գողություն չեմ արել, այլ մի փոքրիկ սխալ եմ  
գործել, ու պիտի ուղղեմ, տեսնում էյի գիր, արհեստ  
են սովորեցնում, ու հարց էյի տալիս ինքս ինձ — բա  
ո՞ւր է պատիժը... առաջի օրերին նույնիսկ մտքովս  
անցավ, թե սկզբից եսպես քաղցր են վարվում, վոր  
չխրանենք, իսկ հետո... իրենք գիտեն, թե ինչ կանեն:

Բայց անցավ ժամանակը, և յես տեսա, վոր այս բոլորը վոչ թյուրիմացություն է, վոչ սարքովի բան, այլ իրականություն, վոր հին բանտը այլևս չկա, ու յես ընկել եմ մի անսպասելի վայր, մի տարրինակ դպրոց...

Մի թարմություն, կենդանություն յեկավ մեջս յերբ յես ընկա ընդհանուր հոսանքի մեջ: Սկսեցի հաճախել գրագիտության դասերը մի առանձին յեռանդով. սիրահարն այնպես չի գնում իր սիրուհու մոտ, ինչպես հրձվանքով յես գնում եյի դասերին, փողովներին, դասախոսություններին, ուչքս միտքս սուլով նրանց...

Յերբեք չեմ մոռանա ուղղիչ տան պատին կայցրած մի պատկեր. նրա վրա նկարած եյին բանվորն ու գյուղացին, վորոնք ձեռները մեկնած ցույց եյին տալիս մի լուսավոր շնչ: Պատկերի տակը խոշոր տառերով գրված էր.

— Աշխատավոր, լուսավորի՛ր միտքդ, վոր ինքդ կառավարես քո ստեղծած պետությունը...

Եղ պատկերը կարող է վկայել, թե ինչպես որ-որի վրա յես աճում եյի, միտքս բացում: Շատ անգամ եմ կանգնել նրա առաջ, նայել տառերին, ուրիշներին խնդրել, վոր կարդան: Բայց մի որ ել կատարվեց իմ հրաչքը—յես ինքս կարդացի են անմոռանալի բառերը...

Եղ որվանից, կարող եմ ասել, յես սկսեցի ժամերով մեծանալ. գիշեր-ցերեկ չբարտառում եյի դրքերի մեջ: Հեռոցհեռո աչքերս բացվեցին, ու սկսեցի հասկանալ, թե ինչ է ասում ես մեր նոր աշխարհը, ու ընդմիջտ ընկերացա նրան...

Բայց մի բան տանջում էր ինձ—իմ անցյալը: Ամեն անգամ, յերբ հիշում եյի իմ անցյալը, եղ բո պեններին տեսնում եյի ձեր դեմքը, և թվում էր, դուք չեյիք ներում ինձ... Թվում էր, թե չեմ կարող ազատվել անցյալի արատից:

Յես ասում եյի մտքումս—մինչև չտեսնեմ նրան, այսինքն ձեզ, մինչև չյսեմ նրա ընկերական խոսքը,—չեմ կարող հանգիստ լինել, չեմ կարող ջնջել այն սև բիծը...

... Հիշում եմ վերջին որը... յեկա կանգնեցի են պատկերի առաջ ու յերկաթե խոսք տվի—սկսել նոր կյանք, կպչել աշխատանքի, ու ամենից առաջ ներկայանալ ձեզ...

Ուղղիչ տանից դուրս գալուց հետո յես մտա գործարան ու շարունակեցի իմ ընտրած ճամբեն, և հիմա կարող եմ ասել—ընկել եմ նոր կյանքի մեջ... Յես միշտ փնտռում եյի ձեզ և վերջապես գտա...

Ահա յոթ տարվա իմ կյանքի պատմությունը, վորը գնում եմ ձեր առաջ ու սպասում եմ ձեր ընկերական դատաստանին...:

Դանելյանը ըոպեաչափ մնաց լուռ: Նա զգում էր իրեն ընկճված, խաղը տանուլ տված մարդու նման: Ապա սթափվելով, նա ասաց.

— Դուք յեկել էք իմ դատաստանի առաջ, վոր ասեք, թե ահա—այն մարդը, վորը բանդիտ էր, դարձել է ողտակար աշխատավոր, լծվել է սոցիալիստական շինարարության մեծ գործին: Վողջունում եմ ձեր վերածնությունը. դա ինձ համար մեծ ուրախություն է, բայց յես ել կարիք եմ զգում կանգնելու ձեր դատաստանի առաջ. պետք է իմանաք, վոր այն սրերին, յերբ ձեզ առաջին անգամ կալանքի յենթարկեցին, յես դիմում տվի իմ կորուստի մասին, այդ ժամանակ մի շարք բանդիտների և գողերի գնդակահարեցին. մի փոքրիկ պատահականություն միայն փրկել է ձեզ մահից—մոռացել եյին ցուցակի մեջ ձեր դեմ... Այդպիսով մենք փոխադարձաբար մեղավոր ենք իրար առաջ. տվեք ինձ ձեր ձեռքը, այսուհետև անցյալը համարեք ջնջված...

Ու սեղանի վրայից նա պինդ սեղմեց Յերամյանի ձեռքը: Ապա բաժակը լցնելով, շարունակեց.

— Խմենք ձեր կենացը, այժմ գիտեմ, չեք մերժի... այսուհետև լինենք ընկերներ...

Յերկուսն ել վերցրին բաժակներն ու իրար դիպչնուց հետո դատարկեցին:

Նրանք դուրս յեկան փողոց ու իրար ձեռք սեղմելով բաժանվեցին:

Վերջապես գնացքը շարժվեց բայց տեղերի համար ծագած վեճերը դեռ շարունակվում էին: Մեր վազոնի բաժանմունքում ամենքի ուշադրութունն էր գրավում մի ծերունի. Լենինականից էր, կամ ավելի ճիշտ—«Գյումրեցի»: այդ էյին ասում պապերից ժառանգած բարբառը, յերկար, առատ մորուքը, հին ձևի հասարակ ծխամորձը, իր հաստ փաթաթած պապիրոսով:

Գյումրեցին սկսեց իր գործը նախ և առաջ խաղաղութուն տարածելով իր շուրջը: Նա իր պարտքն էր համարում միջամտել տեղերի մասին ծագած վեճերին:

— Իսն չկա, հո՛գիս, յուր յերթանք, ուրախ եղնինք,— ասում էր նա, հանգստացնում բոլորին,— պատվավոր քաղաքացին կռիվն ին՞չ կենն...

Այսպես, իր շուրջն անդորրութուն սփռելուց հետո, գյումրեցին հանեց իր յերկու շիջ գինին ու յերշիկը և սկսեց «կազմակերպել» մեր բաժանմունքը: Նա ասում էր գինին, հրամցնում բոլորին: Ով չէր խմում, նրան կասկածով էր նայում, յենթադրելով թե մեջը վորե է չար մտադրութուն կա:

— Ըշտե վեր կքաղե՞ս ասածներս, վոր մասխարա ենես՞...:

Յերկու բաժակից հետո արդեն վողկորվեց, սկսեց յերգել: Ի՞նչ անենք թե ձայնը խոստ էր (արաղի՞ց, ծխելու՞ց, թե տարիքի՞ց). յերգում էր, «խալխին» ուրախացնում:

«Յես Ալեքն եմ, չամուլեցի մի ջիվան: խանում եմա ջա ա՛ ա ն»...

Վերջին «Ջան»-ը նա ձգում, դարձնում էր յերեք հարկանի ու շարժում ձեռքերն ու մարմինը, կարծես տեղը նստած պարում էր: Յերգում էր հայերեն, թուրքերեն, ռուսերեն. վերջինս մի առանձին ռամկական արասասնությամբ. յերևում էր—ժառանգութուն էր ստացել նախկին Գյումրու գինվորներից:

Յերբ գինին պատեց մեր բաժանմունքը, ուրախութունը վարակեց բոլորին: Ծերունին ավելի բացվեց:

— Երևանցին գինի կչինե, Գյումրեցին կխմեքե՞ք գյումրեցունն է. պատվավոր քաղաքացին միշտ պետք է քե՞քը քյոք պահե...:

Նույնիսկ սկսեց սիրաբանել իր կողքին նստած գեղջիուհու հետ:

— Ըշտե ու՞ր կերթաս. մարգուդ քո՞վ... Ըշտե մենք մարդ չեն՞ք...:

Սա յեւ ջահելութունից մնացած մի սովորութուն էր, վորը մեծ զվարճութուն էր պատճառում ճամբորդներին. սկսեցին խոսել, ձեռք առնել:

— Բեռի, ին՞չ գործի յես, հարցրեց ճամբորդներից մեկը, վորը հաշվետար էր ինչ վոր հիմնարկում:

— Առաջ մի պատիկ խանութ ունեյի, տղուս հետ. առուտուր կենեյինք. բայց կոմունիստներն ինձի հարուստի տեղ կդնեյին, կնեղացնեյին նալոգով. փակեցի խանութը, հիմի շուշա գցելով կապրեմ. ե՛հ յուր կերթանք... Հերս կսեր—պատվավոր քաղաքացին իր շախր չպիտի կոտրի. ոսկի խոսք է...:

— Վոր գնամ Լենինական, կնկանդ պիտի պատմեմ քո արածները, ասաց մի տիկին, ժպտալով, ակնարկելով նրա սիրաբանության վրա:

— Հը՛մ... ձեզ կհավատա. ոսկի կնիկ ունիմ.

— Ի՞նչ չի՞ չարանալ:

— Ի՞նչ պտի ըսի. ըշտը պատվավոր մարդ, պատվավոր կնիկ՝ կուտացնեմ, կհագցնեմ, գլխուս վրա կըպահեմ...:

— Ո՞վ գիտե, ջահել ժամանակ ինչեր էր արել, հարցրեց մի կոմյերիտ, վորը նստած էր կոմյերիտուհու կողքին:

— Ե՛հ, ասաց ծերունին, գլուխը տմամբացնելով. ապա հանեց թամբաքվի քիսեն, մի հաստ պապիրոս վորրեց, գրեց ծխամորձի մեջ, ու վառելով, խորը ներս քաշեց ծուխը:

— Ես աղջիկը քո ի՞նչդ է, հարցրեց ծերունին կոմյերիտին:

— Քույրս ե:

— Չե՛, չեմ հավատա... սրտից սիրածն ե, հ՞ա...

Կոմյերիտը ծիծաղեց, գրանով հաստատելով ծերունու յենթադրուիթյունը:

— Չահելուիթյուն չատ եմ ըրած, — ասաց նա փոքր ինչ լռելուց հետո — ամա ինչ դուզ ե՞ դուզ ե. հիմիկվա Չահելներին խելքն ավել ե. ձեր մտքով, ձեր ճամբով կերթաք... միամիտ վախտ կապրելինք առաջ. հե՛՛չ բան եր. մեր գլխի խելքով չեյինք ապրեր... թե լսողուիթյուն կենեք, գլուխս անցած մի բան պատմեմ...

Բոլորը հետաքրքրվեցին.

— Պա՛տմիր, պա՛տմիր, — ասացին ամեն կողմից:

— Ե՛՛հ, են վախտ լավ խալիս Չահել եյի. հյուրանոց կզահելի, հետն ել ճաշարան. գործս լավ, փողս լավ. քեֆս անպակաս եր: Հերս անվանի վաճառական եր, պատվավոր քաղաքացի. ախպերներս — մեկը կազարմաների փողբաչի յեր, մեկելը հորս հետ առուտուր կեներ:

Բանն ենպես յեղավ, վոր յեղբորս հետ գնացի Ռուսաստան ու ենտեղից հետս մի աղջիկ բերի հյուրանոցում ծառայելու համար. աղջիկն ի՞նչ ըսեմ, վոնց վոր թագաբացված վարդ...

Սրան բերի-չբերի, սիրտս կպավ. կարճ ժամանակում մոտկացանք իրար: Ի՞նչ յերկնցնեմ — Չահել ազահել աղջիկ, վառվեցանք սիրով:

Եսպես եզ աղջկա հետ մի տարի քաղցր սրեր ապրեցի: Պիտի ըսեմ, վոր մեր ընտանիքից բաժան եյի, ինձի խանգարող չկար. միայն խեթ-խեթ կաշեյին, համաբան չեյին ըսե:

Մի ոք ել յեկան՝ թե հերզ ճաչի կկանչե: Գացի տեսնեմ — սող բարեկամուիթյուն մեր տանն ե: Ըշտե լավ ճաչ, լավ խմիչքեղեն կար, լավ խոսք ու զրից: Համա կտեսնեյի, վոր հեր ու մեր, բարեկամ, ինչ ել ըսե ինչ-խոսքն իմ կարգվելու վրա շուռ կուտային: Չունքի յեղբայրքս կարգված եյին, քուրերս մարդու տված, տան ազապը մենակ յես եյի մնացել:

Ճաչից հետո սող մեր տնով-ցեղով թամամ ժողով

երին. ամենքն ինձ խրատ կուտային, մի-մի փթանոց խոսքեր կըսեյին.

— Ըշտե դու անվանի մարդու զավակ ես, կսեյին, լավ գործի, լավ սյալուրի աեր. քեզի ի՞նչ կսագե, վոր եզ փախստական, աղքատ աղջկա հետ ընկնես (են ել ռսի հավատի) ու մեր անունն առակ ենես: Քեզի՛ կսեյին, կսագե մի ենպես պատվավոր ընտանիքի աղջիկ, վոր հետը կարգվես ժամով, խաչով, վոնց վոր աղաթ ե մեր քաղաքում... ժամանակ չե՞, կըսեյին, վոր գլխուդ պատիվն իմանաս...

Վերջն ել հերս տերողորմեն պցելով ծանր-ծանր վճիռ տվեց.

— «Թե իմ զավակն ե, — ըսավ, իմ ճամբով կերթա, անունս գեանին չի զարնի...»

Ին՞չ երկնցնեմ. եզ իրիկուն թամամ ինձ աղցան երին: Վերջն ել մերս ու քուրս ախանջս մտան, — թե մի լավ աղջիկ կա, հարուստ, սիրուն, պիտի վոր անպատճառ ուղես...

Յես ել փախուկ մարդ, լավ խմած, քեֆի վրա, տարա բերի, խոսք թոցրի, թե համաձայն եմ: Ենպես վճուեցինք, վոր յերեք որից յետ երթանք նշան տալու:

Իրիկունը դարձա ուսու աղջկա քովը: Սիրտս ենպես կմղկտար, ասես կարմրած շամփուր կխրեյին...

— Մաչա, ըսի, կուզե՞ս, վոր յես կարգին մարդ եղնիմ:

— Կուզեմ, ըսավ:

— Ինձնից խոսք են առել... շուտով նշնելու յեն...

Մաչան լաց յեղավ:

— Հնպա գուն ինձ կխարեյի՞ր, կըսեր. գուն ինձի չեյի՞ր սիրեր...

Դուզն ըսած, սիրտս փափկեց, յես ել լաց յեղա: Յերբ սիրաներս հովացավ, խոսք տվի, վոր ելի իրարու հետ ապրենք ու յես չընչնվեմ:

Ելի սեր քաշեցինք, կապվեցանք իրարու հետ. համա ո՞ւր պիտի երթայի: Տեսնեմ, քանի որեն յեզ յեկան մերոնք ելի ծանր-ծանր խորհուրդ արին, ելի խոսք առան, թե նշնվելու յեմ...

Ե՛հ, ի՞նչ պիտի ենեյի... մեկ եւ իրիկունը թագա-  
շորերս հագա, վոր երթամ նշնվելու: Դուրս եյա, կայնե-  
ցի փողոցի մեջ տեղ ու Ֆիքր կենեյի:

— Ըշտը երթամ նշնվե՞մ... Մաշային ի՞նչ ըսեմ...  
չերթամ... հորս ու մորս ի՞նչ ջուղար տամ... Մաշա-  
յին թողնե՞մ... սիրտս կպած ե ենոր... Հապա հորս  
տո՞ւքը... կրնամ տկից դուրս ելնել...

Եսպես Ֆիքր կենեյի, մեկ եւ մտա գինետուն, մի լավ  
խմեցի ու ըսի:

— Ըշտը երթամ նշնվիմ...

Գնացի, քեռիներիս, յեղբայրներիս հետ նշանդրե-  
քի: Ծանոթացրին աղջկա հետ: Աղջիկը սատանա կեղնի,  
յերբ մնացինք մենակ, հարցրավ:

— Դուն սիրեկա՞ն կպահես...

— Ուրիշների ըսածին կհավատա՞ս, — ըսի, սուս  
կիտսին:

Եսպես՝ նշանդրեք արինք, որինավոր կարգով,  
տերտերով: Մի հաստ մատնիք եւ մտա դրին:

Յեկա առավոտը Մաշայի մոտ: Սիրտս կերթար-  
կուզար... Մաշան մեկ երեսիս աչեց, մեկ մատներիս:

— Դու նշնվել ե՞ս, ըսավ:

— Նշնվել եմ, ըսի մղկտալով:

Մաշայի յերեսի ռանգը թուավ: Ընկավ աթոռին,  
գլուխը բռնեց. հետո վեր կացավ թե՛ ես հրոպեյիս  
պտի երթամ:

Ուզեցի գործը փափկացնեմ, գրտեմ, տեսա վոր  
չեղավ:

Մի Եկատերինի հարյուրանոց գոտով ձեռքը գրի  
ու ճամբու դրի:

Ես աղջիկը գնաց: Իրեք որից հետե տեսնեմ՝ Փայ-  
տոնով յեկավ հյուրանոցիս առաջը կայնավ: Ենպես  
ուրախացա, ասես հոգիս յետ եկավ... Տարս վերե,  
նստեցինք, խոսեցինք:

— Մաշա, ըսի, եղ ի՞նչպես յեղավ, վոր յետ յեկար:

— Յես առանց քեզ, ըսավ, չեմ կրնա ապրի...

— Յես եւ առանց քեզ չեմ կրնա ապրի, ըսի: Խոսե-

ցանք, առաջվա պես սիրտ սրտի տվինք, ելի վճռեցի,  
թե չեմ նշնվի. մատնիքն եւ հանեցի, ջեքս դրի:

Առավոտ տեսնեմ—Մաշայի քե՞քը լավ չի: Աչքերիս  
աչեց, ըսավ:

— Դուն միտքդ ուրիշին ես տվել, դու նշնվելու  
յես... Յես վճռել եմ գնամ եստեղից...

— Ձե, Մաշա, մի գնա, ըսի, համա լիքը սրտով  
չըսի:

Մաշան հավաքեց իր շորեղենն ու պատրաստվեց  
ճամբու: Ելի մի հարյուրանոց դրի ձեռքն ու ճամբեցի  
Ռուսաստան:

Մաշան գնաց... Յես եւ հարսնիք երի, մեծ հրա-  
վերքով, պատվով. պսակվա վոնց վոր աղաթն եր,  
ամեն բան իր տեղը:

Անցավ մի տարի: Բարեկամս Ռուսաստան գնաց ու  
յետ յեկավ, խաբար բերավ, թե Մաշան, չե՞ս ըսե՛ մե-  
սել ե...

Իմացա խաբարը, Ե՛հ, վոնց վոր դյուլլեցին սիր-  
արս... թագուն շատ լաց եղա... Ֆիքր կենեյի, թե ըն-  
չի՞ ե՛սպես պատահեց...

Ունկնդիրները լուռ եյին. յերևում եր նրանք չեյին  
սպասում, թե վախճանն այդպես տխուր կլինի:

Ծերունին դանդաղ վերցրեց շիշը, վերջին բաժակն  
ածեց ու խմեց: Հետո նորից պապիրոս շինեց, խորը  
ներս քաչեց ծուխն ու մի ամբողջ ամպ դուրս թողեց:

— Ե՛հ, հիմիկվա ջահեղների խելքը մեզանից տվել  
ե, — ասաց նա — միամիտ ժամանակ կապրեյինք. հե՛չ բան  
եր. մեր գլխի խելքով չեյինք ապրեր...

Արդեն ուշ եր. բոլորը պառկեցին քնելու, իսկ ծե-  
րունին դեռ նստած ծխում եր խորասուզված իր հիշո-  
ղությունների մեջ...

1926 թ.



ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

62

1. Լուսնի շղերով	72
2. Սիրուչի պլանը	72
3. Նեղ փողոցի սիմֆոնյան	82
4. Մոլախոտը	93
5. Դափաղբությունը	105
6. Բարեղոնի աշտարակը	116
7. Հանդիպումը	128
8. Պատվավոր քաղաքացին	142

14

6 ✓ 14.14

ՀՀ Ազգային գրադարան



NL0320996

Գ Ի Ն՝ 12 Եգ. Դն.

|| 12 Ֆրանկ

|| 50 Սէնթ